

7249

8. Абсолютный
рhythemus
изменение

91(088)
4-50

2012

039. Հ. Սահմանական օջախ շօրագիր. 11 տօ.

Ա պ. դ. տաքի.

Հրատարակություն Կենսաբանության Գրախանությանցի

Է Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Թ Ա Ճ Խ Ա Բ Հ Ա Տ Ր Ա Ի Թ Ի Ւ

Գ Յ Ա Ս Գ Ի Ր Ք

ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱՄԻՐԵՑ ՆԵՐՍԵՍ ՍԻՄԵՈՆԵԱՆՑ


Թ Ի Ֆ Լ Ի Ս

Մովսես Արդանեակի

1886

91(075)

U-50



Arm
1039

Հրատարակութիւն Կենդրութական Գրավաճառանոցի

01(075)

U-50

-50 ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԱՃԽԵՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ Ա Ս Ա Գ Ի Բ Ք

ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԾԻ

ՄԱՍՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ

ԵՐԿՐՈՒ ՏՎԱԴՐՈՒԹԻՒՆ

Ածառաւարես Ներսէս Արմեոնիս

988-22822

Հայարան Մովսեսի Վարդանեան:

1885

ՀՅՈՒՅԹԱԿԱՆԻ ԽՈՎԱՐՔ ՅԱՅԻՆԸ ԱՊՐԵԼԻ ՄԱԳՆԱՉԻ ԴՐԱՄԱԿԱՆ

ପାଦମୁଖରେ ଶକ୍ତିବିନ୍ଦୁରୁଷିତି

ΑΓΑΦΑΝΙΟΣ

የኢትዮጵያ ከተማ

468246946

କରୁଥିଲେ ମହାତ୍ମା ପଦମନାବଙ୍କ ପଦମ

115366-62



56966-66

Лозв. Цензурою 23 Сентября 1885 г. г. Тифлисъ.

Типографія. М. Вартанянца. Тройц. п. д. № 11.

二
四
九

Աշխարհագրութեան սոյն դասագիրքը եր-
կրորդ անգամ հրատարակութեան տալով մենք
մասնաւոր փոփոխութեան ենթարկեցինք սրան։
Միևնոյն ժամանակ միքանի աւելորդ պատկեր-
ներ դուրս ձգելով՝ նոցա փոխարէն գրքի վեր-
ջում աւելացրինք երկու կիսագնդերի աշխար-
հացոյցը, որի օգնութեամբ աւելի յարմար է
աւանդել մանուկներին աշխարհագրական գի-
տելիքները, քան աննշան և անկատար պատ-
կերների միջնորդութեամբ։

Իսքն ըստ ինքեան հասկանալի է, որ սա
շարունակութիւն է մեր առաջին զբքի, որի
բովանդակութիւնն է հայրենագիտութիւնը, որ-
պէս նախերգանք աշխարհագրութեան:

U. S. U.

۲۰۰

շղմ զզդիքասար մըս մամնյոցքաշղտիչ Ա
գմմի Խոյտու մամնյոցքաղտուայշ Նաբու քղոյթ
մակո զմշցմիզանիմ մամնյոցտիտի պոտաման
շղմիսար քղոյթու ժանցցի խոմնեա միլումի Ա
շղմի զզդր մշղտավոխ արու Խոյմքն սղուր զմմ
շղայշա վզմիքրտուիլ ութիզ գմշղցայդա նրոջ
չ զանելոյ վյառու զետմնյումք վյու զզդրան
դիր մոյտայքքաշղտիչ միշմայտուն յիքնաւա
ռասր զատային և մայսնա մոց զզմնքիմու
զետմնյոցտի վզմիքմի
աս վյու չ վյանային մամցահ ուց մզմի
վյու զզդր մշղտու զմմ չ մայնյոցտաւոցաշ
շղու զմշոյնյոցքքամնիս չ մայնյոցտարտուիոց
մամնյոցքքաշղտիչ զմորդմայտ սժի

ՈՒՍՈՒՄԸԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՀՅ
ուժ, ժմջ դա յստ նայ այլուր ցրա ծառք դմ շիճ
դյօս նայ վայրած Տիեզեր եղանգ դմ նայ ցըրից
ա մարդու բացմի դիւն նայ դաշտ յում յու խոհանութեան երկու մասն է, որ տիեզերքի անսահման տա-
րածութեան մէջ պահպանում է իւր դիրքը, առանց յե-
նուելու մի որեցի նեցուկի ցըրութեան դո յէ զգով իւ-
նայցէք պարզ դիշերը մաքուր երկնակամարին. Ճեր
աչքին կերւին անթիւ լուսաւոր ու փալլուն կէտեր, որոնց
մենք առաջիւ ենք ասում: Բացի տեսանելի աստղերից՝ կան
և ուրիշները, որոնց մեր աչքերը ուժ չունին տեսնելու
առանց հեռադիտակի օգնութեան: Յրեգակը, լուսինը, աս-
տղերը, մեր երկրի պէս, տիեզերքի մասերն են:

Տիեզերքը ստեղծագործեալ մարմինների ամբողջութիւնն
է, որոնք զետեղուած են անսահման աշրածութեան մէջ: Ա
Ուր որ մենք լինինք, թէ ցամաքի և թէ ծովի վերայ,
մեր աչքին միենոյն տեսարանն է ներկայանում՝ երկնքը
կամարաձև, իսկ երկիրը բոլորակ, որի կենդրոնում մենք ենք
կանգնած լինում: Այն բոլորակ տարածութեան ծալերի
լերայ կարծես թէ կոթնած են երկնակամարի ծալըերը: Եր-
կնակամարը կոչվում է էրէնչ, երկրի՝ մեր աչքին երևեցող
առլորակաձև տարածութիւնը—հորիշոն, մեր կանգնած կէ-


տը՝ — Դ Ե Ր Շ, այն կէտը, որ ուզիղ մեր գլխի վրայ է նայում՝
— Ա Կ Ի Ֆ Ա, իսկ զէնիթի հակառակ՝ մեր ոտների տակի կէ-
տը՝ — Ա Ա Դ Ե Ր :

Եթէ մեր դիտած տեղը հովիտ կամ նեղ ձոր լինի, հո-
րիզոնը կամ մը աչքի պէսութէան ստմանը հովիտի կամ ձորի
ափերի ձևով կերևի: Դաշտի կամ ծովի վերայ հորիզոնն ա-
ւելի լայն և ընդարձակ է երևում, իսկ բարձր տեղից, ինչ-
պէս աշտարակի, զանդակատան, բլուրի և կամ սարի ծայ-
րեց հորիզոնը շատ ընդարձակ է երևում: Չորի կամ հովտի
մէջ գտնուած ժամանակ երբ դիտում ենք մեր շուրջը, հո-
րիզոնը մեզ մօտիկ է երևում և այնպէս ենք կարծում թէ՝
մի փոքր էլ որ առաջ գնանք իսկոյն կը հասնենք հորիզոնին
կամ երկնակամարի յենուած տեղին, բայց իսկապէս այդպէս
չէ լինում, այլ որչափ մենք առաջ ենք գնում, այնքան
հորիզոնի ահճմանագիծը հեռանում է մեզանից, որովհետեւ
երկնակամարն իսկապէս յենուած չէ հողի վերայ, այլ մեզ
այդպէս է թւում միայն. հետևապէս՝ հորիզոնը հաստատ չէ,
այլ դոդուհան է: մզմասն դզդբծու այս լցից ոյն զզմբ
Երբ արեք հորիզոնից բարձրանում է, մեզ լինում է
լոյս՝ յւրեւն, եսկ երբ նա հորիզոնից ցած է իջնում, մեզ
չէ երևում, լինում է մութ՝ գեշ շեր

Հորիզոնի այն կողմը, որտեղից ծագում է արևը, կոչվում է արևելք, — այն կողմը, ուր արևելք մտնում է — արևոտք, կէս օրին արևը հասնում է երկնակամարի ամենաբարձր կէտին, բայց ուղիղ մեր գլխի վերին կէտին — զէնիթին չէ հասնում, այլ մի փոքր թեքուած է լինում դէպի մի կողմ։ Այն կողմը՝ ուր արևը թեքվում է կէս օրին՝ կոչում ենք հարավ, իսկ հարաւի հակառակ կողմը, դէպի ուր որ կէս օրին տների, ծառերի կամ մարդկանց ամենակարճ ստուերներն են տարածվում, կոչում ենք հետեւ բացի այս չորս գլխաւոր կողմերից, չորս եւ իւրեւ է ա-

Ծովագնացները իւրեանց ուզած տեղը գնալու համար Հոբիզոնը 32 կողմերի են բաժանած։ Այս կողմերը գտնելու համար գործէ ածվում մի գործիք, որ կոչվում է՝ չոշացուցանակ։

(8) յաւ տալ կողմաց յցը և բացատրել թէ՛ նորա մասերը և
թէ՛ եւրոպական տառերի նշանակութիւնները, որոնք դրուած են
ինում կողմաց յցի յատակի թղթի վերայ).



թաստան մէջ հորիզոնին գլխաւոր և երկրորդաց
կան կողմերը։ Ասք այս աշխատավոր պատճեն պահպան պահպան կողմերը։ Ասել թէ քասատան իւրաքանչիւր պատը հորիզոնի մը կողմերը և ընկած և երկրորդականը ո՞ր։ Պառկացնել գրատախտակը կամ թէ մի քարետախտակ հորիզոնական ձևով գրել նորա վերայ դաստան պատերի և անկիւնների անունները՝ հորիզոնի կողմերի վերաբերութեամբ, գրատախտակի համապատասխան կողմերի վերայ, յեղած կանգնեցնել գրատախտակը իւր բնական դիրքով և այս օրինակով հանկացնել աշակերտաց, որ երկրիս մասների նկարների և գծագրութիւնների համար մարդիկ համաձայնուել են Հիւսիսը ընդունել գրատախտակի կամ թղթի բարձր կողմը, Հարաւը ցած, Արևելքը՝ աջ և Արևմուտը՝ ձախ կողմը։

(Երկրորդական կողմերն եւ գլխաւորների վերաբերութեամբ իրենց տեղերումն են ընդունուելու)

Ի՞նչ է տիեզերքը։

Ի՞նչ է հորիզոնը։

Հորիզոնը ե՞րբ է փոխվում։

Հորիզոնը ո՞րտեղից նեղ և ո՞րտեղից լայն կերեի։

Քանի՞ զլիսաւոր և քանի՞ երկրորդական կողմեր ունի հորիզոնը քարտիզի ո՞ր կողմն է Հիւսիս, Հարաւ, Արևելք և Արևմուտք Իսկ երկրորդականները ո՞ր կողմն են։

Եթէ բակումը մի փայտ տնկենք, կես օրին նորա ստուերը ո՞ր կողմը պիտի տարածուի։

Եթէ մենք գիտենք հորիզոնի մի կողմը, կարո՞ղ ենք արդեօք նորա միւս կողմերն եւ գտնել։

Հորիզոնի կողմերը գտնելու համարինչ դործիք և դործածվում

առ մանյուսա չել չե և պահապահին յամառնմաք ըցմայն Երկրի Զեկի։ մանյուսա

դաստան ժըմայն զարդար մինչեան յամառնմաք ըցմայն Մեր երկիրը թէւ մեզ երկում է ինչպէս մի բոլորակ հրապարակ կամ տափարակ դաշտ, բայց նա տափարակ չէն ալլ գնդաձև է։ Ուսումնականները նորա գնդաձևութիւնը հետազար փաստերով են հաստատել։

1. ԱՇԽԾԸՑԻՍ ԶՈՐՍ ԿՈՂՄԲ ՊՏԸՑԵԼՈՎ, Եթէ մէկը իւր բնակած տեղից դուրս գայ և ճանապարհորդէ ուղիղ դէպէ արևելք ու այս ուղղութեամբ առաջ գնայ, նա կը վերադառնայ իւր տեղը հորիզոնի հակառակ կողմից, այն է արևմուտքի կողմից։ Իսկ եթէ երկիրը տափարակ լինէր, մարդիկ անպատճառ կը հասնէին նորա եղերքին։

2. ԱՐԵԿԻ ԾԱՐԴՈՒՄՈՎ, Արևը ծագելիս առաջ սարերի գագաթներն են լուսաւորվում, յետոյ՝ նորա կողմերը, հետզհետէ բարձր շինութիւնների գլուխները և վերջապէս շինութիւնների ցածի մասերը և դաշտը, նոյնա երկութը կրկնվում է արևի մայր մտած ժամանակն էլ. Նախ զրկվում են նորա ճառագալիթներից շինութիւնների և սարերի ստորին մասերը, ապա՝ միջին և վերջապէս՝ գագաթները. մինչդեռ եթէ երկիրը տափարակ լինէր, նորա բոլոր մասերը միևնուն ժամանակ կը լուսաւորուէին։

3. Եթէ ծովեզերեալ քաղաքում լինինք ու գիտենք մի նաւի կամ շոգենաւի քաղաքին մօտենալը, առաջ կը տեսնենք նորա կալմերը և ծուխը, յետոյ՝ նորա միջին մասը և վերջապէս ամբողջ նաւը կրտեսնենք։ Իսկ ափից Հեռանալիս՝ առաջ նաւի ցածի մասը կը կորչի աչքներից՝ յետոք միջին և ի վերջոյ՝ ծուխն ու կալմերը կաներեւութանան տեսանելի հորիզոնի ետել։ Այս երկայնթը չէր նկատուիլ, եթէ երկիրը տափարակ լինէր, ընդհակառակն ալդ դէպքում նաւը, արդարեւ, քանի հեռանար, կը փոքրանար, բայց մեր տեսու-

թիւնից կանհետանար միանգամից, և ոչ թէ աստիճան առ
աստիճան:

4. Ամենայն խաւար մարմին երբ որևիցէ լուսաւոր
մարմնից լոյս է ստանում, մի երեսը նորանից լուսաւոր-
վում է, իսկ հակառակ կողմը իւր ձեռվ ստուեր է արձա-
կում: Զորօրինակ, գիրքը իւր ստուերն ունի, մարդը իւրը,
տունը իւրը և այլն: Երկիրս էլ, ինչպէս անլոյս մարմին,
լուսաւորվում է արևից և արձակում է ստուեր, այն ստուերը
մենք տեսնում ենք լուսնի վրայ, նորա իստարն ժամանակ,
որ միշտ բոլորակ է երեսը: Աւեմն երկիրս էլ գնդաձև է,
ապա թէ ոչ նորա ստուերը միշտ բոլորակաձև չէր երեալ
լուսնի վերայ:

Երկրիս երեսի անհարթութիւնները, այսինքն նորա բարձր
սարերը և խոր խոր ձորերը, նորա գնդաձևութիւնը չեն
փոխում: Ամենաբարձր սարերը և ամենախոր ձորերը, համե-
մատութեամբ երկրիս մեծութեանը, այնպէս են, ինչպէս
լիմոնի կամ նարինջի կեղեկի փոքրիկ փոսիկները՝ կամ թէ
ինչպէս աւազի մի հատիկը խաղաղնդի վերայ:

Սովորաբար երկիրս մեզ ինչպէս է երեւում:

Ո՞րն է նորա ձիշտ ձեւը:

Երկրիս գնդաձևութիւնը ի՞նչ փաստերով է հաստատվում:

Երկրիս երեսի վերայ գտնուած սարերը և ձորերը չեն արգե-
լում արդեօք նորա գնդաձևութիւնը:

Երկրածնին ՎերԱՅ ՄՏԱԻՈԾՍՊԼՍ ՔԱՇԱԿԱՄ ՇՐՋԱՆԱ-
ԳԾԵԲԸ: ԿԱՍՊԴՈՒՆԴԵԲ: ՀԱՄԱՏԱՐԱԾ ԱՇԽԱԾԱՑՈՅՅՅ, ՔԱՐ-

ՏԷԶ, ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԼԱՅՆՈՒԹԻՒՆ:

(Պանենալ սեղանի վրայ գլորուս ու գասիս մէջ ջիշուած մանրա-
մասնութիւնները ցոյց տալ նորա վերայ:)

Երկրագնդիս կենդրոնից մտաւորապէս քաշուած գիշը
կոչվում է տառապայ: Առանցքի երկու ծայրերը կոչվում են

բւեւ-ներ, նրանցից մէկը կոչվում է Հիւսիսային կամ Արջոյին
բևեռ, իսկ միւսը՝ Հարաւային կամ Հակոբյան բևեռ: Առաջի
երկու բևեռներից հաւասար հեռաւորութեամբ քաշուած
շըջագիծը կոչվում է Հասորայինծ, և որովհետեւ Հասարակածի
տակ ցերեկները և գիշերները միշտ հաւասար են լինում,
այդ պատճառով նա կոչվում է նոյնպէս, և Գիշ գիշերունց
առաջի:

Հասարակածով երկրագունդս բաժանվում է երկու հա-
ւասար կիսագունդերի՝ Հիւսիսային և Հարաւային: Ինչպէս ամե-
նայն շըջանակ, նոյնպէս և Հասարակածը բաժանվում է 360
հաւասար մասերի կամ աստիճանների: Հասարակածի իւրաքան-
չիւր աստիճանի երկայնութիւնը գրեթէ 105 վերստ, 15
մղոն, կամ $11\frac{1}{4}$, բիւրմեթը է: Իւրաքանչիւր աստիճանը բա-
ժանվում է 60 մասի և իւրաքանչիւր մասը՝ 60 մասնակի:
Աստիճանը նշանակում է փոքրիկ զրոյով (⁰), որը զըվում է
աստիճան ցոյց տուող թուանշանի գլխին, նորա աջ կողմը,
մասը՝ մի ստորով ([']) և մանրամասը՝ երկու ստորով (["]).
օրինակ: $27^{\circ} 54' 28''$:

$1^{\circ}=105$ վերստի, $1'=87\frac{1}{2}$ սաժէնի, իսկ $1''=14\frac{1}{4}$ սաժէնի:


Երկրագնդիս վերայ բացի Հասարակածից, մտաւորապէս
քաշում են նաև ուրիշ շըջագծեր: Նորանցից ոմանք կտրում
են Հասարակածը և անցնում են երկու բևեռներից, սոքա-
կոչվում են Միջըշահն շըջագծեր: Միջօրէականներն էլ բա-
ժանվում են 360 աստիճանների, սրանց աստիճանի երկայ-
նութիւնը հաւասար է Հասարակածի աստիճանի երկայնու-
թեանը: Միջօրէականներից մէկը կոչվում է Գլխաւոր: Մի-
ջօրէականով երկրագունդս բաժանվում է երկու հաւասար
կիսագնդերի՝ Արևելյան և Արևմտյան:

Երկրագնդի և քարտեզների վերայ գլխաւոր միջօրէա-
կանը ընդունած է քաշել Արքիակայի արևմտեան ափերի մօտ
գտնուած երկաթեալ (Փերըօ) կղզուց, որովհետեւ այս մի-

Չորեականը շատ յարմարութեամբ է բաժանում երկրիս մակերևոլթը, (ինչպէս յետոյ պիտի տեսնենք): Սովորութիւն է դառել՝ ամեն ազդ իւր լեզուով տպած քարտէզի վերայ քաշում է գլխաւոր միջօրէականը իւր հալրենեաց գլխաւոր քաղաքից կամ մի նշանաւոր կէտից. օրինակ, Անգղիացիք քաշում են Գրինիչի դիտարանից (Լոնդոնի մօտ), Գաղղիացիք՝ Փարիզից, Ռուսները՝ Պետերբուրգից, մենք Հայերս՝ Մասիս սարից և ալլն: Բայց ամենայարմարն է Ֆերրոյից քաշածը և նա ընդունուած է ամեն քարտէզների վերայ, իբրև Գլխաւոր կամ Հշտական միջօրէական, իսկ միւսները համարուած են Երկրաշխան միջօրէականներ: Երկրորդական միջօրէականներն օգնում են գլխաւոր միջօրէականից միութիցէ տեղի հեռաւորութիւնը որոշելու, կամ աշխարհագրական բառով՝ մի տեղի Երկայնաւոլիւնը գտնելու, որի պատճառով միջօրէականներին կարելի է անուանել նաև Երկայնաւոլիւնը: Երկայնութիւնը երկու տեսակ է հաշվում. Արևելքան Երկայնաւոլիւն և Արևմտիան Երկայնաւոլիւն, նայելով թէ մեր ուզած տեղը որ կիսագնդի մէջ է գտնվում. արևելեան, թէ արևմտեան: Իւրաքանչիւր երկայնութիւնը հաշվում է գլխաւոր միջօրէականից սկսեալ, որի վերալ դրուած է զրոյ (0) և Հասարակածի ուղղութեամբ գնում է մինչև 180° դէպի արևելք և նոյնքան էլ դէպի արևմուտք:

Հասարակածից հաւասար հեռաւորութեամբ դէպի հիւսիս և դէպի հարաւ մտաւորապէս շրջագծեր են քաշվում, գանաղան պայմանական հեռաւորութեամբ, որոնք կոչվում են պահանջանակն գծէր: Այդ գծերը որչափ հեռանան Հասարակածից, ալնքան նոցա շրջապատը կըփոքրանալ, ուրեմն և նոցա երկայնութիւնն էլ աշարբեր կըլինի իրարից, միայն երկու, զուգահեռականներ, Հասարակածի այս ու այն կողմը, հաւասար կըլինին իրար: Զուգահեռական գծերի իւրաքանչիւրն

էլ բաժանվում է 360 հաւասար աստիճանների, բայց սոցանից իւրաքանչիւրը 15 մզոնից պակաս է: Այդ զուգահեռականներն օգնում են միութիցէ տեղի հեռաւորութիւնը գտնելու Հասարակածից, որ աշխարհագրական բառով կոչվում է շրջանաւոլիւն հիւսիսային և հարաւային, ուստի այդ շրջագծերին կարելի է անուանել լոյսութեան արջանիւնը: Այդ ուշին հայրապետական այլի մասն ունի այս այլ անուանը՝ Աշխարհագիր:



Զուգահեռականներից զրայ կրում են և ուրիշ անուններուն որպես երկուսը՝ քաշվում են Հասարակածից $23\frac{1}{2}$, հեռաւորութամբ, սովորաբար կէտանիշ շրջանակներով, սոքակոչում են Արևադարձներ։ Արևադարձ Խեցգէպնի՝ Հիւսիսային կիսագնդում և Արևադարձ Խյժէղջը՝ Հարաւային կիսագընդում։ Միւս երկու, նոյնպէս կէտանիշ շրջանակներ, քաշվում են երկու բևեռներից՝ նոյնպէս $23\frac{1}{2}$, հեռաւորութեամբ, սրանք ել կոչվում են Բաէտային շրջաններ։

Ինչպէս ամեն գունդ, տղնպէս ել երկիրս, Հասարակածի տակ աւելի փքուած է և նորանից որքան հեռանալու լինինք դէպի հիւսիս կամ դէպի հարաւ, զուգահեռական, շրջանների աստիճանների մեծութիւնը՝ ալքան փոքրանալով և հետզհետէ նուազելով, բևեռների տակ մի կէտ են դառնում։

Որովհետև այս հանգամանքը մեծ նշանակութիւն ունի զանազան հաշիւների և մանաւանդ աշխարհագրական ցանցի գծելուն, այդ պատճառով օգտակար է և իմանալ զուգահեռականների նուազելու իսկական չափսը։ Հետեւեալ աղիւսակի մէջ հաշուած է նոցանուազումն՝ ամեն տաս տաս աստիճանների։ Առաջին բաժնումն հաշուած են երկայնութեան աստիճանների մեծութիւններն, մղոնի և վերսի վերածած իւրաքանչիւր զուգահեռականը։ Համեմատելով Հասարակածի կամ թէ Միջօրէականի հետ, որոյ մի աստիճանը ընդունուած է ուղիղ 15 մղոնի կամ 105 վերսի տեղ։ Երեսրտ բաժինը պարունակումէ իւր մէջ բոլոր զուգահեռականների մեծութիւններն՝ վերածած մղոնի և վերսի, իսկ Երեսրտ բաժնումն դրուած է ընդհանուր համեմատութիւն, այսինքն ցոյց է տուած մերձաւորապէս ինչպէս երկայնութեան աստիճանների, նոյնպէս և ամբողջ զուգահեռականների յարաբերութիւնները Հասարակածի և Միջօրէականի վերաբերութեամբ։

Զուգահեռականների և նոցա երկայնութեան աստիճանների ցուցակը, կամեմատելով Հասարակածի կամ Միջօրէականի՝ աստիճաններին։

1^o	Հասարակած կամ միջօրէական	= 15	մղոն = 105 վերսութիւն
1^o	տասներորդ զուգահեռականի	= $14\frac{1}{4}$	‘ = $103\frac{1}{4}$ վ
1^o	քսաներորդ	= 14	‘ = 98 վ
1^o	30-րդը	= 13	‘ = 91 վ
1^o	40-րդը	= $11\frac{1}{2}$	‘ = $80\frac{1}{2}$ վ
1^o	50-րդը	= $9\frac{3}{5}$	‘ = $67\frac{1}{2}$ վ
1^o	60-րդը	= $7\frac{1}{2}$	‘ = $52\frac{1}{2}$ վ
1^o	70-րդը	= 5	‘ = 35 վ
1^o	80-րդը	= $2\frac{3}{4}$	‘ = $18\frac{1}{4}$ վ
Հասարակ.	(Միջօրէական) = $15 \times 360^\circ = 5400$ մղոն = $37\cdot800$ վերսութիւն		
10-րդը	զուգահեռականը = $14\frac{1}{4} \times 360^\circ = 5310$	‘ = $37\cdot170$	
20-րդը	‘ = $14 \times 360^\circ = 5040$	‘ = $35\cdot280$	
30-րդը	‘ = $13 \times 360^\circ = 4640$	‘ = $32\cdot760$	
40-րդը	‘ = $11\frac{1}{2} \times 360^\circ = 4140$	‘ = $28\cdot980$	
50-րդը	‘ = $9\frac{3}{5} \times 360^\circ = 3456$	‘ = $24\cdot192$	
60-րդը	‘ = $7\frac{1}{2} \times 360^\circ = 2700$	‘ = $189\cdot00$	
70-րդը	‘ = $5 \times 360^\circ = 1800$	‘ = $12\cdot600$	
80-րդը	‘ = $2\frac{3}{4} \times 360^\circ = 936$	‘ = $6\cdot553$	
10-րդը	զուգահեռականը = $\frac{59}{60}$	Հասարակ. կամ միջօրէակ.	
20-րդը	‘ = $\frac{14}{15}$	‘ ‘ ‘ ‘	
30-րդը	‘ = $\frac{13}{15}$	‘ ‘ ‘ ‘	
40-րդը	‘ = $\frac{3}{4}$	‘ ‘ ‘ ‘	
50-րդը	‘ = $\frac{2}{3}$	‘ ‘ ‘ ‘	
60-րդը	‘ = $\frac{1}{2}$	‘ ‘ ‘ ‘	
70-րդը	‘ = $\frac{1}{3}$	‘ ‘ ‘ ‘	
80-րդը	‘ = $\frac{1}{6}$	‘ ‘ ‘ ‘	
Այս երեք ցուցակներից մեզ համար նշանաւոր են այն հաշիւները, որոնք վերաբերում են 40° , 50° , 60° , և 70° և գիւտապէս նոցայարաբերութիւնը Հասարակածի կամ միջօրէականի հետ, որոնց պէտք չէ մոռանալ, այն է. 40-րդը զուգահեռականը = $\frac{3}{4}$, Հասարակածին, 60-րդը = $\frac{1}{2}$, Հասարակածին, 50-րդը = $\frac{1}{3}$, Հասարակածին և 70-րդը = $\frac{1}{6}$, Հասարակածին։			

Արևադարձներով և բևեռալին շրջանակներով երկրիս մակերեսով օդի եղանակով մտաւորապէս բաժանվում է


Հինգ մասերի կամ օդալին գոտիների. երկու շուրջ, երկու բարձրաց
և մի պահ կամ այլուղի:

Ցուրտ կամ Սառարայեալ գոտիները գտնվում են բեռալին
շրջանակների մէջ. նրանք շրջապատում են բեռները բևե-
ռալին կէտից (90° -ից) մինչև $66^{\circ}/_{\circ}$ -ը: Այս գոտիներում ե-
ղանակը շատ ցուրտ է, մշտական ձեան սահմանը ծովի
մակերևոյթին հաւասար է, տարուայ մեծ մասը ձմեռ է լի-
նում; 2—3 ամիս փոքր ինչ երկրի երեսը տաքանում է:
Կենդանական և բուսական թագաւորութիւնը շատ աղքատ է:
Մարդկալին ցեղը զաճաճ և անմիտ է:

Բարձրացան գոտիները տարածվում են բեռալին շրջա-
գծերից մինչև արևադարձները, երկու կիսագնդերումն էլ հա-
ւասարապէս: Այս գոտու մէջ եղանակը մեղմ է. ոչ շատ
ցուրտ և ոչ շատ տաք (ընդհանրապէս): Տարուայ մէջ լի-
նում են չորս կանոնաւոր եղանակներ. Գորոն, ամառ աշուն և
չեռ: Մշտական ձեան սահմանը՝ սարերի դիրքերին և բնական
պատճառներին նայելով, ծովի մակերևոյթից $1/_{4}$ —4 վերստ է
բարձրանում: Կենդանիները և բոյսերն աւելի առատ և բազ-
մատեսակ են: Մարդկալին ցեղը միւս երկու գոտիների բնա-
կիչներից գերազանց և կատարեալ է՝ թէ մարմնի կազմու-
թեամբ և թէ մտաւոր զարգացմամբ:

Սարեցաւ կամ պահ գոտին տարածվում է երկու արևա-
դարձների մէջ: Այս գոտու ուղիղ մէջտեղովն է անցնում
Հասարակածը: Այս գոտուն կարելի է անուանել և լինաստուեր,
վասնզի արևը երբ Հասարակածից բարձրանում է դէպի Խեց-
գետնի արևադարձը, սորանից հարաւ գտնուած առարկաների
ստուերները կէս օրին տարածվում են դէպի հարաւ. իսկ
երբ արևը ետ է գառնում և հասնում է մինչև Այծեղեր
արևադարձը, նոյն առարկաների ստուերները կէս օրին տա-
րածվում են դէպի հիւսիս: Տաք գոտումը եղանակը շատ
տաք է՝ լինում: Արևի ճառագայթներն ալս գոտում ուղղա-

հայեաց են նայում: Այստեղ տարին երկու եղանակ է լի-
նում՝ առ և առ առաջին: Մշտական ձեան սահմանը 5 վերստ
բարձր է ծովի մակերևոյթից: Կենդանիները և բոյսերը շատ
զարգացած, փարթամ և բազմատեսակ են միւս գոտիների
մէջ եղածներից: Մարդկալին ցեղը մտքով թոյլ, բայց հսկայ
և վալրենաբարոյ է:



2որս գլխաւոր զուգաչեռականները.

56966-66

Երկրիս ձեւի վրայ ճիշտ գաղափար ունենալու համար
կարող է ծառայել երկրագործութեան (գլոբուս), որը շատ ուղիղ,
համեմատական հաշուով և վարպետութիւնով շինվում է
փայտից, թղթից և այլ լարմարաւոր նիւթերից, ի հարկէ
փոքրացրած ձեռք: Նորա վերայ Հասարակածի և Միջօրէա-
կանի շրջանակները հաստատուն են և շինվում են առհա-
սարակ մետաղից: Հասարակածը բաժանուած է լինում մի-
քանի մասերի, զանազան փոքրերի համար և նշանակուած
են լինում նորա վերայ երկախութեան աստիճանների թուա-
նշանները: Բուն գլոբուսի վերայ գծուած են լայնութեան և
երկախութեան շրջադերը կամ առաջնաների ցանցը, որը մենք
մտաւորապէս գծուած ենք երկրիս վերայ և որի օգնութեամբ



կարող ենք անսխալ (համեմատաբար) գծել ծովերը, գետերը և ցամաքները, նշանակել քաղաքների և այլ նշանաւոր առարկաների տեղերը: Կան գլոբուսներ, որոնց վերայ վերոլիշեալ բաները նկարուած են, ունին ժամական ցուցակ և կողմնացոլց, կան և այնպիսիները, որոնք միայն պարզ աստիճանների ցանցեր ունին:

Երկրագնդիս պատկերը գծագրվում է նաև մակարդակ թղթի վերայ, որեւից սպալմանական գծաչափով (մասշտաբով), երկու միմեանց կից կիսագնդերում, որոնց շրջանակը գլխաւոր Միջօրէականն է լինում: Այսպիսի պատկերը կոչվում է Համապարսծ աշխարհացոյց:

Իսկ եթէ երկրիս մի մասի պատկերը միայն գծուած լինի մակարդակ թղթի վերայ, մեծ կամ փոքր դիրքով,—կասուի Բարբէու կամ Աշխարհացոյց պատկեր:

Ցոյց տալ զանազան մեծութեամբ քարտէզներ և աթլաս:

Ցոյց տալ երկրագնդի (գլոբուսի) վերայ ըեւեռները, Հասարակածը՝ Միջօրէականները, արևելեան և արևեմտեան երկայնութեան աստիճանները, զուգահեռ ական շրջագծերը կամ լայնութեան աստիճանները, ըեւեռային շրջագծերը և արևեադաները և իւրաքանչիւր գոտու բունած տարածութիւնը:

Ցոյց տալ նշնը Համատարած աշխարհացոյցի և քարտէզի վերայ, Հասարակածի երկայնութիւնը քանի մղոն կամ վերստ է:

Հասարակածից որքան որ հեռանում ենք, զուգահեռ ական շրջագծերը ի՞նչ են լինում:

Իւրաքանչիւր գոտին քանի աստիճան կամ վերստ է տարածուած (լայնութեամբ):

Զուգահեռ ականներից երկուսը ինչո՞ւ են կոչվում արևեադաներ:

Տաք գոտին ինչո՞ւ է կոչվում կրկնաստուեր: Հասարակածից մի տեղի ունեցած հեռաւորութեան չափունքը է կոչվում լայնութիւն:

Քանի տեսակ է լինում լայնութիւնը և մինչև քանի աստիճան է Հաշվում: (90°):

Գլխաւոր Միջօրէականից մի տեղի ունեցած հեռաւորութիւնը ինչո՞ւ է կոչվում երկայնութիւն:

Քանի տեսակ է երկայնութիւնը և մինչև քանի աստիճան է Հաշվում (180°):

(Գծագրել տալ զանազան մեծութեամբ աստիճանների ցանց, կիսագնդեր և քարտէզներ, տալով աշակերտներին մի որոշեալ գծաչափ—մասշտաբ):

ԵՐԿՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ.

Դատ երկր ժամանակ մարդիկ կարծում էին, թէ երկիրս կանգնած է, իսկ արևը և բոլոր աստղերը պտըտում են որպ չը կամունքնէ: Այսպէս են համոզուած ալժմս և անուսները: Գիտնականները (ինչպէս Դալիլէլը և ուրիշները) այս երեսոյթը քննութեան ենթարկեցին և նոցանից մէկը, մի լեհացի քահանայ, Նիկողայոս Կոսերնիկոս անունով, 1543 թուին լայտնեց, որ արևը կանգնած է, երկիրս է պտըտուղը: Նորա այս մեծ գիւտը Հաստատեցին անհերքելի փաստերով շատ երևելի աստեղագէտներ:

Երկիրս երկու տեսակ է շարժվում: Քէզ՝ իւր առանցքի շուրջը և մեռ՝ արևի չորս կողմք:

Երկիրս իւր առանցքը շուրջը պտըտվում է զետեւմ: Նորա այս պտըտը կոչվում է օրուան լուծուն, իսկ արևի շուրջը թաւալում է գրեթէ 365 օրուայ (մի տարուայ) ընթացքում: Այս պտըտն էլ կոչվում է առէկուն լուծուն:


Երկիրս արևի շուրջը պտըտվում է 365 օրում և մօտ 6 ժամում (Ճիշտը 5 ժամ 48 րոպէ և 51 վայրկեան): Այսքան ժամանակին մենք ուրիշ ենք ասում: Բայց որովհետեւ մենք տարին հաշվում ենք 365 օր, ուրեմն ամեն տարի 5 ժամ, 48 րոպէ և 51 վայրկեան պակաս ենք հաշվում: Օրով և մեր ժամանակը կարող է շատ սխալ գուրս գալ: Մենք, այդ սխալից աղատուելու համար, այն աւելացած ժամերից չորս տարինը մի օր ենք կազմում ու չորրորդ տարին փոխանակ 365 օրի՝ 366 օր ենք հաշվում: Այսպիսի տարին կոչվում է նահանջ տարի: Աւելացած մի օրը Փետրուար ամսի վերայ է գրքուս ու սահանչ տարուաը ու ուսնսուա և զա օր ըստ հասա-

բակ տարումը՝ 28 օր։ Եթէ ուզենանք իմանալ թէ որևիցէ տարի նահանջ է թէ ոչ այն տարէթիւը պէտք է բաժանենք Կ ի վերայ, Եթէ առանց մնացորդի բաժանուեց, կընշանակէ որ այն տարին նահանջ է։

Երկրիս երկու տեսակ շարժուելուն շատ լաւ օրինակ կարող է լինել կառքի անիւր։ Կառքը գնացած ժամանակն անիւր՝ մէ՛ որ իւր առանցքի շուրջն է պտըտվում, մէ՛ էլ որ՝ առաջ է գնում։ Երևակայական այն շրջանակը կամ ճանապարհը, որի վրայով թաւալում է երկրիս արևի շուրջը պտըտուելիս, կոչվում է Ծիր խուարձան։

Երկրիս իւր առանցքի շուրջը պտըտուելով առաջացնում է օր և գիշեր։ Երկրիս իւր մը երեսը որ արևին է դարձնում, այն երեսին լինում է օր կամ յերեւ, իսկ հակառակ երեսին— յուն կամ գիշեր։

Երկրիս արևի չորս կողմը պտըտուելուց առաջանում են ցերեկների և գիշերների անհաւասարութիւնները և տարուայ չորս եղանակները, որովհետեւ երկրիս արևի չորս կողմը պտըտուելուց հետագայ դիրքն է ստանում։ Նախ՝ երկրիս առանցքը անփոփոխ Ծիր խաւարամանի լայնութեամբն է թեքուած լինում, և երկրորդ՝ նոյն ուղղութիւնն անփոփոխ միշտ դէպի միենոյն կողմն է պահպանում։ Երկրիս առանցքի միակերպ դիրքից այն է հետեւում, որ երկրագունդու երբեմն իւր հիւսիսային կողմն է առաւելապէս դարձնում արևին և երբեմն հարաւայինը։ Հետեւաբար՝ և երբեմն հիւսիսային կիսագունդն է արևից շատ լուսաւորվում և տաքանում, երբեմն էլ հարաւայինը։ (Եյս ամենը ցցց տալ տեղուրիում վերայ)։



Երկրագնդի ունեցած զանազան գիրքերը՝ արևի չորս կողմը պտըտելիս։

Երկրագնդի արևից անհաւասար լոյս ստանալուց առաջանում են օրերի և գիշերների անհաւասարութիւնները, այսինքն՝ օրերի կարճանալը և երկարիւր։ Իսկ երկրիս անհաւասար տաքանալուց առաջանում են տարուայ չորս եղանակների փոփոխութիւնները։ Երկրիս վերայ միայն Հասարակածի տակ գիշերներն ու ցերեկները գրեթէ հաւասար են միշտ միմեանց, իսկ Հասարակածից որքան դէպի հիւսիս կամ հարաւ հեռանանք, տարուայ օրերը և գիշերները (որոշեալ ամիսներում) աւելի երկար ու մեծ զանազանութիւններով են լինում։

Օրերի երկարութիւնը՝ գիտնականների հետազոտութեամբ և միշտ հաշիւներով այսպէս է լինում. Հասարակածից մինչև լայնութեան 8° դէպի հիւսիս կամ դէպի հարաւ, ամենից երկար օրը կէս ժամ աւելի է տեսում, քան թէ Հասարակածի տակ. 8° -ից մինչև 16° տակ ամենաեր-

կար օրը առաջինից դարձեալ կէս ժամով աւելի է առում, և այսպէս շարունակվում է:

Լայնութեան այն աստիճանները, որոնց տակ օրերը մի մի ժամով աւելի են, ճիշտ հաշուած է հետագակ աղիւսակում.

Լայնութիւն Հիւսիսային կամ Հարաւային.	Ամենաերկար օրը. (Յունիսի 10-ին հիւս. կի- սագնդում և Դեկտ. 9 ին հար. կիսագ.).	Լայնութիւն Հիւսիսային կամ Հարաւային.	Ամենաերկար օրը (Յունիսի 10-ին հիւս. կիսագնդում և Դեկտ. 9-ին հար. կիսագ.)
0° .. 0 հասար.	12 ժամ	65° .. 46'	22 ժամ
16° .. 43'	13 "	66° .. 20'	23 "
30° .. 46'	14 "	66° .. 32'	24 "
41° .. 21'	15 "	67° .. 23'	1 ամիս
48° .. 59'	16 "	69° .. 50'	2 ամիս
54° .. 28'	17 "	73° .. 39'	3 "
58° .. 25'	18 "	78° .. 31'	4 "
61° .. 16'	19 "	84° .. 5'	5 "
63° .. 20'	20 "	90° .. 0 բևեռ.	6 "
64° .. 48'	21 "		

Այս աղիւսակից պարզ երևում է, որ ՅՅ^{1/2}-ից, այն է՝ քենուային շրջաններից դուրս՝ դէպի բևեռները, ամենաերկար օրը 24 ժամից աւելի է տեսում: Ուրեմն՝ նոցա մի օրը կամ գիշերը (տարուայ մէջ մի անգամ) շաբաթներ և ամիսներ է տեսում: Իսկ բևեռների տակ վեց ամիս ցերեկ է և վեց ամիս գիշեր, որով տարուայ մէջ միայն մէ գիշեր և մէ ցերեկ է լինում:

Հին ժամանակները երկրիս շարժուելու մասին ի՞նչ կարծիք ունեին:

Ո՞վ հաստատեց, որ երկիրս է պտըտուողը՝ ինչուն այս երկիրը քանի տեսակ շարժումն ունի:

Նորա շարժումը ի՞նչ բանի նման է:

Ո՞րքան միջոցումն է պտըտումն ահ իւր առանցքի շուրջը:

Եյս պտոյտներից ինչե՞ր են առաջանում:

Տարին ե՞րբ է լինում նահանջ:

Ցերեկը և գիշերը ինչե՞ր են առաջանում:

Տարուայ եղանակների փոփոխութեան պատճառներն ի՞նչ են:

Ո՞ր շրջանն է կոչվում Ծիր խաւարման:

Երկրիս առանցքը Ծիր խաւարմանի վերաբերութեամբ ի՞նչ

դիրքով է գտնվում և նորա այդ դիրքից ի՞նչ է հետեւում:

Երկրագնդիս անհաւասար լուսաւորուելուց և տաքանալուց

ի՞նչեր են առաջանում:

Երկրիս ո՞ր շրջանի տակ գիշերները և ցերեկները գրեթէ հաւասար են միմեանց:

Եթէ Հասարակածից գնանք հիւսիս կամ հարաւ օրերը ի՞նչ հաշուով են փոփոխվում:

(Երտագրեցէք զբից քարէտախտակների վերայ այս մասին դրուած աստիճանների և ժամերի թուերը, և ցցց տուէք լայնութեան նշյն աստիճանները քարտէզի վերայ):

Արեւ եի Ա.Օ.Ց.Ղ.Ե.Բ.

Գիշեր ժամանակ, երբ երկինքը պարզ է լինում, մենք տեսնում ենք բազմաթիւ բոլորակ և փայլուն կէտեր՝ ասովչուն Աստղերը զանազան մեծութիւններով և պայծառ կամ աղօտ լոլսերով են լինում: Երկնքի վերալ տեսնում ենք նաև լուսնը, իսկ ցերեկը՝ հորիզոնից բարձրանում է արեւ, որ լուսաւորում ու տաքացնում է մեզ և մեր երկիրը:

Աստղերը, լուսինը և արեւը կոչվում են, մի խօսքով, երկնական մարմններ:

Երկնական մարմններից մեզ համար ամենանշանաւորը արեւն է, որովհետեւ նա է տաքացնում և լուսաւորում մեր երկիրը, կեանք ու զօրութիւնն է տալիս երկրիս, կենդանիներին և բոյսերին: Արեւ երկրիցս 1^{1/2}, միլիոն անգամ մեծ է:

Նորա մեծութիւնը՝ պարզելու համար այսպէս էլ կարելի է ասել. եթէ արևի Հասարակածի վերայ կարելի լինէր երկաժուղի շինել և նորանով անընդհատ ժամը 50 վերստ գնալ, 9 տարի հազիւ նորա շուրջը պիտի կարողանալինք պտըտել, մինչդեռ երկրիս Հասարակածի վերայ եթէ նորա արագութեամբ գնալու լինինք, կարող ենք մի ամսուալ մէջ նորա շուրջը պտըտել: (Հաշուել թէ քանի վերստ է արևի Հասարակածի երկայնութիւնը.)

Եթինափին շատ մարմիններից մեզ աւելի մօտ է արևը. սակայն՝ նորա և մեր երկրի մէջ եղած հեռաւորութիւնն էլ շատ մեծ է: Եթէ հնար լինէր երկրից գէտի արևել երկաժուղիով գնալ, ժամը 50 վերստ անցնելով, հազիւ թէ 360 տարուալ մէջ կարողանալինք նորան հասնել: (Հաշուել թէ քանի վերստ կանէ.)

Աստղերը պարզ երևում են մեզ գիշերը: Իսկ ցերեկը չեն երևում:

Երեք ճառագայթներն աւելի պայծառ են աստղերից, որոք և նորա անհետանում են, երբ արևը երևում է. բայց կան շատ մարդիկ՝ լաւ ու զօրաւոր աչքերով որոնք ցերեկն էլ կարողանում են տեսնել միքանի ամենապայծառ աստղեր. իսկ աստղաբաշխական դիտարաններում՝ դիտակներով, ցերեկը միշտ տեսնում և հետազոտում են աստղերը. Ցերեկը եթէ մտնենք մի խոր ջրհորի մէջ, այնտեղից մենք էլ կարող ենք տեսնել երկնքի վերայ շատ աստղեր:

Գիշերը, պարզ աչքով, 5000-ի չափ աստղեր են երևում, իսկ լաւ դիտակներով՝ դոքա անթիւ են և անհամար թէ առանձին-առանձին և թէ խմբերով: Երկնակամարի վերալ մենք տեսնում ենք նոյնպէս ամպանման, ազօտ լուսով, մի շերտ, որը կոչվում է Յարդգորի ճանապարհ կամ Շիր Հայեն: Այս շերտը յառաջացել է բիւրաւոր աստղերի կոլտերից, որոնց լոյսը միմեանց հետ խունուելով ալօտ ու ամպանման են երևում մեր աչքին: Աստղերն առհասարակ շատ մեծ են

Երկրիցս. կան աստղեր, որոնք արելից էլ շատ մեծ են, բայց՝ իրանց անհաշուելի հեռաւորութեան պատճառով հազիւ են երեսում մեզ՝ իբրև մի մի կէտեր: Ալնալիսի աստղեր էլ կան, որոնց լոյսը մեզ չի էլ համնում:

Աստղերը լինում են.

ա. Հասարակածի կամ անշարժ աստղեր, որոնք իրանց տեղը և գիրքը միշտ միևնունն են պահում: կամ չեն փոխում: Հաստատուն աստղերն ունին իրանց լոյսը և ջերմութիւնը:

Արեւ հաստատուն աստղերից մինն է: Բայց արելից՝ միւս հաստատուն աստղերը մեզանից շատ հեռու լինելու պատճառով՝ մենք չենք օգտվում նորանցից:

բ. Մարդուներ կամ շարժուած աստղեր, որոնք իրանց տեղը և գիրքը փոխում են՝ արևի շուրջը պտըտելու համար, կանոնաւոր կամ խոտոր ճանապարհներով: Սոքա խաւար են և պաղ, լոյս և ջերմութիւն ստանում են արելից: Մոլորակները գնդաձեւ են և կարծր: Նոքա բայց արևի շուրջը պտըտելուց՝ իրանց առանցքի շուրջն էլ են պտըտվում (ինչպէս մեր երկիրը): Կան մոլորակներ, որոնք երկրից շատ մեծ են և արևի շուրջը պտըտելու համար աւելի մեծ շրջան են առում: Բայց կան և մոլորակներ, որոնք երկրից փոքր են ու աւելի մօտ են արևին, ու իրանց արած շրջանն էլ նորա շուրջը համեմատաբար առաւել կարծ: է: Պարզ աչքով և կատարելագործուած դիտակներով մինչև ալժմս տեսնուած են 188 մեծ ու փոքր մոլորակներ: (Ցոյց տալ արեգակնային համադիրքը—պլանետարիումը):

գ. Գիտաւորներ: Այս աստղերը միշտ չեն երևում մեզ, այլ երեսմանապէս: Նոցա մարմինը կազմուած է երկու մասերից՝ գլխից և գէնից կամ պոչից, որը երբեմն կարճ և նեղ է լինում, երբեմն էլ երկար, լայն և տարածուած: Գիսաւորները նոյնպէս պտըտվում են արևի շուրջը, միալն նոցա

ճանապարհը շատ ու շատ երկար է։ Գիտնականները դեռևս գիտաւոր աստղերի մասին մի հաստատ եզրակացութեան չեն հասել։ Նոցանից ոմանք ասում են, որ գիտաւորների մարմինները թափանցիկ կամ գազային են, իբրթէ դեռևս անկատար մոլորակներ են, և թէ անորոշ ապագայում նոքադառնալու են կատարեալ մոլորակներ։

Դ. Ասուակնէր կամ չունիող աստղեր (աէրօլիտներ)։ Մոլորակների ճանապարհների մէջ թաւալում են զանազան ուղղութեամբ անթիւ փոքրիկ մոլորակներ, որոնք չեն երևում ոչ աչքով և ոչ դիտակով։ Նոքա բնականապէս, զանազան հանգամանքներից ստիպուած, մօտենում են երկրի մթնոլորտին, շփուած են նորա հետ ու շատ պայծառ լոյսի հետք են թողում։ Երբեմն էլ ուժգին շվիւելուց ձայն են հանում ու անհետանում։ Իսկ ոմանք այնքան են խրվում մեր մթնոլորտի մէջ, որ իրանց հաւասարակշռութիւնը կորցնելով, ընկնում են երկրիս վերայ (այս շատ սակաւ է պատահում)։ Նոքա շատ մեծ չեն։ Նորանց մարմինը կազմուած է զանազան քարային և հանքային կարծր նիւթերից։ Նոքա թէ են ցերեկն էլ են շփուած մեր օդին, բայց մենք չենք տեսնում, իսկ գիշերները, մանաւանդ աշնան եղանակում, շատ է պատահում ալդ երեսութք։ (Ճողովրդեան տգէտ դասը այլևայլ աւելորդապաշտական մեկնութիւններ է տալիս ընկնող աստղերի մասին։)

Երկնքի վերայ գիշերը ի՞նչ ենք տեսնում։ — Իսկ յե՞րեկը։

Նոքա ի՞նչ մարմիններ կարող են կոչուիլ։

Տերեկը ինչո՞ւ աստղեր չենք տեսնում։

Արևը ի՞նչ օգուտ է տալիս մեր երկրին։

Նա մեր երկրից մեծ է, և փոքր։

Ո՞րքան հեռու է նա մեղանից։

Պարզ գիշերները մեր հորիզոնի վերայ ո՞րքան աստղեր են երևում։

Երկնքի վերայ գիշերները երևացող ամպանման աղօտ լոյսերն ի՞նչ են։

Ո՞ր տեսակ աստղերն են կոչվում հաստատուն։

Մոլորակներն ի՞նչ յատկութիւններ ունին և մինչև այժմն քանի՞ հատ են յայտնուած։

Գիտաւորներն ի՞նչ բաներ են։

Գիտնականները նոցա մասին ի՞նչ կարծիք ունին։

Նոքա ինչո՞ւ են ուշ-ուշ երևում։

Ասուպներն ի՞նչ բաներ են։

Նոքա ո՞ր եղանակում շատ են երևում։

ԼՈՒՍԻՆ.

Երկնային մարմիններից մեր երկրին ամենամօտ մոլորակը համարվում է լուսինը։ Եթէ հնար լինի մեզ երկաթուղիով գնալ դէպի լուսինը ժամը 50 վերստ անցնելով, 9 ամսուայ մէջ նորան կըհասնենք։ Լուսինը երկրիցս 50 անգամ փոքր է։

Մոլորակները պտըտվում են արևի շուրջը. բայց կան և այնպիսի մոլորակներ, որոնց շուրջը պտըտում են ուրիշ երկրորդական մոլորակներ։ Արդպիսիները կոչվում են արբանակներ։ Լուսինը թաւալվում է մեր երկրի շուրջը, միւնուն ժամանակն էլ ուղղեկցում նորան արևի շուրջը թաւալելիս. ուրեմն նա երկրիս արբանակն է։ Այնպիսի մոլորակներ կան, որոնք ունին 2, 4, 6, 7 և մինչև 8 արբանեակներ։

Լուսինը երկրիս շուրջը պտըտում է ոչ այնպէս, ինչպէս որ մեզ է երևում, այսինքն՝ ոչ թէ արևելքից արևմուտք, այլ ընդհակառակն՝ արևեմուտքից արևելք, այն ուղղութեամբ, որ երկիրն է գլորվում իւր առանցքի շուրջը։

Լուսինը երկրիս շուրջը պտըտվում է զրեթէ 28 օրուայ մէջ, որի ժամանակ նա՝ արևի և երկրի վերաբերութեամբ գտնուած զանազան դիրքերով՝ միակերպ չէ երևում մեզ, այլ յաճախ իւր ձեւը և տեղը փոփոխում է և առաջացնում է

գանազան երևոյթներ, այն է՝ նրայի շուտնի և արևի ու լուսնի խուռականութը:

Լուսնի երևոյթների պատճառն այն է, որ նա՛ երկրիս շուրջը պտըտեղու ժամանակ, մեզ միշտ միւնոյն երեսն է ցոյց տալիս, իսկ 28 օրուայ մէջ արևին ցոյց է տալիս երբեմն մի և երբեմն միւս երեսը:


Ի՞նչպէս որ սենեակի մէջտեղը, սեղանի վերայ, գլոբուս դնենք և մենք սեղանի շուրջը պտըտուելով՝ մեր երեսը միշտ դըրուսին դարձնենք, իսկ սենեակի մի պատի վերայ արևի տեղը նշանենք, մենք գլոբուսի շուրջը պտըտեղով, միշտ նորան դարձրած կըլինինք մեր երեսը, իսկ մի պայոյտ անելով՝ երբեմն մեր գէմքը արևին դարձած կըլինինք և երբեմն մեր կռնակը:

Լուսնի երեսներ կոչվում են նորա մարմնի մեզ երևացող զանազան ձևերը, որոնք լինում են այսպէս. երբ լուսնի ամբողջ երեսը լուսաւորուած լինի, կոչում ենք լուսնի շուտնի, եթէ նորա սկաւառակի արևմտեան կէս մասը լուսաւորուած լինի, կոչում ենք տառաջին ժամորդ, եթէ արևելեան կէս մասը լուսաւորուած լինի՝ լուսնի ժամորդ և երբ նորա դէպի մեզ դարձրած երեսը ամենեին լուսաւորուած չէ լինում՝ ծնունդ շուտնի:

Ասացինք որ լուսինը երկրիս չորս կողմը թաւալելու ժամանակ առաջացնում է նորապէս և արևել ու լուսնի խառնութերը:

Երբ արևը, երկիրը և լուսինը լինին մի ուղիղ գծի վերայ, բայց այնպէս որ լուսինը գտնուի արևել և երկրի մէջտեղը, այնժամանակ կըպատահի արևել խուռականութ. որովհետեւ լուսինը կարգելէ երկրին տեսնել արևել: Արևի խաւարումն պատահում է միշտ լուսնի ծննդեան ժամանակը:

Իսկ երբ արևը, երկիրը և լուսինը լինին մի ուղիղ գծի վերայ, բայց այնպէս, որ երկիրը գտնուի արևել և լուսնի մէջտեղը, այնժամանակ կըպատահի լուսնի խաւարումն, որովհետեւ երկրիս ինստիւ ստուերը կընկնի լուսնի վերայ, և նա



մեզ խաւար կերեւի: Լուսնի խաւարումն պատահում է միշտ լուսնի լրման ժամանակը:

Թէ արևել և թէ լուսնի խաւարումները զանազանակերպ են լինում, այն է՝ նաև առ խուռական, երբ նոցա սկաւառակի մի մասն է միայն խաւարում, նաև է առ խուռական, երբ նոցա սկաւառակի մէջն է խաւարում, իսկ նորա չորս կողմը մանեկանման լոյս է մնում, և վերջապէս ամբողջական խուռական, երբ նոցա բոլոր սկաւառակն է խաւարում:

Ի՞նչպէս են կոչվում աստղերը, որոնք մոլորակների շուրջն են պատըտվում:

Լուսինը ո՞ր մոլորակի արբանեակն է:

Արբանեակ ունեցող ուրիշ մոլորակներ ել կա՞ն արդեօք:

Լուսինը երկրից մե՞ծ է թէ փոքր:

Ի՞նչ ուղղութեամբ եքանի՞օրուայ մէջ է պաըտում լուսինը երկրի շուրջը:

Լուսնի դիրքից ինչե՞ր են առաջանում:

Ի՞նչ օրինակով կարող ենք ցոյց տալ լուսնի պայոյաը:

Լուսնի երկայներն ի՞նչ անուներ են կրում:

Ի՞նչ պատճառներից են առաջանում արևել և լուսնի խաւարումները:

Հուսնի խաւարումով ի՞նչ է հաստատվում:

(Ցոյց տալ տեղը ըստիումի վերայ խաւարումները, լուսնի երկառ
աեսակ պտոյտները և նորա երկադիթները):

Աշխարհագրութեան այս մասը, որ ծանօթացնում է մեզ
երկրիս ձևի, սորա շարժումների և տիեզերքի ուրիշ մար-
մինների, սոյնպէս և նոցա միմեանց հետ ունեցած լարաբերու-
թիւնների հետ, կոչվում է ռուսահայութ կամ հայութիչական
աշխարհագրութիւն:

ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Երկրիս կեղևը և միջուկը

Երկերս կազմուած է երկու մասերից՝ արտաքին էջմիաց և ներքին միջակայից: Աւսումնականները հաստատում են, որ ինչպէս ամեն մալորակ, նոյնպէս և երկերս շատ առաջ մի հալուած՝ հրային զանգուած է եղել. լետոյ, զանազան բնական հանդամանքներից, փոքր առ փոքր երեսը սառել՝ կեղեւ է կադմել և ստացել է իւր ալժմեան ձեւը: Խսկ միջուկը, բնագէտների կարծիքով, դեռևս հալուած դրութեան մէջն է: Ենթադրում են, որ երկրիս կեղեւը Յօ վերստացափ հաստութիւն միայն ունի: Կեղեւի մակերեսութի փոս տեղերը, զանազան պատճառներով, հետըզհետէ լցուել են ջրերով ու կազմուել են ծռնելքը, իսկ ջրերից գուրս կամ բարձր՝ մնացել են կեղեւի ցանաք մասերը: Երկերս ամեն կողմից շրջապատուած է օդով կամ մնանական:

Երկրիս կեղեւը կազմուած է զանազան նիւթերի միմեանց վերալ դարսուած, հաստ կամ բարակ շերտերից, այն է՝ «եռալույ», ժարից, տառալից, իրավիճ բարագրութիւններից, իտպայ և այլն։ Այս շերտերը միմեանց վերայ ընկած են կամ հորիզոնական դիրքով, կամ լեւ, կամ ռազշահոյական և կամ, ինչպէս ալեկոծեալ ծռվի մակերեսովթը, աշխատանձն շերտերով։ Երկրիս դրսի կեղեւի վերայ ամլըսում են մարդիկ, զանազան կենդանիներ և թըռչուններ, իսկ ջրերում՝ ձկներ և այլ ջրային կենդանիներ։ Նորա վերայ աճում են ամեն տեսակ բոյսեր։ Կենդանիներից, թռչուններից, ձկներից և բոյսերից մարդիկ ստանում են իրանց սնունդը. բացի այս բարեկաներից, մարդիկ փորելով կեղեւը, ստանում են ամեն տեսակ թանկագին մետալներ և քարեր՝ ոսկի, պլատին, արծաթ, պղինձ, երկաթ, կապար, սընդիկ, ադամանդ, եաղութ, փիլորդայ և այլն։ Նիսութիւնները

Համար հանում են շատ տեսակ քարեր, կաւեր՝ ամանեղինների և ուրիշ պիտոյքների համար, նոյնպէս և տեսակ-տեսակ աղերև վառելանիւթեր, ինչպէս՝ հանքալին ածուխ, տարթ, նաւթ և այլն։ Երկրիս կեղեկի վերին շերտը ամենատարակարն է. նորա վերայ մարդս պարապում է երկրագործութիւնով և անասնապահութիւնով, — շինում է իւր բնակարանը և ալլն։ Այս շերտը հասարակօլէն կոչվում է հռշ կամ հանձնէ էրներ։ Սա միւս զերտերից պարարտ և բոյսերի աճելուն նպաստելու ամենալարմարն է, վասնզի սա արևել, անձընի և հողմերի ազդեցութիւնից փափկել է և գոյացած է ըստմեծիւմասին գործարանաւոր մարմինների՝ (կենդանիների և բոյսերի) փտած ու փոշիացած մասերից։

Քանի՞ մասերից է կաղմուած երկիրու։
Երկիրս շատ առաջ ի՞նչ էր։
Ի՞նչպէս յառաջացաւ երկրիս կեղեր։
Այժմս երկրիս միջուկն ի՞նչպէս է։
Որտեղ են ժողովուած ջրերը, ջրերից դուրս մացած մասը ի՞նչ է կոչվում։
Կեղեին ի՞նչ է շրջապատում։
Ի՞նչ բաներից է կաղմուած կեղեր։
Այդ շերտերը ի՞չպէս են ընկած։
Մարդիկ, կենդանիները, թռչունները և ձկները երկրիս կեղեց ի՞նչ օգուաներ են ստանում։
Կեղեր փորելով՝ մարդս ի՞նչեր է ստանում։
Կեղեի երեսի շերտը ի՞նչ է կոչվում։
Նա ի՞նչ մասերից է կաղմուած։

ԵՐԿՐԻ ԿԵՂԵԻԻ ՄԷՋ ԵՂԱԾ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Թէև երկրիս կեղեւը մեզ կարծը և հաստատուն է երեսում, բայց երբեմն՝ երկրիս միջուկի հեղուկ—հրային նիւթերի և գոլորշիների ազդեցութիւնից, թեթև կերպով շարժվում և մինչև անգամ պատառութիւն է, այնպէս որ ամբողջ գիւ-

ղեր և քաղաքներ են խորտակվում և անհետանում գետնի խորքերում։ Կեղեկի շարժուելը միշտ միակերպ չէ լինում։ Երբեմն դանդաղ է լինում և երբեմն էլ արագ։ Պատահում է, որ մի որոշեալ տարածութեան մի կողմը ցածանում է և միւսը՝ բարձրանում։ Երբեմն էլ երերումը յաճախ կըրկնվում և միմեանց յետևեց զարկեր և ցնցումներ է յառաջացնում։ Այսպիսի երեւոյթը երրաշրջ է կոչվում։ Երկրաշարժը երեք կերպ է լինում։

ա. Կռակոյն՝ այսինքն երկրիս կեղեկի մի մասը ծովի ալիքների նման ծածանվում՝ բարձրանում ու ցածրանում է, կամ թէ շարժվում և տատանվում է այնպէս, ինչպէս դաշտերի խոտն ու արտերի հասկերը՝ թեթև հողմի առաջ։

բ. Հարուածական՝ որ երկրիս կեղեկի մի որոշեալ կտորը ստորերկեալ գորութեան հարուածից այնպէս է ցնցվում, որ նորա վերայ գտնուած առարկաներն ու շինութիւնները օդի մէջ են շպրտվում։

և գ. Բացրայն՝ այսինքն այնպիսի շարժումն, որի գորութիւնից երկրիս կեղեկի մի կտորը պտըտվում է ինչպէս ծովի յորձանք, կամ երկու իրարու հանդիպած հողմերի (սատանի քամու) պտըտելու նման, ինչ առարկալ կամ շինութիւն որ լինի այն հողի վերայ, կըպտըտուի ու մէկը միւսի տեղը կըբռնի։ Պատահել է որ այսպիսի երկրաշարժից վերջը մի տանը ոլոր կարասիքը մի ուրիշ տան փլատակների մէջն են գտել։

Երկրաշարժից առաջ զգացվում է ծծմբային հոտ, լըսվում են ստորերկեալ շառաչիւններ, որպէս թէ բազմաթիւ կառքեր են անցնում մօտիկ փողոցի սալատակի վրայ և կամ երբթէ մօտիկ դրացու տանը լուսամուանների ապակիններն են կոտրատվում։ Երկրիս կեղեկի այն պատառութէքները և կամ այն անդունդները, որոնց միջով երկրիս միջուկից գուրս են ժայլթքում հրա-հեղուկ նիւթեր՝ առվում են հրաբուխ։ Հրաբը խից գուրս ժայթած հրային հեղուկնիւթը ասվում է լուսակամ

Հրաբխային պատառուածքների չորս կողմը հետրդ-
հետէ լաւայ և քարեր կիտուելով ու բարձրանալով՝ լեռներ
են կազմուել, որոնք ընդհանրապէս միակերպ կոնաձեն են լի-
նում, ինչպէս շաքարի գլուխ, միայն ծալրիցը մի փոքր
կտրուած:

Հրաբխային սարի գագաթի մէջ փոս կալ, որը ձագա-
ռաձեն համարեա մինչեւ երկրիս անդունդն է գնում: Այս փոսը
կոչվում է բերան: Հրաբուխները ժամանակ առ ժամանակ բոր-
գոքուելով՝ լաւայ են վիճում, իսկ մնացեալ ժամանակը միայն
միում են: Այսպիսի հրաբուխները կոչվում են գործոշ կամ
հաղորդուածքներ: Կան և այնպիսի հրաբուխներ, որոնք
մխալուցն էլ են դագարել, կընշանակէ որ հանգէլ են և նոցա-
քերանը լցուել է հողով կամ ջրով:

Երկրիս կեղեց միշտ հաստատուն է արդեօք: լուսադիմուա-
կոնչ աղդեցութիւնից է նա շարժվում: լուսադիմուակուա-
նը կրաշարժը քանի կերպ է լինում:

Երկրաշարժից առաջ ի՞նչ նշաններ են զգացվում:

Ի՞նչ է հրաբուխը:
Ի՞նչ են բերան և լաւայ:

Հրաբխային սարերն ի՞նչ ձեռվ են լինում:
Գործող և հանգած հրաբուխներն ի՞նչ են:

ՀՐԱԲԽԻ ԲՈՐՅՈՒԹՈՒՆԼՈՒ ՀԱՄԱՊՈՅՈՍ ԱԿԱՐԳՔՈՒԹԻՒՆԸ.

Հրաբխի բորբոքուելուց առաջ նոյն երկոյթներն են պատահում,
ինչ որ լինում են երկրաշարժի ժամանակը, այն է ստորերկրեայ ո-
րոտումներ: իբրթէ հեռու տեղերում ամպեր են գոռում: գղրդիւն-
ներ և շառաչեւններ, ապակու կոտրատուելու ձայններ և մթնոլորտի-
մէջ ծծմբային անախորժ հոտ է զգացվում: Սորանց հետևում է
երկրաշարժը և նորանից յետոյ սկսում է բորբոքումն ու լաւայի-
նիթումն: Աւժեղ ժայթմունքով լեռան բերանի կողքերից քարեր են
վիճում: Աւժեղ ժայթմունքով լեռան բերանի մասը կազմաթիւ գիւղեր և քա-
զաքներ, ինչպէս Պոմպէա, Հերքուլանա և Ստարիա, Իտալիայի մէջ,
Վեզուվի մօտ (75 թուին): Լեռան խողովակի մէջ կրակի ազդեցու-
թիւնից փոքր առ փոքր բարձրանում են հալուած նիւթեր և լցնում
են բերանը: Նթէ լեռը բարձր չէ, այն նիւթը (լաւան) գուրս է հո-
սում և սարի կողքերով ու փեշերով զաղելով զանազան ուղ-
ղութեամբ՝ նորա ստորոտն է ծածկում: իսկ եթէ իհոք շատ բարձր
է, այնժամանակ կամ սարի կողքը ձղելով այնտեղից է գուրս գա-
լիս, և կամ շատ ուժեղ չլինելով մնում է վհի մէջ ու եռում:
իսկ երեսը ծածկում է իրուրուէ:

Նօթի ոռումքի արագութեամբ, Քարերը գուրս թուչելուց յետոյ սարի
բերանից մոխրախառն գոլորշի է դուրս գալիս՝ թիսագոյն կամ բո-
լորովին մթնագոյն, և երկու վերստ բարձրութիւնով սիւնաձեւ կանգ-
նում է լեռան գագաթին: Այս սեան վերի մասը հետզհտէ լայնա-
նալով, տարածվում է մթնոլորտի մէջ և հողմի ուղղութեամբ
թեքվում է գէպի մի կողմը, իսկ սեան ցածի մասը՝ բերանի մօտ:
հրային է լինում: Դուրս ձգուած մոխրի քանակութիւնը և նորա՝
թեթեռութեան պատճառով հողմերից քշուած հեռաւորութիւնը
զարմանալի մեծ է: Պատահած է, որ քամին հրաբխային մոխրը
նորա բերանից քանի մի հարիւր վերստերով հեռու է քշել և այն-
քան իստ, որ ամենապարզ ցերեկը մթնագոյն գիշեր է գառել: այն
պէս որ երկու քայլաշափ հեռու՝ մարդը ծառից ջոկել հնար չէ եղել:
Պատահել է, որ մոխրի մանրագոյն մասնիկները երբեմն մինչեւ եր-
կու հազար վերստ հեռու են թռել: Այս ամենից յետոյ՝ սկսվում
են ամպերի որոտումներ, փայլատակումներ և յաճախակի կայծակի
շանթեր, որոնք այն հրային սիւնը միքանի մասերի են պատառում:
Հրաբխի ժայթքելու, որոտումների և շառաւչմունքի ձայները երբեմն
մինչեւ 1500 միլոս հեռու երկիրներ են հասնում: Այժմակների
հարուածներից յետոյ բերանից դիւրս եկած գոլորշները խտանում
են, և սկսում է առատ անձրւ: որը խառնուելով մոխրի և այլ մար-
մնների հետ՝ թափվում է լեռան կողքերի վերայ ու տղմային սար-
սափերի հեղեղներ է ձեւցնում: որոնք սաստիկ արագութիւնով գէպի
զառիփայր վաղելով՝ ծածկում են սարի շրջակալքը: Այսպիսի
հեղեղների շատ անգամ զոհ են եղել բազմաթիւ գիւղեր և քա-
զաքներ, ինչպէս Պոմպէա, Հերքուլանա և Ստարիա, Իտալիայի մէջ,
Վեզուվի մօտ (75 թուին): Լեռան խողովակի մէջ կրակի ազդեցու-
թիւնից փոքր առ փոքր բարձրանում են հալուած նիւթեր և լցնում
են բերանը: Նթէ լեռը բարձր չէ, այն նիւթը (լաւան) գուրս է հո-
սում և սարի կողքերով ու փեշերով զաղելով զանազան ուղ-
ղութեամբ՝ նորա ստորոտն է ծածկում: իսկ եթէ իհոք շատ բարձր
է, այնժամանակ կամ սարի կողքը ձղելով այնտեղից է գուրս գա-
լիս, և կամ շատ ուժեղ չլինելով մնում է վհի մէջ ու եռում:
իսկ երեսը ծածկում է իրուրուէ:

Լաւայի վիժելու ժամանակ նորա շըջակայքում խեղդող հոտ է զգացվում. Հրաբխային փրփռութ մոխրի հետ էլ է դուրս գալիս: Մի անգամ Աեղուվ հրաբխից այնքան շատ փրփռ դուրս եկաւ, որ ծածկեց սարի մերձակայ ծովի երեսը այնպիսի շերտով, որ նա և բը շատ մեծ դժուարութիւնով էին շարժվում: Աբած լաւայի քանակութիւնն էլ նոյնպէս շափազանց շատ է լինում: Լաւայի հուսանքներ են եղել, որ 80 վերստ երկարութիւնով՝ 30 վերստ լայնութիւնով և տասնաւոր սաժեն հաստութիւնով են հոսել: Խաւան միակերպ արագ չէ հոսում՝ երբեմն երկու րոպեում՝ $\frac{1}{4}$ վերստ է վաղում, որ մարդուս սովորական քայլուածքից աւելի արագ է, բայց նա ո՞րքան լեռան բերանից հեռանում է, նորա ընթացքը այնքան դանդաղում է, որովհետև լաւայի մակերեսոյթը սառելով՝ թանձրանում է ու երեսը կարծը կեղեւ է պատում: որի տակից այնուամնայիւնա իւր ընթացքը շարունակում է: Սորանով կեղեւ հետզհետէ թորշումում է և կոտրատվում: որի կոտրտանքը միմանց վերայ են ձգվում: Թէև լաւայի երեսը պաղելով, մասցինք՝ որ կեղեւ է կապվում: բայց ինքը լաւան շատ ուշ է սառում: պատահել է որ լաւայի վիժուելուց 11 ամիս վերջը նորա մեջ խրել են փայտ ու նա այրուել է: Երբեմն տասն տարիներ է քաշում: որ նա բոլորովին պաղի: Լաւայի ուշ սառելը ցոյց է տալիս: Թէ նա որ աստիճանի ջերմութիւն է ունեցել: Նորա մեջ հալվում են ամեն լետալներ: Լաւայի վիժելու տեսողութիւնը միտքերպ չէ: պատահում է որ նա տեսում է միքանի օր և մինչև անգամ միքանի ամիս:

ԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ:

Ա. Ցամաքների բաժանումը.

Երկրագնդի մակերեսոյթը կազմուած է ջրից և ցամաքից: Ցամաքը երեք անգամ քիչ է ջրից և կամ ցամաքը երկը մակերեսոյթի գրեթէ՝ $\frac{1}{4}$ մասն է, իսկ ջուրը՝ $\frac{3}{4}$:

Բոլոր ցամաքի մակերեւոյթի մարածութիւնը	Հոյոր ջրի մակերեւոյթի տարա- ամբողջ թուռվ է՝ 2, 453, 200 քառ. մլուն, ծութիւնն է՝ 6,799,000 ք. մ.
Ասիան կղզիներով՝ 824, 000	Մեծ ովկեան. 3,300,000 „
Ամերիկան	Ասլան-ովկ. 1,635, 000 „
Աֆրիկան	Հնդկաց ովկ. 1,313, 000 „
Եւրոպան	Հար. սառ. ովկ. 351,000 „
Աստրական	Հեռա. սառ. ովկ 200,000 „

Ցամաքը ջրերից բարձրացած է չորս մեծ և շատ մանր կտորներով: Մեծ կտորները կոչվում են Տայր-յանաչներ, փոքրերը՝ էշլիներ: Մալր-ցամաքների ամենամեծը կոչվում է արևելյան Տայր-յանաչ, որովհետև գտնվում է արևելեան կիսագլնդում (Ֆէրրօյի միջօրէականով) կամ Հին աշխարհ, որովհետև մարդկացին ցեղը շատ հին ժամանակներում այս մասի վերայ է ապրել և ապրում: Մեծութեան կողմից երկրորդ մալր-ցամաքն անուանվում է Արևմատան, որովհետև գտնվում է Արևմտեան կիսագնդի մէջ (Ֆէրրօյի միջօրէականով) կամ Հար աշխարհ, որովհետեւ շատ ժամանակ չէ (1492 թուին) որ լայտնուածէ: Երրորդ մալր-ցամաքը կոչվում է Հարա-ային, որովհետև գտնվում է Հարաւային կտորներումն է, իսկ չորրորդը՝ Հարա-ային բեշուային Տայր-յանաչ: Այս վերջինը նոր է գտնուած, սաստիկ ցըրտերը և սառուցներն արգելում են սորա ափերը պարզապէս որոշել և գծագրել, գորա համար էլ նորա վերայ ոչինչ նշանաւոր և հետաքրքիր բան չկայ սովորելու:

Թէ մալր-ցամաքները և թէ կղզիները բաժանվում են հինգ մասերի, որոնք ասվում են աշխարհի համեր: Աշխարհի հինգ մասերը սոքա են՝ Եւրոպա, Ասիա, Աֆրիկա (որ երկու կտորից է կազմուած՝ մէկը կոչվում է Հիւսիսային և միւսը՝ Հարա-ային Ամերիկա) և Աւստրալիա կամ Ովկիանիա: Հինգ աշխարհները մեծութեան կարգով այսպէս են. ամենամեծը՝ Ասիան, որ երկին բոլոր ցամաքի՝ $\frac{1}{3}$ մասն է ըրանում. երկրորդը՝ Ամերիկան, որ Ասիայից սակաւ ինչ փոքր է.

երլորդը — Աֆրիկա. չորրորդը — Եւրոպա, որ բոլոր ցամաքի 1/1, մասն է բռնում (սա 5 անգամ փոքր է Ասիայից, 4 անգամ — Ամերիկայից, 3 անգամ — Աֆրիկայից և սակաւ ինչ մեծ է Աւստրալիայից), և հինգերորդը՝ Աւստրալիա, որ ամենափոքրն է:

Երկրիս երեսի փոքրիկ ցամաքները, որոնք շրջապատուած են ջրով, կոչվում են կղզիներ: Կղզիների կազմուելու գլխաւոր պատճառներն են՝ ջրը, չորսը և հետոնները:

Ջրի ազդեցութիւնով առաջացած կղզիները ցամաքի համար են, և նույնական է որ ջրի ալիքները շարունակաբար խփելով ցամաքի ափերի ներ մասերին, բաժանել են այն կտորները ցամաքից և դարձրել են կղզիներ. այդպիսիները կոչվում են նաև յաճախաճն կղզիներ: Սրանց թէ մակերեսով թի և թէ ներքին կազմութիւնը, թէ կենդանիները և թէ քուսականութիւնը նման է իրանց մօտ եղած մայր-ցամաքներին: Նորա բարեբեր են և յարմար են բնակութեան: Ալսպիսի մի-քանի կղզիների վերայ կան մինչեւ անգամ մեծ տէրութիւններ (Մեծ-Բրիտանիա, ծափոնիա, Անգլիեան, Սումատրա կղզիները և այլն): Ալսպիսի կղզիները կոչվում են Նեպատունական (Յունաց ջրի աստուած Նէպտունի անունով):

Ցամաքը Երկրիս կեղևի փոքր մասն է բռնում, իսկ ջուրը՝ մեծ մասը: Ինչպէս որ ցամաքի վերայ պատահում են Երկրաշարժներ և կան հանգած ու գործող հրաբուխներ, նոյնպէս էլ ծովի մէջ եղած են և լինում են Երկրաշարժներ, կան գործող և հանգած հրաբուխներ ու Երբեմն Երբեմն էլ պատահում են նոր սկսուող հրաբուխներ: Ծովի յատակում պատահած թէ Երկրաշարժներից և թէ հրաբուխներից գոյացել են և գոյանում են կղզիները: Պատահում է, որ ծովի յատակի մի մասում են կղզիներ: Պատահում է, որ ծովի յատակի մի մասում Երկրաշարժ հրային գորութիւնից բարձրանում է ջրի մակերեսով թից ու գառնում է կղզի, կամ թէ Երբեմն էլ մի հարթակալին բերան է բացվում, որտեղից գուրս են ձգվում

լաւայ, քար և այլն, որոնք միմեանց վերայ դիզուելով, ծովի մակերեսով թից բարձրանում են և գոյացնում են կղզիները Այսպիսի կղզիները կոչվում են փուլկանական (Յունաց կրակի աստուած Վուլկանի անունով):

Ծովերի մէջ ապրում են պուլու կոչված փոքրիկ փամփշտանման կենդանիներ (Գնդասեղի գլխի մեծութիւնով). Նորա կերակրում են իրանցից առաւել փոքր արարածներով. Նոցա կազմուածքը կրային է, ապրում են մեծ քանակութիւմը և իրար կպած. Երբ սատակում են, նորանցից նորերն են գուրս ընկնում և այսպէս շարունակաբար, շատ կարճ միջոցում, միմեանց վերալ դարասւելով հասնում են ծովի մակերեսով թին ու դառնում են կրային կարծր կղզիներ, որոնք կոչվում են հօրաշական կղզիները շրջապատում են հրաբխային ժայռերին և կամ թէ առանձնապէս կղզիներ են կազմում, ջրից դուրս, բոլորածն մասեակով, որոնք կոչվում են ապաւ: Նատ անգամ էլ ծովի մակերեսով թի տակ ժայռեր են կազմում, որոնք կը բեմն նաւագնացութեան շատ արգելք են լինում:

Ամերիկայի Արկտիսեան ափերի մօտ ծովային մի տեսակ թրուուններ կան, աղաւնուց սակաւ ինչ փոքր, որոնք անթիւ և անհամար երամով անցնելով Երբեմն հիսկից հարաւ կամ հարաւից հիւսիս, թափում են անցած Երկրների վերայ առատ աղբ, հարաւային-Ամերիկայի արկտիսեան կողմը կան այս թռչունների աղբից գոյացած շատ կղզիներ: Նորանցից ամենամեծն է 2½ կղզին, որ 1½ վերստ Երկարութիւն և ¾ վերստ լայնութիւն ունի: Զինգայի վերայ աղբի հաստութիւնը 30 սահենաչափ է: Այս աղբը կոչվում է Հունա: (Փերուացոց հասո բառից առնելով): Որ թռչունի աղբ ասել է: Հունանօն հաղարաւոր մարդկանց հաց է տալիս. նորա փորում և վաճառում են այն աղբը Ամերիկայի և Եւրոպայի կայուածատէրերին, որոնք նորանով պարարտացնում են իրանց հողերը: Միայն Եւրոպա տարվում է տարեւը 80 միլիոն ոռութու Հունա:

Այսպիսի կղզիներ էլ կան, որոնց գետերն են կազմում ապրերից ու դաշտերից հեղեղների բերած առարկաներից: Ինչպէս

են. քար, փայտ, սատակած կենդանիներ և այլն։ Այդ տեսակ կղղիները կոչվում են հեղութան։ Նոքա միշտ փոփոխվում են, այսինքն, երբեմն մեծանում են և երբեմն փոքրանում։ Սոքա գտնվում են գետերի, լճերի և կամ ձահիճների մեջ։

Կան մի տեսակ շարժուն կղղիները էլ, որ ծառերի և ծահճալին խոտերի արմատներից են գոյանում (տարթի ըսկղընական գոյացութիւնը). Նոքա փոքր կտորներով Հիւսիսալին Գերմանիայի և Հոլանդիայի ծահճների և գետերի մէջ են գտնվում։ Հեղեղներին չեն դիմանում, պոկվում են գետի ափերից կամ լատակից, գնում են ջրի հոսանքով, երբեմն տանելով իրանց վերակ ապրող սակաւաթիւ բնակիչները։

Կղղիները ծովերում կամ առանձին են լինում կամ մի քանիոը միասին խռով են կազմում, կամ շատ խմբեր միմեանց մօտ եկած արշակուլուկ են կազմում։ Լինում են և կղղիներ, որոնք շարքով են ընկած՝ մի քանի հարիւր և աւելի վերստ երկայնութիւնով։ Այս տեսակներն էլ կոչվում են պար կամ շարու կղղիների (ինչպէս Ալէութեան, Քուրիլեան և այլն)։ Բնագէտները կարծում են, որ սորանք ժամանակով լեռնագօտի պիտի եղած լինէին և թէ երկրիս բնական փոփոխութիւնների շնորհիւ ջւրը նոցա ստորոտը և կողքերը ծածկել է և միայն գագաթներն են ջրից դուրս մնացել ու կազմել են այնպիսի շղթալաձև կղղիներ։

Ի՞նչ մասերից է կազմուած երկրիս մակերեսը։ Սորա ո՞ր մասն է շատ։

Ցամաքը քանի կտոր է։

Մայր ցամաքներն ի՞նչ անուններ ունին։

Քանի աշխարհի են բաժանվում։

Մեծութեան կարգով աշխարհներն ի՞նչպէս են հաշվում։

Ի՞նչ բաներից են գոյացել կղղիները։

Ի՞նչպէս են կազմուել ցամաքային կղղիները։

Նոցա ձեւը և դիրքն ի՞նչպէս է։

Հրաբխային կղղիներն ի՞նչպէս են գոյացել։ Ո՞ր կենդանիները կղղիներ են կազմում և ի՞նչպէս Այն կղղիներն ի՞նչու են կոչվում կօրալական։ Համեմատեցէք երեք գոյացութեամբ կղղիները։ Ի՞նչ բան է հուանո։ Ի՞նչ օգուտ է տալիս նա մարդուս։ Հեղեղային կղղիներն ի՞նչպէս են գոյանում։ Հիւսիսային Գերմանիայի գետերում ի՞նչ տեսակ կղղիներ են պատշում։

Ի՞նչ գերբերով են լինում կղղիները ծովերում։ Կղղիների շղթաների վերայ ի՞նչ կարծիք ունին բնագէտները։

ՀԻՆԴ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ ՆՇԱՆԱՒԻՈՐ ԿՂԶԻՆԵՐԸ.

ա. Եւրոպալին պատկանող կղղիների մեծ մասը ջուրն է առաջացրել, ուրեմն և յահանային են, իսկ փոքր մասը միայն Հրաբխային էն։ Նշանաւորներն են Խոլանդիա, Շպիցբերգէն, Քալգուև, Վայգաչ, Լաֆողէն, Ֆէրբեօրեան, Օրքալեան, Շէֆլանդեան, Հերբիտեան, Մեծ-Բրիտանիա, Խոլանդիա, Զէլանդիա, Ֆիոնիա, Նորմանդեան խումբ, Բալեարեան, Կորսիկա Սարդինիա, Սիցիլիա, Մալթա, Յօնիական, Արշապելագի խումբ և Կրէտէ կամ Կանդիա։

բ. Ասիալին պատկանող կղղիները յահանային էն և Հրաբխային։ Նոցանից գլխաւորներն են՝ Կիպրոս, Սէլլօն, Զօնդգեան խումբ, որոնց մէջ ամենամեծերն են՝ Սումատրա, Ճաւա, Բունէօ (վերջինս մեծութեամբ աշխարհիս երկրորդ կղղին է, ունի 13,600 քառ. մղոն տարածութիւն) և Սէլէբէս, Փիլիպպեան խումբեր, Ֆիորմօգա, Հայնան, Ճավանեան խումբ, Թարաքա կամ Սախալին, Քուրիլեան և Նոր-Սիբիր։

գ. Աֆրիկալին վերաբերող կղղիների մեծ մասը Հրաբխալին են։ Նշանաւոր կղղիներն են՝ Կանարեան խումբ, որի մէջ է երկաթի կղղին (Ֆէրրօ), որի վերայով քաշում են ընդհա-

Նրապէս գլխաւոր միջօրէականը, — Ազօրեան, Մաղէլրա, Դալարի գլխի արշակութելագ, Համբարձման, սուրբ Հեղինէի, Մագագասքար, Մասքարեան, Ամիրանթեան, Սէլշելեան, Սօքօթօրա և Փէրիմ:

դ. Ամերիկայի հիւսիսալին կողմի կղզիները յահացային են, իսկ մնացեալների մեծ մասը հրաբիտային (Հարաւային Ամերիկայի հարաւարեմտեան կողմը հոււանօ): կղզիներից գլխաւորներն են՝ Բաֆֆինի երկիր, Գրէօնլանդիա (Կանաչ կղզի, աշխարհիս ամենամեծ կղզին է, ունի 14,700 քառ. մղոն տարածութիւն), Նիւֆառունդլընդ (նոր երկիր), Մեծ և փոքր Անթիլեաններ, որոնցից նշանաւոր են՝ Կուբա, Եամալիկա, Հայիթի, Պօրթօ-Ռիկօ, Մարթինիկա և Տրինիդատ (Երբորդութիւն), Երկիր-Հրոյ, Ֆալքլանդ, Չիլօէ, Սիթիսա և Ալբութեան շարք:

ե. Աւստրալիային կամ Ովկիանիալին պատկանող կղզիների մեծ մասը հրաբիտային են և հօրաշեան ժայռերով շրջապատուած կամ թէ միայն կօրալական են՝ թէ ծովի մակերեսովթից սակաւ ինչ ցած և թէ բարձր, ու ձեւացնում են հանկառը կղզիներ (ատոլներ): Երբեմն այդպիսի ատոլների մէջ անուշ ջրով լճակներ էլ են գտնվում: Կղզիներից նշանաւորներն են՝ Վանդիմէնի երկիր կամ Թասմանիա, Նոր-Զէլանդիա, Նոր-Գուինէտ կամ Պապուա,, Սանդուիչեան, Մարիանեան կամ Աւազակաց, Կարօլինեան, Նոր-Կալիդօնիա, Թօնգա կամ Բարեկամութեան, Կուկի, Թայթի կամ Ընկերութեան և Մարքիզեան արշակութելագները:

Զգեցէք ընդհանուր հայեացը հինգ աշխարհների կղզիների դիրքի և յատկութեան վերայ, որքա մայր-ցամաքների վերաբերութեամբ ի՞նչպէս են ընկած:

Ո՞ր աշխարհի կղզիները ըստ մեծի մասին ցամաքային են:
Ո՞ր աշխարհինը հրարիսյին,
Ո՞ր աշխարհինը կօրալական:

Կղզիներն ի՞նչ բնական յարմարութիւններ ունին բնակութեան, երկրագործութեան, ձկնորսութեան և վաճառականութեան համար:

Համեմատեցէք իւրաքանչիւր աշխարհի կղզիներն ընդհանրապէս և նորանցից ամենագլխաւորները միմանց հետ՝ մասնաւորապէս:

ՑԱՄԱՔԻ Ա.ՓԵՐԻ ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

Այն գիծը՝ որով ջուրը ցամաքի հետ կպչում է, կոչվում է առ կամ էլլը:

Թէ մայր-ցամաքների և թէ կղզիների ափերը միաձև և ուղիղ չեն, այլ շատ ծուռ և կարելի է ասել թէ կումայիւններ, Այսպիսի ծոնութեան պատճառը թէ ափերի լատկութիւններն են և թէ ծովի ալիքները: Ափերի ծոնութիւննից առաջանում են:

ա. Թէրակուն՝ ցամաքի այն մասը, որ շատ մանելով ծովի մէջ, երեք կողմից շրջապատվում է ջրով, իսկ մի կողմից միայն կպած է լինում մեծ ցամաքին:

բ. Պարանոյ՝ ցամաքի այն նեղ շերտը, որով թերակղզին միանում է մեծ ցամաքի հետ: Պարանոյով երկու ծովերը բաժանվում են, իսկ երկու ցամաք՝ միանում են:

գ. Հրանտուան կամ Գլուխ՝ լեռնալին ափի տին մասը, որ շատ մանելով ջրի մէջ, իբրև լեռնագօտու շարունակութիւն սուր ու բարձր ծայրով է վերջանում:

և դ. Լէպուտ՝ որ նոյնն է՝ ինչ որ հրուանդանը, բայց ալն զանազանութիւնով, որ լեզուակը աւելի երկար է տարածվում, լինում է նեղ և հարթ մակերեսով (ինչպէս Արբաթը՝ Ազով ծովի և Սիվաշ ծահճի մէջ):

Ի՞նչ է ափը, Ի՞նչ ձեռվ են լինում ափերը, Ափերի ծոնութեան պատճառն ի՞նչէ, Ափերի ծոնութիւնից ի՞նչեր են կազմվում:

Ի՞նչ է թերակղղին, պարանոցը, հրուանդանը և լեզուակը,
Ցյոյց տուէքք քարտէղների վերայ մի քանի թերակղղիներ,
պարանոցներ, հրուանդաններ և լեզուակներ:

Հինգ ԱՇԽԱՐՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՐ ԹԵՐԱԿՂԶԻՆԵՐԸ
ԵՒ ՊԱՐԱՆՈՑՆԵՐԸ.

ա. Եւրոպայի թերակղղիներից նշանաւորներն են՝ Սքանդինավիա, Իւթլանդիա, Պիրինեան, Ապենինեան, Բալքանեան, որի հարաւային մասը կոչվում է Մօռա, և Տաւրիկեան կամ Դըմ:

բ. Ասիայի մէջ՝ Փոքր-Ասիա, կամ Անատոլիա, Արարիա, Արևելեան-Հնդկաստան, Հնդկաչին, որի հարաւային կողմում տարածվում է նեղ ու երկար Մալաքա թերակղղին, Կօրէա և Կամչատկա:

գ. Աֆրիկայի ափերում բացի Բարքա թերակղղուց՝ ուրիշ թերակղղիներ չեն ձեւանում:

դ. Ամերիկայի նշանաւոր թերակղղիներն են՝ Ալեասքա, Կալիֆորնիա, Իւթաթան, Ֆլորիդա և Լաբրադօր:

ե. Աւստրալիայի հիւսիս-արևելեան ափում ձեւացած է Եօրք թերակղղին:

Պարանոցներից նշանաւորներն են. Սուէզինը՝ որով Աֆրիկան միանում է Ասիայի հետ: Պերէքոպի պարանոցը՝ որով Ղրիմը միանում է Եւրոպայի ցամաքի հետ և Կորնթոսի պարանոցը՝ որով Մօռան միանում է Բալքանեան թերակղղուն: Պանամայի պարանոց՝ որով Երկու Ամերիկաները միանում են: Այժմս այդ պարանոցը աշխատում են Կտրել և մի արհեստական ջրանցքով միացնել Երկու ովկիանոսները և բաժանել Երկու ցամաքները:

Հինգ ԱՇԽԱՐՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՐ ՀՐՈՒԱԿՂԶԻՆԵՐԸ.

ա. Եւրոպայում՝ Նորդքին (Եւրոպայի ամենահիւսիսային ծայրը), Ֆինիսթէրըէ, Լառօկա՝ (ամենաարևեմտեան ծայրը), Թարիֆա՝ (ամենահարաւային ծայրը) և Մաթապան: բ. Ասիայում՝ Բաբա (Ասիայի ամենաարևեմտեան ծայրը), Կօմօրին, Բուրօ՝ (—ամենահարաւային ծայրը), Ռօմանիա, Արևելեան՝ (ամենաարևելեան ծայրը,) և Հիւսիսարևելեան՝ (ամենահիւսիսային ծայրը):

գ. Աֆրիկայում՝ Բօն (Աֆրիկայի ամենահիւսիսային ծայրը), Գալարի գլուխ՝ (ամենաարևեմտեան ծայրը), Գլուխ-Բարեյուսոյ, Աստեղանց՝ (ամենահարաւային ծայրը) և Գուարդաֆուլի (gardez vous, զգուշացիք) ամենաարևելեան ծայրը:

դ. Ամերիկայում՝ Պարըի (Հիւսիսային-Ամերիկայի ամենահիւսիսային ծայրը), Իշխան Վալիսի՝ (ամենաարևեմտեան ծայրը), Ֆրովարդ, Հօռն՝ (ամենահարաւային-ները), Սէն-Ռոք. (ամենաարևելեանը):

ե. Եւստրալիայի նշանաւոր հրուանդաններն են. Եօրք՝ ամենահիւսիս և Ուկլսլն՝ ամենահարաւ:

Շ. Ջրային մասերի բաժանմունքները.

Եկրիս մակերևոյթի ցամաքը (թէ մայր-ցամաքները և թէ կղղիները) ամեն կողմերից շըշապատուած է ջրով: Ամեն տեղ ջրի երեսը մակարդակ կամ հարթ է և ցամաքի մակերևոյթից միշտ ցած: Երկրիս երեսի ջրերը մարդիկ հինգ և մասնէցն են բաժանել, որոնց անուանել են ուշիանաներ: Սոքա են.

ա. Հիւսիսային Սասունցիւալ ուշիանան՝ այդպէս է կոչվում, որովհետեւ հիւսիսային բնեոփի մօտ է և սառած դրութեան

մէջ է. դա ողողում է Եւրոպալի, Ասիալի և Ամերիկալի հիւսիսային ափերը:

թ. Հարաւային Սարաւային՝ Ովկիանոս՝ Հարաւային բևեռալին շրջանակի մէջ է և պատում է Հարաւային սառած մայր-ցամաքը:

գ. Արևելյան կամ Մէջ և կամ Խաղաղ Ովկիանոս՝ որ տարածվում է երկու Ամերիկալի, Ասիալի և Աւստրալիալի ափերում, բոլոր ովկեանոսների մէջ ամենամեծն է:

դ. Արևմտեան կամ Արևոտնակեան Ովկիանոս՝ որ տարածվում է Եւրոպալի, Ափրիկալի և երկու Ամերիկալի ափերում: Հին ժամանակները կարծում էին թէ սա ամենամեծ ովկեանոսն է, քանի որ գեռ Մէջ ովկիանոսը անլայտ էր. ալդ պատճառով էլ Ատլաս խոսքից Առլանտեան կոչեցին, որ վիժիարի է նշանակում:

ե. Ենտիայ Ովկիանոս՝ որ տարածվում է Աֆրիկալի, Ասիալի և Աւստրալիալի մէջ: Իւր անունը ստացել է Հնդկաց թերակղզուց:

Մեծութեան կարգով ովկիանոսներն ալսպէս են. առաջին տեղը բռնում է Մէջ ովկիանոսը, նա երկրին ցամաքից $1\frac{1}{2}$ անգամ մեծ է: Երկրորդ տեղը բռնում է Արևոտնակեան ովկիանոսը՝ որ երկու անգամ փոքր է Մէջ ովկիանոսից: Երրորդը՝ Հնդկաց, որ Ատլանտեանից սակաւ ինչ փոքր է: Չորրորդը՝ Հիւսիսայն ովկիանոսը, և հինգերորդը՝ Հարաւային ովկիանոսը, որ ամենափոքրն է:

Ի՞նչ ցամաքներով է շրջապատուած ամեն մի ովկիանոս: Ի՞նչ ովկիանոսներով է շրջապատուած ամեն մի մայր-ցամաքը: Եւրաքանչեւր ովկիանոսի մէջ ի՞նչ կղղիներ էք ճանաչում: Մեծութեան կարգով անուանեցէք ովկիանոսները և աշխարհները:

Ո՞ր ովկիանոսը շրջապատում է մի մայր-ցամաք:

Ո՞ր ովկիանոսը բոլորակ ձև ունի և նորա հարաւային ափերը ո՞ր երեք աշխարհներն են բռնում:

Զեղ ծանօթ ո՞ր թերակղիներն ու հրուանդաններն են տարածուած այդ հինգ ովկիանոսների մէջ:

Ո՞ր ովկիանոսի արևելեան և արևմտեան ափերը գրեթէ զուգընթաց են:

Զըի ԱՓերի ԳծԱգրութիւննը.

Ինչպէս որ ցամաքի մասերը շատ կամ քիչ տարածուելով ջրերի մէջ անհաւասար ափեր են ձեւցըրել, նոյնպէս և ջուրը ծեծելով ու մաշելով ցամաքի ափերը, մտել է նորա մէջ ու ձեւցըրել է իւր կողմից անհաւասար և կեռմանաձև ափերը: Ցամաքի մէջ մտած ջրերի մասերը կրում են զանազան անուններ, ինչպէս՝ ծով, ծոյ, գոգ կամ խորչ, առանձին չինու և աշշուց կամ ջրանց:

Ծով ասվում է ովկիանոսի այն մասը, որ մեծ տարածութիւնով մտել է մայր-ցամաքի մէջ և կամ ջրապատուել է կղզիներով:

Ծոյ անուտնվում է ովկիանոսի կամ ծովի այն մասը, որ շատ է մտած ցամաքի կամ մի մեծ կղզու մէջ: Նատ փոքր ծոցերը ասվում են նաև գոգ կամ խորչ խորչը կոչվում է նաև անգիտիք: Երբ բաւական լորմար և ապահով է լինում և հողմերից պաշտպանուած է լինում բնական կամ արհեստական միջոցներով:

Նեղուց կամ ջրանց կոչվում է ովկիանոսի կամ ծովի այն նեզ շերտը, որով միանում են երկու ովկիանոսներ կամ ծովեր, իսկ բաժանվում են երկու ցամաքներ:

Հինգ Աշխանական Նշանակութ ԾՈՎԵՐԸ
ԵՒ ՆԵՊՈՒՑՆԵՑԸ.

ա. Եւրոպալում՝ Ազովի ծով, Ենիզաւէի կամ Կէրչինեց, Պետ ծով, Կոստանդնուպոլսի կամ Վոստորի նեղուց,

Մարմար ծով, Չանգալէսի կամ Գարդանէլի նեղուց, Եգէլ-եան ծով կամ Արշիպելագ, Միջերկրական ծով, Լեփանթիալի կամ Կորնթոսի ծով, Յօնիական ծով, Ադրիական ծով, Տարենթօնի ծոց, Մէսսինալի նեղուց կամ Փարոս, Թոսքանալի ծով, Սուբր Բօնիքաչիալի նեղուց, Ճենովալի և Լիոնի ծոցեր, Ճիպ-րալթար նեղուց, Բիսքալեան կամ Գասքոնի ծոց, Իռլանդիալի ծով՝ Հիւսիսային և սուբր Գէորգ Ջրանցքներով, Լամանշի ջըրանցք, Փա-դը-կալէի նեղուց, Հիւսիսային կամ Գերմանական ծով, Սկագերաք, Կաթէկաթ, Սունդ, Մեծ և Փոքր Բէլթ նեղուցներ, Բալթիկ ծով՝ Ռիգայ, Ֆինի և Բօթնեան ծոցերով, Սպիտակ ծով՝ Կանդալակի, Օնեգայի, Դվինալի և Մէզէնի ծոցերով։ Զէսսի խորշ, Քարայի դրունք կամ նեղուց, Քարայի ծով և Քարայի խորշ։

բ. Ասիայի ափերում՝ Օքի խորշ, Բէհրինդա նեղուց, Բէհրինդա ծով, Օխոտսկի ծով, Թաթարի և Լափերուզ նեղուցներ, Ճափօնի ծով, Սանդարե Քօրէա նեղուցներ, արեւելեան Զինաց ծով, Դեղին ծով, Փեչելի ծոց, Հարաւալին Զինաց ծով, Թօնքին և Սիամի ծոցեր, Մալաքա և Զունդեան նեղուցներ, Բէնդալա ծոց, Պալքի նեղուց, Պարսից կամ Արաբիալի ծով, Հիւրմուզ նեղուց, Պարսից ծոց, Էօմենի ծոց, Բաբ-էլ-մանդէպ նեղուց և Կարմիր ծով։

գ. Աֆրիկայի ափերում՝ Կարմիր ծով, Բասլ-էլ-մանդէպ նեղուց, Մոզամբիքի ջրանցք, Դվինէի ծոց, Ճիպլալթար նեղուց, Քաբէս և Սիդրա ծոցեր։

դ. Երկու Ամերիկաների ափերում՝ Հիւսիսային Ջրանցքների ծով, Բաֆֆինի ծոց, Դելֆիսի նեղուց, Հուդասոնի նեղուց, Հուդասոնի ծոց, Բէլի նեղուց, Սուբր Լաւրէնտիոսի ծոց, Մէքսիքայի ծոց, Քարայիբեան կամ Անթիւեան ծով, Մագելլանին եղուց, Քալիֆօրնիայի ծոց կամ Ծիրանի ծով, Բէհրինդա ծով և Բէհրինդա նեղուց։

Ե. Աւստրալիան շատ աղքատ է ծովերով, ծոցերով և նեղուցներով. գլխաւորները սորանք են Կարպէնտարի ծոց, Թորքեսի նեղուց, Բասսի նեղուց և Կուքի նեղուց Նոր-Զէլանդիալի մէջ։
Ի՞նչ ծովեր և ծոցերւեն ձեւացել իւրաքանչիւր աշխարհի ափերում։

(Այս ինչ) նեղուցով ի՞նչ ծովեր կամ ովկիանոսներ են միանում և ի՞նչ ցամացներ են բաժանվում։
Իւրաքանչիւր ովկիանոսն օդ կողմից և որ նեղուցով կամ ջըր լայն տարածութիւնով է մացած միւս ովկիանոսների և կամ իւր ծովերի հետ։

(Այս ինչ) ծովը ո՞ր ովկիանոսի մասն է բարձր և պահանջանակ թիւ առաջանակ է շրջապատուած։

(Այս ինչ) հրուանդանը ո՞ր ովկիանոսի կամ ծովի և կամ ծովի մէջ է տարածվում։ Անդաման ցածրակ զարդար և ճանակ ո՞ր աշխարհի ծոցերն աւելի մեծ են։

Ո՞ր աշխարհի ափերում ծովեր կամ շատ ծոցեր չեն ձեւացել։

ՅՈՒՐԳԻ ԵՒ ԶՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ. Աշխարհի անդաման կամ անդաման տեսանք, ափերը ոչ միակերպ են և ոչ ուղղիզ, առ ջուրը անդադար ցամաքի մէջ մտնելով՝ ձեւացրելու և ձեւացնում է անդադար կեռման ափեր։ Ափերը կարելի է երկու տեսակի բաժանել՝ բարձր և ցածր։

Բարձր ափերի մօտ ծովն առհասարակ շատ խոր է լինում. այնպէս որ նաւերն առանց դժուարութիւնների կարողանում են նորանց մօտենալ, իսկ ցածր ափերի մօտ ծովը ծանծաղ է լինում և երբեմն էլ այնքան երես, որ ոչ թէ նաւերը՝ այլ մակուկներն անգամ չեն կարողանում այդ ափերին մօտենալ, Բարձր ափերի մօտ ընդհանրապէս լինում են շատ յարմար և բնական նաւահանգիստներ, իսկ ցածր ափերի մօտ

յարմար նաւահանգիստներ շատ սակաւ են պատահում, շատերը նոյնից արուեստական են լինում, որ մեծ ծախսով ու չարչարանքով մարդուս հազիւ է յաջողվում շինել:

Հին աշխարհների խոր և նաւերին մատչելի ափեր համարվում են հետեւալները՝ Եւրոպայի մէջ՝ Պիրենեան, Ապենինեան և Բալքանեան թերակղզիների և Մեծ Բրիտանիայի կղզու ափերը: Ասիայի մէջ՝ Հնդկաց թերակղզու ափերը: Աֆրիկայի մէջ՝ Նորա հարաւային ծայրը: Երկու Ամերիկաների ամբողջ արևմտեան ափը և Հիւսիսային Ամերիկայի արևելեան ափը: Աւստրալիայի հարաւարեւելեան մասերի ու Վանդիմէնի երկը ափերը:

Եւրոպան իւր ափերի յատկութիւններով և յարմարութիւններով առաջին տեղն է բռնում:

Ցած և բարձր ափերը զանազան յատկութիւններ ունին, որոնց գլխաւորապէս առաջացնում է ջուրը, և լինում է այսպէս. ջուրը բարձր ափերին խփելով՝ հետզհետէ նորան մաշում է և ողողում: Եթէ ափերը շատ կարծր են լինում, ինչպէս՝ գրանիթեալ, ջուրը փոքր առ փոքր նորան ճղելով, մտնում է ցամաքի մէջ ու ձևացնում է նեղ ու երկայն ծոցեր: Այս տեսակ ծոցեր շատ կան Աքանդինաւեան թերակղզու արևմտեան ափերում, որոնք տեղական բառով կոչվում են Քիորդ: Այնտեղ այնպէս Քիորդներ կան, որ տասնաւոր վերստերով ծուռ կամ կոր ուղղութիւնով մտած են ցամաքի մէջ՝ բարձր սեպացած ափերով: Քիորդների յատակներում դիզուած են լինում հետզհետէ ժայռոտ ափերից թափթը փուած սուր սուր քարեր, որոնք ասվում են ծռվածաւուր. իսկ Աքանդինաւակացիք կոչում են շէր, որ միլատ կընշանակէ, վասնգի նոքա նաւերը կտրում են ինչպէս մկատներ:

Եթէ բարձր ափը փուխը է լինում, այն ժամանակ ջրի անդադար հարուածներով ափից պոկուած մասերը փշը ու

են ու լցնում ծովի յատակն ու ալդպիսով ծանծաղացնում են ափերը:

Բարձր ու կարծր ափ ունեցող տեղերից նշանաւորներն են. Եւրոպայում՝ Սքանդինավիա թերակղզին, Մեծ Բրիտանիայի հիւսիսարևմտեան կողմը և Խոլանդիա կղզին, Ասիայում՝ նորա հիւսիսային ափի մեծ մասը, Ամերիկայում՝ Հիւսիսային Ամերիկայի արևմտեան և արևելեան ափերը, 50°-ից սկսեալ դէպի հիւսիս: Խոկ բարձր և փուխը կազմակերպութեամբ նշանաւոր է Սև ծովի հիւսիսարևմտեան կողմը:

Ցած ափերի վերայ ծովը բոլորովին ուրիշ կերպով է ազգում. ինչպէս տեսանք, ծովը բարձր ափերը հետզհետէ փշը ու կողմում է, իսկ ցած ափերի վերայ ինքը իւր դէմ ամուր բարձրաւանդակներ է կանգնեցնում: Այնտեղ նա գուրս է ձգում անդադար զանազան մեծութիւնով քարեր, մեծ ու մանր աւազ և այլ նիւթեր, որոնք միմեանց վերայ հետզհետէ դիզուելով՝ կազմում են պատճեշները ու կոչվում են առաջշեցն կամ Ռամբ: Կան աւազաթումբեր, որ ծովեղը բռնել են միքանի հարիւր վերսա երկայնութիւնով և մինչև 100 սաժէնից աւելի բարձրութիւնով: Կան այնպիսի ցած ափեր էլ, որ ծովը շատ անգամ բարձրանում ու ծածկում է նորան ու մեծ վնասներ է պատճառում մարդկանց. այդպիսի տեղերում մարդիկ շինում են արհեստական պատճեշներ կամ թումբեր և կամ խիտ ծառեր են տնկում, որ աւազը դէմ առնի նորանց ու թումբ կազմուի, որպէս զի ծովի ջուրը՝ ցամաքից ներս չմտնէ: Ամենանշանաւոր բնական թումբերը Եւրոպայում են՝ Բալթիկ և Գերմանական ծովերի հարաւային եզերքը, Բիսկայեան ծոցի արևելեան ափերը և Հիւսիսային Ամերիկայի հարաւային ծովեղը: Իսկ ամենաերկար ու բարձր թումբերը գտնվում են Աֆրիկայի հիւսիսարևմտեան ծովեղերում՝ 27°-ից՝ — 16° հիւսիսային լայնութեան վրայ, որ մօտ 1200 վերսա է:

Ի՞նչ է ափ կամ եղբարը ու մասաւ ձիու նոնց ու մասնի տեսակ են ափերը:

Որ ափերը մատչելի են նաև երին:

Քարձր և ցած ափերի վերայ ծովի ի՞նչ փոփոխութիւններ է առում:

Ի՞նչպէս է ֆեօրդը: այս մասաւ և ցերու մատիւնքութիւններ մասնաւ ի՞նչպէս են կազմվում բնական թումբերը:

Արհեստական թումբերը ի՞նչպէս են շինվում:

Կըփոխուե՞ր արդեօք ափերի գծագրութեան ձեւը, եթէ նոքա որքան և իցէ խրուէին ջրի մէջ, կամ թէ ջրից աւելի վեր բարձրանային:

ՅԱՄԱԳԻ ՄԱԿԵՐԵՒՈՑԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԻ:

Ամեն տեղ ցամաքի մակերևոյթը միակերպ չէ. նորա վերայ կամ հարթ ուղղեր, լաւաշվայրեր, լեռներ կամ սարեր, հողեր:

Հարթ երկներ կամ հարթելենեներ կոչվում են ցամաքի այն մասերը, որոնց մակերևոյթը որքան և իցէ հարթ կամ ուղիղ է: Այնպէս հարթութիւններ կամ, որ ամբողջ եւրոպայից մեծ են:

(Առհասարակ ցամաքի որ և իցէ կետի բարձրութիւնը չափ վում է ծովի կամ ովկիանոսի մակերևոյթից, որովհետեւ նորա բրեսը ամեն տեղ աւելի մակարդակ է, քան թէ ցամաքի երեսը:)

Երկրիս հարթութիւնների բարձրութիւնը միակերպ չէ. եթէ հարթ երկերը ծովի մակերևոյթից 500 ոտնտչափից բարձր չլինի՝ կըկոչուի ցած երկեր, իսկ եթէ նոցանից առաւ ել բարձր լինի՝ կըկոչուի սարաւարեն կամ լեռնադաշտ: Այնպիսի լեռնադաշտեր կամ, որ ծովի երեսից մինչև 3 վերստ բարձր են:

Լեռնադաշտերով նշանաւոր է Արևելեան մայր ցամաքը, իսկ ցած երկիրներով՝ Արևմտեան և Հարաւային մայր ցամաքները:

Ինչպէս որ կան ծովի մակերևոյթից շատ բարձր հարթութիւններ, նոյնպէս և կան այնպիսի հարթ տեղեր, որոնք ծովի մակերևոյթից էլ շատ ցած են: Այսպիսի լեռնադաշտերից նշանաւորներն են, Եւրոպայում՝ Պիրիս նեանը, Ասիալի մէջ՝ Արևելեան Ասիականը, Իրանը, Հայաստանը, Փոքր Ասիան, Արաբիալի մէջ՝ Նէջէթը և Հնդկաստանի մէջ՝ Իէկանը, Աֆրիկալի մէջ՝ Նորա հարաւային մասը, Հիւսիսալին Ամերիկայում՝ Մէջքսիքա, Հարաւային Ամերիկայում՝ Տիտիկաքա, իսկ Աւստրալիայում՝ սարահարթ չկայ: Այսպիսի Սարահարթերից ամենամեծն է Արևելեան Ասիականը,

որ Եւրոպայից 1½ անգամ մեծ է, իսկ ամենաբարձրն է Տիտիկաքա սարահարթը, որ ծովի մակերևոյթից 3 վերստ բարձրէ:

Յած հարթութիւններից նշանաւոր են: Այսպիսի ա: Եւրոպայի մէջ՝ Սարմատականը կամ Ռուսականը, Գերմանականը, Ֆրանսիականը, Ստորին Դանուբեանը, Միջին Թանուբեանը կամ Ունգարականը, Լոմբարդեանը, Արագոնեանը և Անդալուզիանը:

բ. Ասիալի մէջ՝ Սիբիրը, Թուրանը և Պաղեստինը, (Վերջին երկուսը տեղ տեղ ծովի մակերևոյթից մինչեւ 10 սահմանաչափ ցած են), Չինականը, Հնդկականը և Միջագետքը:

գ. Աֆրիկալի մէջ՝ Սահարա:

դ. Հիւսիսաւին Ամերիկալի մէջ՝ Սիսիսիսիլի և Հարաւայինի մէջ՝ Օրինօքօ, Ամազոն և Լապլատա գետերի հարթութիւնները:

ե. Աւստրալիալի մէջ՝ Նորա ամբողջ միջին մասը:

Յած հարթութիւնները զանազանվում են միմեանցից իրանց մակերևոյթի յատկութիւններով, որոնք և կրում են զանազան անուններ՝ անապոտ, բաշտ, սալան, կոմիսար, անուննու և լուսու:

Անուննու ասված են այնպիսի հարթ երկիրները, որոնք բաւական բնդարձակ տարածութեան վերալ չեն ունենում:

ոչ ջուր, ոչ բոյս, ոչ կենդանի և ոչ մարդիկ: Անապատներից մի քանիսը ծածկուած են լինում կաւով, ոմանք՝ խոշոր կամ մանը քարերով և խիճով և այլք՝ աւազով: Անապատների մէջ, տեղ տեղ, պատահում են մեծ կամ փոքր տարածութիւնով հողեր՝ ծածկուած դալար ու գուարթ խոտերով ու ծառերով, ուր լինում է ջուր և ապրում են մարդիկ ու կենդանիներ: Այսպիսի տեղերը կոչում են ռաստերք: Անապատները մի բաւական երկայն և համարեա անընդհատ շարքով տարածուած են Հին Աշխարհի միջին մասերում, հարաւարեւմուտքից սկսած դէպի հիւսիսարեւելք, կամ թէ Աֆրիկայի արևմտեան ափերից մինչև Միջին Ասիայի արևելեան ափը՝ գրեթէ ուղիղ գծով, որոնք կրում են հետեւեալ անունները՝ Ասիայի մէջ՝ Գօքի կամ Շամօ, Արևելեան Ասիական սարահարթում՝ Խրանի, Թաւրանի, Հնդկաստանի, Արաբիայի և Աստրայ անապատները և Աֆրիկայի մէջ՝ Սահարա մեծ անապատը, որ ըլունում է նրա ամբողջ հիւսիսային մասը: Այս անապատի մէջ կան շատ ովասիսներ. ամենամեծն է Ֆէզզանի շարքը:

Հարաւային Ամերիկայի արևմտեան ափումը կայ Ալտիանանեղ և երկայն անապատը:

Դաշտավասպում է այն ցած երկիրը, որ ծածկուած է լինում գրեթէ միայն խոտով ու տրօտատեղերով:

Եւրոպայի մէջ նշանաւոր են փոքր Ռուսիայի դաշտերը, որոնք տարածուած են Սև ու Ազով ծովերի հիւսիսային ափերից վեր դէպի հիւսիս, բաւական լայն շերտով:

Ընդարձակ դաշտերով նշանաւոր են նոյնպէս Ամերիկայի մէջ գտնուածները, որոնք զանազան անուններ են կրում, ինչպէս՝ Սէլվաս կամ Փէտէն (Միսսիսիպի գետի հարթութիւնը), որ ծածկուած է մշտադալար խիտ խոտով:

Կիանոս՝ (Օրինօքօ գետի հարթութիւնը), որ անձրեալին եղանակում ծածկվում է բարձր ու լաւ խոտով. սա երաշտ եղանակում չորանում է և փոշի դառնում ու երկիրն անա-

պատի ձեւ է ստանում: Տեղ տեղ միայն բազմատեսակ թանձրատերև կատուաներն են մնում դալար: Սէլվաս՝ (Ամազոն գետի հարթութիւնը)՝ ծածկուած է թանձր, անմատչելի դարեւոր և մշտադալար անտառով (կարծվում է որ այս անտառը Ամերիկա ցամաքի հետ է գոյացել և մնում է մինչև այժմ): և Փամբա (Լավլատա գետի հարթութիւնը), որ երբեմն ծածկվում է խոտով, երբեմն էլ այնտեղը դառնում է ճահիճ կամ ծով և կամ աւազոտ անապատ:

Զատիկլայ անուանվում է հողի այն տարածութիւնը, որը լեռնադաշտերից սկսած աստիճանաբար իջնելով՝ հասնում հաւասարվում է ցած երկիրներին:

Ի՞նչ կերպով է լինում ցամաքի մակերևութը:
Ի՞նչ է հարթութիւն:
Մի հարթ երկիր երր կասուի ցած և երր բարձր:
Բարձր հարթութիւնը ուրիշ բնչպէս կ'ասուի:
Որ աշխարհում է ամենամեծ հարթութիւնը:
Անուանեցէք Նշանաւոր սարահարթերը:
Ասիայի սարահարթերը ինչո՞վ են զանազանվում Ամերիկայի սարահարթերից:

Անուանեցէք ամենաբարձր սարահարթը և ամենամեծը, և ասացէք մէկի բարձրութեան և երկրորդի մեծութեան չափերը:

Ցած հարթութիւնները միմեանցից ի՞նչով են զանազանվում և ի՞նչ անուններ են կրում:

Ի՞նչ է դաշտը:
Ո՞րտեղ կայ մի նշանաւոր դաշտ:
Ի՞նչ է անապատը և ովասիսը:

Յիշեցէք նշանաւոր անապատները և ովասիսները:
Ամերիկայի ցած հարթութիւններն ի՞նչ անուններ են կրում և ի՞նչ յատկութիւններով են զանազանվում միմեանցից:

Ի՞նչ են զանազանվորը:

Նմանի փաստութեաց մրգին քառ դմէ և առողջական է աճ հասք մօրանմ՝ շաբաթ ։ զայտը է մի և է թէ մղեմաւայում մղեմաւ պահանձանաւ, զամանի և ծառոյ ծառ ։ (Ամայն անհպահ գաճք ուր դու և նախթղաք) կուռամաւ զայտաւացն և դու մայր անհերկիւ ցուծ կամ բարձր հարժութիւնների վերալ կամ առանձին բարձրութիւններ, որոնք եթէ կէտ վերստից աւելի բարձր չեն՝ բայց են տավում, իսկ նորանցից բարձրերը՝ առաջամ լաւան։

Բլրի կամ սարի ցածի մասը կոչվում է սորութ, միջին մասը՝ լաւաց կամ իրաւութ, և կամ վեշտ, իսկ վիրին մասը՝ գուգուլ։

Լեռները լինում են կամ առանձին առանձին, կամ շատ սարեր միասին խճառած և կամ շարուն միմեանց կողած, որոնք և կոչվում են լաւացածով կամ լաւացալայ։

Եթէ ոի քանի լեռնաշղթաներ մի ուղութիւնով ձգուած լինին՝ կասուեն զարդարաց շարքեր։

Լինում է որ մի քանի լեռնաշղթաներ հակառակ կողմերից գոլով, կպչում են միմեանց և կազմում են լաւացածով։

Բարձր սարերով ծածկած երկիրն ընդհանրապէս կոչվում է Ալպեան Քիլիլը ու Խաչատրանի ընդհանրապէս Հայաստան։

Հինգ աշխարհների նշանաւոր լեռնաշղթատիները աւագ աւագաւում՝ Սլավեան, որ եւրոպայի ամենաբարձր շղթան է. սարա միջին բարձրութիւնը՝ 2, վերստ է. Ակո շղթայումն է եւրոպիայի ամենաբարձր գագաթը՝ Մալիտակ լեռուն կամ Մօնքան, (որ ծովի մակերեւութից 4 վերստ բարձր է), Ալբենինեան, Կարպատեան, Պինարեան, Պալքանեան, Սուլդէթեան, Սաքսոնեան հանքալինք, Բահեմեան, Սեսուան անտառ կամ Շվարցվալդ, Ֆիւրա, Արգեն, Վուգ, Ալվեն, Պիբինեան, Գրանդ կամ Ծաղկեւանք, Արագածից արևելք, որից մի խոր ձորով է բաժանուած։ Գեղամայ լերինք և ալլն։

Վալդայիան բարձրաւանդակ՝ որի շաբունակութիւնն է Ալար ունեան բլրաշտերը։ առաջան շնորհաւայդ ասդի 000,41

Է. Սովորի մէջ՝ Հիմալայիան, որ երկարգնդիմ ամենաբարձր շղթան է. նորա միջին բարձրութիւնը 5 վերստ է. որու մէջ ամենաբարձր գագաթն է Եվերստ (8 վերստ կամ 29,000 ոա. բարձր ծովի երեսից): Կան նոյնպէս և ուրիշ բարձր գագաթներ. ինչպէս՝ Դամալազիքը, Կինչիմինքա և շատ ուրիշներ։ Միւս նշանաւոր լեռնաշղթաներն են. Բօլոր Թագ, Քաւեն—Լուն, Թիան—շան, Զինդուկու, Ասղոմանեան գահ, Պարապամիզ, Հնդկաչինական 5 զուգընթաց շղթաներ, Խին—շան, Նարլուովի, Ստունովի, Ալմայիան, Կամչաթքա, Ներշինսքի, Արեկիան և Արեմտեան Հադէս, Վինդ, Տաւրոս կամ Տօրոս, Անտիտաւրոս, Լիքանան, Անտիլիքանան, Յօրէք և Սինա, Հայոց լեռնախիմբեր, նոյնպէս և Եւրոպայի աշխանակից Ուրալեան և Կովկասեան շղթաները։

Յիշած լեռնաշղթաներում կան շատ բաձր գագաթներ, բայց՝ թէ իւր գիրքովը և թէ մարդկութեան ու մեր ազգի պատմութեան մէջ խաղացած գերերավը՝ նշանաւոր է Հայոց լեռնախմբում — Մէծն Մակու (17,220 ոտ. ծովի մակերեւութից): Եւրոպացիք սորան Արարատ են անուանում, որ նորան շըրջալատող գաշտի և նահանգի անունն է. Նորա մօտն է Փոչը — Մասու (մօտ 12,000 ոտ. ծովի մակ.). Մէծի արևելակողմը, որն է լայն ձորով է բաժանուած։ Արտաքած՝ Մասիսից Հիւսիս (15,000 ոտ.), Արայի լեռան կամ Ծաղկեւանք, Արագածից արևելք, որից մի խոր ձորով է բաժանուած։ Գեղամայ լերինք և ալլն։

Գ. Աֆրիկայի մէջ՝ Հարեշի կամ Խթովպիայի լեռնախրմբեր, Աթլաս, Լուսնի, Հարուծ, Լուփաթա, սորա մէջն են Աֆրիկայի ամենաբարձր ձիւնապատ գագաթները (Քիլիմանջարո և Կէնիա), Սեղանի և Գվինէւի սարեր։

Դ. Ամերիկայի մէջ՝ Քորդիլերի շղթան՝ որ երկու Ամե-

քիկաների ամբողջ արևմտեան ծովեզրն է բռնում, 14,000 վերստ երկայնութեամբ. Հարաւային Ամերիկայում նա կոչվում է նաև Անդեան շղթալ: Այստեղ, Փերուի տէրութեան մէջ, Քորդիլերի շղթալի ամենաբարձր մասն է. Նորա միջին բարձրութիւնը ծովի երեսից 3^{1/2}, վերստ է: Այստեղ է ամբողջ Ամերիկայի ամենաբարձր կերպ գագաթը (6^{1/2} վերստ): Միւս նշանաւոր լեռնագօտիներն են՝ Ապառաժներ, Ալէգանեան շղթալ (անսպառելի քարածուիր, անտրայիտի հանքերով): Ամենաբարձր գագաթներն են՝ Քօթօպախի, Փիչինչա, Չիմբօրազօ և Լիրիմա:

Ե. Աւստրալիայի մէջ՝ Աւստրալիական Ալպեր և Կապոյտ սարեր՝ մայր ցամաքի վերալ, իսկ Մառնա—Կէա և Մառնա—Լօա՝ Սանդուիչեան կղզիների մէկի վերալ, և Հերակլէսի լեառը՝ նոր Դվինիալի մէջ, որ վերջին տարիներս է գտնուած: (Հաւատացնում են, որ 32,876 ոտ. ծովի մակերևութից բարձրութիւն ունի. կընշանակէ, որ սա աշխարհիս ամենաբարձր գագաթն է):

Ի՞նչ է լեռը և բլուրը՝ կապահանգանակ կամ կապահ մասերը ի՞նչպէս են կոչվում:

Ի՞նչ է լեռնաշղթայ և լեռնախումբ:

Իւրաքանչիւր աշխարհի լեռնագօտիների միջին բարձրութիւնը ո՞րքան է:

Նոցանից իւրաքանչիւրը ի՞նչ, ուշղութիւնով է տարածուած: Եւրոպայի և Ասիայի սահմանների մէջ ի՞նչ շղթաներ կան: Ասիայի մէջ ո՞ր գտնիները լեռնաշանդոցներ և զուգընթաց շղթաներ են կազմում:

Իւրաքանչիւր լեռնագօտին ի՞նչ ուշղութիւնով է ձգուած:

Ի՞նչու ցամաքի կամ սարերի բարձրութիւնը ծովի երեսից են չափում:

Իւրաքանչիւր աշխարհի բարձր գագաթները ո՞րոնք են. Ստորերկրեալ զօրութիւնից պատառուած սարերն, ալսինքն հրաբուխներն, մեծ մասամբ գտնվում են Մեծ ովկիանոսի երկու ափերի վերալ, Արևելեան մայր ցամաքների եզերքնե-

րում և Աւստրալիայի կղզիների վերալ, այնպէս որ կազմվում է մի մեծ հրաբուխին հանեալ:

Երկրիս վերալ գտնուող հրաբուխներից նշանաւորներն են. Եւրոպայի մէջ՝ Վեզուվ՝ Ապենինեան թերակղզու վերալ, Կտնա՛ Յ վերստ բարձր, Սիկիլիա կղզու վերալ, Սարօմբօլի՛ Լիպարեան կղզիների մէկի վերալ, Հեքլա և Քլաբլա՛ Խուլանդիա կղզու վերալ:

Ասիայի մէջ՝ Դիմավէնդ՝ Իրանի սարահարթի հիւսիսային կողմը: Կամչալքայի շարքը, Ճափօնի և Զօնդեան կղզիների վերալի շարքը:

Ա. Փրէկալի մէջ՝ Տէնէրիֆա՝ Քանարեան կղզիներից մէկի վերալ, Ամերիկայի մէջ՝ Քօրդիլերի շղթալի վերալ կան 60-ից աւալի գործող հրաբուխներ, որի համար գիտնականներից մէկը (Ալէքսանդր Չումբօլդ) անուանել է նորան հրաբուխին շարք: Նոցանից ամենաբարձրն է՝ Աքօնդակուա՝ Հարաւային Ամերիկայում, մօտ 6 վերստ բարձրութիւնով. սա աշխարհիս ամենաբարձրն է, նոյնպէս և Քօթօպախի: Իսկ Ովկիանիայի մէջ՝ Մառնա—Լօա, Սանդուիչեան կղզիներից մէկի վերալ. Նորա բերանի շրջապատն է մօտ 10 վերստ:

Մշտաբորբոք մեծ և փոքր հրաբուխներ շատ կան նաև նոր Զէլանդիայի և Ովկիանիայի ուրիշ շատ կղզիների վերալ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ, ԶՈՐ ԵՒ ԱՅՐ:

Երկու լեռնաշղթաների մէջ գտնուած լայն կամ նեղ հարթութիւնը կոչվում է հուշտ:

Հովհանները լինում են երկանաչիւր և լուսաշնորհ: Երկալ նաձիգն այն հովիտներն են, որոնք տարածվում են երկու գուգընթաց շղթաների մէջ, իսկ ընդմիջեալ ափում են այն հովիտները, որոնք գանազան ուղղութիւնով տարա-

ծուած լեռնագօտիներովը ընդմիջվում են: Երկու ընդմիջեալ հովիտների միանալու տեղը շղթաները երկու կողմից այնքան են ցածանում, որ նոյն հովիտների մէջ կազմվում է բնական դուռը, որը ասվում է իրձ՝ պահու՛ և կամ դրան: Նատ նեղ հովիտը կոչվում է յոր: Զորերը ընդհանրապէս լինում են շատ խոր և երկու կողմից սեպացեալ ժայռերով բոնած: Կան և այնպիսի ձորեր, որոնք շատ կամ սակաւ բոլորակ են և կոչվում են անտառանիտն ձոր: Սորանք հանգած հրաբխալին բերաններ են: Նորանք սմանք շատ խոր են, ոմանց մէջ էլ լիքն է լինում ջրով:

Սարերի մէջ գտնվում են մեծ կամ փոքր տարածութիւնով բնական դատարկ տեղեր, որոնք գոյացել են զանազան բնական պատճառներից: Այնպիսի տեղը կոչվում է չորրոշուր կամ այց: Այլերից մի քանիսը շատ խոր են, ինչպէս էւրէն՝ Մեծ Բրիտանիայի մէջ (աշխարհիս ամենախոր ալը, որ 9,600 ոտ. խորութիւն ունի իւր դռնից): Մեծութեան կողմից նշանաւոր է Արէցիւրէնի ալը, Աւստրիայի Թրի-էստ քաղաքի մօտ (Յ մզոն երկարութիւն ունի): Սորա մէջ կան ջրեր, որոնց մէջ ապրում են կոյր գորտեր և ալլ ջրալին սողուններ՝ նոյնպէս կոյր: Լինում են զանազան լատիութիւններով ալը էլ, ինչպէս՝ Իտալիայի Թուրքին քաղաքի մօտ, Եւոզոս սարի մէջ մի ալը կայ, որի միջից ամառուալ տաք ժամանակը սառն քամի է փչում:

Կան նոյնպէս և վնասակար գաղեր արտադրող այլեր. ինչպէս՝ Իտալիայի Նավոլի քաղաքի մօտի Շառ այցը: Նորա այսպէս կոչաւելու պատճառն այն է, որ եթէ նորա մէջ շուն կամ ուրիշ փոքր կենդանի ընկնի, շուտով կըսատկի, վասն զի գետնից առատ ածխածին գագ գուրս գալով, մնում է ալը լատակի վերայ 2½ ստնաչափ բարձրութեամբ և որովհետեւ ածխածին զագը մահացուցիչ է, նորա համար էլ ոոյն օգը ծծող կենդանիները սատկում են:

Ալրեր էլ կան, որոնք ներս ծծելով սարի երեսից կըային բաղադրութեամբ ջուր, ալդ ջուրը հողի մէջ գտվում թափվում է ալրի առաստաղից կաթիլ կաթիլ դանդաղութեամբ և թափուելիս մի մասը քարանում է ու այրի առաստաղից գեղեցիկ գոյնըգոյնը և բիւրելանման շիթել են կախվում: Նոքա Եւրոպական բառով կոչվում են սպալանիա: Առաստաղից թափած ջրերից ալրի լատակի վերայ էլ կրային ջուրը նոյնպէս քարանալով՝ սրածալը բայց աւելի հաստ, կանաձն կամ զանազան ձևերով կրային քարեր են ձևացնում, որոնք նոյնպէս Եւրոպական բառով կոչվում են սպալանիա: Այս տեսակ ալրեր շատ կան մանաւանդ Հայաստանում, Ակովտիայում, Խտալիալում, Ցունաստանում և ուղիշ շատ տեղերում: Ամենագեղեցիկ տեսարան է Ներկայացնում Սպօրատեան արշիպելագում կղզուալը: Անուանի է նաև Սկովտիայի մէջ Ֆինիալ այլը, որ քամու ժամանակ ահարկու ձայներով, արձագանք է արձակում, տեսքն էլ շատ գեղեցիկ է:

Հրաբութների մեծ մասը աշխարհիս ո՞ր կողմերումն են գտանդում:

Ո՞րտեղ է գտանվում ամենաբարձր հրաբութը, Անուանեցէք բոլոր աշխարհների նշանաւոր հրաբութները, Ի՞նչ է հովիտը:

Ո՞ր տեսակ հովիտներն են կոչվում ընդմիջեալ և երկայնաձիգ:

Ի՞նչ է կիրճը:

Ի՞նչ է ձորը:

Ակաւառակային ձորը ի՞նչի մացորդ է:

Այլը ի՞նչ է: Ի՞նչ տեսակ այլը կան:

Ի՞նչ յատկութիւններով այլը կան:

Ի՞նչ բաներ են ստալագմիտ և ստալակտիտ:

ՅԱՌԱՐԵՔԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

Դաշտալին կամ խոտապատ հարթութիւնները դիւրացնում են ժամանակական ժողովրդոց ապրուստը: Նոքա իրանց օտերի գլխաւոր պիտուքը, արօտը, միշտ միւնոյն տեղը չգտնելով, ակամայից ստիպուած, տեղերը միշտ փոփախում են: որ արածացնեն իրանց միակ հարստութիւնն կազմող ընտանի կենդանիները: Աւագոտ հարթութիւնները կամ անապատները համարեա թէ մարդկանց ապրուստն աւելի են գրժուարացնում: Նոքա աւելի են արգելում մարդկանց միմեանց հետ հազորդակառութիւնները, քան թէ ամենաբարձր լեռնագոտիները: Եթէ անապատներում չլինէին ովասիսները, որոնք նոյն նշանակութիւնն ունին, ինչ որ բարձր սարերի մէջ կիրճերը, և եթէ չլինէր ուղտ, գուցէ անապատներից միքանիսը մինչև ազմու էլ կամ յաւիտեան անյայտ և անացանելի լինէին:

Ծովեզրներն ըստ մեծի մասին աւագային լինելով՝ երկրագործութեան կամ խաշնարածութեան անյարմար են. նոցա վերայ ապրող ժողովուրդը պարապում է գլխաւորապէս ձկնորսութիւնով, նաւագնացութիւնով և վաճառականութիւնով: Լեռնադաշտերի և հովիտների բնակչները պարապում են խաշնարածութիւնով և մասաւանդ՝ երկրագործութիւնով:

Լեռնադոտիներն էլ ունին իրանց ազդեցութիւնները՝ թէ եղանակի տարբերութեան, թէ բուսականութեան և թէ կենդանիների ու մարդկային ազգի վերայ. ինչպէս՝ այն շըդթաները, որոնք տարածուած են արևելքից արևմուտք՝ մի երկրի տաքութեան կամ ցրտութեան գլխաւոր պատճառներն են. այս բոլորովին բնական երեւոյթ է. այդպիսի դիրքով

ընկած լեռնագոտիների հիւսիսային փեշերն աւելի ցուրտ են լինում, քան թէ հիւսիսային երեսը՝ հիւսիսային կիսագընդում: Ընդհակառակն է լինում հարաւային կիսագնդում: (Ի նշնու): Այն լեռնագոտիները, որոնք տարածուած են ծովերի ափերի մօտ, շատ տեղ այն երկրի ներքին մասերը զըրկում են ծովային խոնաւութիւնից, և երբեմն էլ այնքան տաքութեան պատճառ են լինում, որ երկիրն անապատ են դարձնում. ինչպէս՝ Ատակամա անապատը՝ Ամերիկայում:

Սարերն արգելում են ընդհանրապէս ազգերի միութեանը, իսկ հարթերկիրները՝ նպատում են. ինչպէս Ռուսական հարթութեան վերայ ապրում են բազմաթիւ ժողովուրդներ, սակայն գլեթէ բոլորը մի ազգ են կազմում: Ալպերից հիւսիս ապրում են Գերմանացիք, հարաւ՝ իտալացիք և արեմուտք՝ ֆրանսիացիք. նոյնպէս Պիրենեան սարերից հիւսիս՝ ֆրանսիացիք, իսկ հարաւ՝ Սպանիացիք: Եւ այսպէս, ոչ միայն ազգերն են ջոկվում, այլ և լեզուներն էլ բոլորովին տարբեր են ոչ միայն լեռնացգթաների զանազան կողմերը, այլ և մի և նոյն շղթայի մէջ ամեն մի հովտի կամ ձորի ժողովուրդը խօսում է իւր առանձին բարբառով և ունի իւր առանձին կրօնը. ինչպէս՝ Զուիցերիայում, Կովկասում, Հայաստանում և այլն:

Լեռնոտ երկիրների մէջ կիրճերը ներկայացնում են երեխն յարմար և բնական ճանապարհներ՝ պատերազմների և ազգաց արշաւանքների ժամանակ, ինչպէս՝ Թէրմօփիլէի կիրճը՝ Յունաստանում, ծորա գուռն՝ Կովկասում (Դերբէնդ) և ուրիշները: Եւ վերջապէս լեռները, իբրև բնական բերդեր, պաշտպանում են իրանց բնակիչներին օտարի բարձակումներից կամ թէ իրանք լեռնացիք ասպատակելով դրացի երկիրներ՝ ամաւենում են և պաշտպանում իրանց անմատչելի սարերի մէջ. ինչպէս՝ Զուիցերիայուր՝ Ալպերում, Դարագաղ-

ցիք՝ Դինալիեան սարերում, Լեզգիք՝ Կովկասում, Զելթուն-
ցիք՝ Տօրոսի մէջ և ալլն:

Լեռնաբնակները պարտպում են որսորդութեամբ, խոշ-
նարածութեամբ և Հանքաբանութեամբ. նոքա առհասարակ
ազատասէր, Հալբենասէր, բայց և մասամբ էլ աւագակարա-
րու ժողովուրդներ են:

Թաշտային կամ Խորտապատ Հարթութիւնների ժողովուրդը
զլիսարապէս ի՞նչը և պարապում:

Անապատներն ի՞նչ բանի արգելք են լինում: Ըստ
Ի՞նչ բաների շնորհիւ անապատները մեղ յայտնի եղանակ

Լեռնագոտիներն իրանց գրութեամբը ի՞նչ ազգեցութիւններ
կարող են ունենալ մի երկրի կլիմայի, մարդկային ազգերի, լեզու-
ների և կրօնքի վերայ:

Ցոյց տուեք քանի մի լեռնագոտիներ, որոնց հիւսիսային
կողմը ցուրտ է և հարաւակողմը տաք, կամ որոնց հարաւային
կողմը ցուրտ է և հիւսիսայինը տաք: Նոյնպէս քանի մի լեռնագոտի-
ներ, որոնց զանազան կողմերում ապրում են զանազան ազգեր,
որոնք աղքով, լեզուով և կրօնքով միմանցից տարբեր են:

Կիրճերը ի՞նչ բանի են օգնում:
Պատերազմների ժամանակ ի՞նչ նշանակութիւն են ունենում

Լեռնագոտիները:
Լեռնաբնակ ժողովրդեան դիմաւոր պարապմունքներն ի՞նչ է:

ԾՈՎԻ ՅԱՏԱԿԻ ԿՅԱՑՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆԲԱ ԶՐԻ ՅԱՏԿՈՒ-
ԹԻՒՆՆԵՐԻ: Դիմաց այսուհետու այսուհետու այսուհետու

ԾՈՎԻ (ավկիանոսի) յատակի մակերևոյթն այնպէս զանա-
զանակերպ է, ինչպէս ցամաքի մակերևոյթը: Լինելով ցա-
մաքի մակերևոյթի շարունակութիւն՝ նա ևս միակերպ ու

բոլորովին հարթ չէ. նորա վերայ կան հարթութիւններ, ցած
երկիրներ, սարահարթեր, լեռներ և ալլն:

ԾՈՎԻ յատակի յած երկիրները նորա ամենախոր տեղերն

են (Ստլանտեան ովկիանոսի հարաւային մտսերում 16 վերսա
խորութիւնում չկարողացան յատակը զտնել):

ԾՈՎԻ առահարթները, եթէ ջրի մակերևոյթից քիչ ենցած,
ասկում են ծանծաղ տեղեր, ինչպէս՝ Աւստրալիայի հիւսիսային
կողմը Կարպենտարիօ ծոցը, նիւֆառնդլընդ կղզու մօտ
ընդարձակ ծանծաղութը. կան և շատ ուրիշներ: Իսկ եթէ
սարահարթը ջրի մակերևոյթից գուրս է՝ ձեւացնում է ըն-
դարձակ հարթ կղզի:

ԾՈՎԻ յատակի վերայ բարձրացած են նոյնպէս լուսական
և լուսագոտիները. նոցա գագաթները կամ փեշերը՝ եթէ ջրից
փոքը ինչ ցած են լինում, ասկում են ծովածայտեր, իսկ
եթէ ջրից գուրս են ցցուած՝ ձեւացնում են կղզեաց խում-
բեր, շարքեր և արշապելագներ (ինչպէս՝ Կուրիլեան, Մա-
րիանեան, Ալեւութեան և շատ ուրիշներ):

ԾՈՎԻ ջուրը գառնապի ու շատ անախարժ համ ու-
նի: Իսկ իմելու համար անպէտք է: ԾՈՎԱԳՆԱԳՆԵՐՆ իրանց
հետ ցամաքից միշտ անուշ ջուր են վեր առնում: ԾՈՎԻ
ջրի աղիութիւնն ամեն տեղ միակերպ չէ. տաք և ցուրտ
գոտիներում ջուրն աւելի աղի է, քանիթէ բարեխառն գոտի-
ներում, որովհետեւ տաք գոտու ծովերի մէջ եղած ջրի քաղ-
ցըր մասը արեից սաստիկ տաքանալով, ըստմեծիմասին գո-
լորշիանում է, իսկ մնացած ջուրը շատ աղի և անպէտք է
գառնում: Բայց ցուրտ գոտու ծովերի մէջ, ինչպէս յայտնի
է, քաղցըր ջուրն է միայն սառում, իսկ չսառածը անտա-
նելի աղի է լինում:

Ավերի մօտ ջուրն աւելի անուշ է, վասնզի նորա մէջ ցա-
մաքից թափում են շատ գետեր, առուտակներ և անձրես
ջրեր, իսկ ներսի կողմերն աւելի աղի է:

ԾՈՎԵՐԻ գոյնն ընդհանրապէս հապոյտ կամ մութ կա-
նաչ է՝ երբ երկինքը պարզ է, և գորշագոյն է՝ երբ երկին-
քը ամպամած է: Բայց տեղադր նորանց գոյնը լինում է
5

կանաչ, կալմիր, դեղին, սպիտակ և ուրիշ գոյներով։ Բացի երկնքից՝ ծովի զանազան գոյների պատճառներն են նաև նորա յատակի որպիսութիւններն, կամ անթիւ ծովալին փոքրիկ ձճիները, կամ բազմատեսակ հանքալին բազադրութիւնները և կամ ծովի յատակի վերալ եղած բոլորը։

Ովկիանոսի ջրերը գիշեր ժամանակ փալում են այնպէս, ինչպէս որ մթանը կրփայլի լուցկիի ծալը, եթէ մատներով նորան տրորենք. գորա պատճառն այն է, որ ովկիանոսի մէջ ալրում են մանը և մինչև տնգամ պարզ աչքով անտեսանելի լուսածին (փոսփորալին) կենդանիներ։ Նոքա գիշերը, ալէկոծութեան ժամանակ, փալլեցնում են ալիքների գագաթները և ձևացնում հրալին շերտեր։ Այս փոսփորալին լոյսը նշարվում է նաև պարզ և հանդարտ գիշերները մակուկի կամ նաւի գնացքի ուղղութմամբ, որոնց հետքը փալլում է ինչպէս մեղմ հրալին ժապաւէն։ Զկների շարժուելուցն էլ երեսում են նոյն փալլուն շերտերը։ Այս երեսով ընդհանրապէս տաք գոտումը յաճախ և պարզ է լինում։

Ափերի մօտ ջուրը պարունակութիւնը մասնաւում են նորա մէջ շատ տղմալից և պղտոր ջրերով գետեր, և երկրորդ՝ որ ծովը ալէկոծուելիս խփում է ափերին ու պղտորում է. իսկ միջի կողմերը պարունակում են։

Ծովի ջուրը տեղտեղ շատ պարզ է, մանաւանդ շիւսին Սառուցեալ և Ատլանտեան ովկիանոսների միքանի տեղերում։ Ատլանտեան ովկիանոսի մէջ այնքան պարզ տեղ կալ, որ մինչև 25 սամէէն խորութիւնում տեսնվում են յատակի անհարթութիւններ՝ տեսակ-տեսակ բոլորով ծածկուած և նոյն մէջ վիտացող տեսակ-տեսակ գեղեցիկ ձկներ և ուրիշ կենդանիներ։

Ծովի յատակի բազմազանութիւններն ունին իրանց լարմար նշանակութիւններ. այսպէս ծանծաղ հարթութիւններ կան, որոնք քանի մի տեսակ ձկների տմբնալարմար բնակա-

րաններ կամ կալարաններ են (Նիւֆառանդիլնդինը): Ալդպիսի տեղեր ամեն տարի գնում են բազմաթիւ ձկնորսներ ու միշտ վերադառնում են առատ որսով։ Ծովաժայուերը և քարերը պաշտպանում են մի երկիր թշնամեաց նաւերի յարձակմունքներից, որովհետեւ նոցա արգելում են աներկիւղ մօտենալ ափերին և կամ նորանցից հեռանալ։

Ի՞նչ տեսպ ունի ծովի յատակը։

Ի՞նչեր կան նորա վերայ։

Նորա ցած երկիրներն ի՞նչ են ձևացնում։

Ո՞րն է ամենախոր ովկիանոսը։

Ի՞նչ են կազմում ծովի սարահարթերը և լեռնագօտիները։

Ծանծաղ յատակից ամենանշանաւորը ո՞րն է։

Ծովի ջուրը ի՞նչ համ ունի։

Ո՞ր գոտու տակ նա աւելի աղի է, և պատճառն ի՞նչ է։

Ծովը ի՞նչ գոյներով է լինում։

Նորա գոյների պատճառն ի՞նչ է։

Ովկիանոսի երեսին փոսփորային լցու երեալու պատճառն ի՞նչ է։

Եյս երեսյթը ո՞ր գոտու ծովերումը շատ կըպատահի։

Ովկիանոսի ջուրը ո՞րտեղ պարզ է և ո՞րտեղ պղտոր։ Ատլանտեան ովկիանոսի մէջ մինչև քանի սաժէն խորութիւնում երեսում է յատակը։

Ծովի յատակի կազմութիւնները ի՞նչ օգուտներ և վասներ են առաջացնում։

0 Գ.

Այն գազալին մարմինը, որով շրջապատուած է մեր երկիրը, կրչվում է օր։

Օդը բաղկացած է Ավետածին և ածխածին գազերից։ Նա անտեսանելի է, չունի հոտ, համ և գոյն։ Նա թափանցիկ և անջօշափելի է։ Առանց օդի չեն կարող ապրել մարդիկ,

կենդանիները, թուչունները, ձկները, գեռունները և ալյն.
առանց նորան չեն կարող աճիլ բոյսերը: Օդը ամեն տեղ
կայ թէ հողի մէջ, թէ ջրի մէջ, թէ կենդանիների և թէ
բոյսերի մէջ:

Օդը կարելի է համարել երկրագնդիս իսկական մակերե-
ւոյթը, որովհետեւ նա հաւասարապէս ամեն կողմից շրջա-
պատում է թէ հողը և թէ ցամաքը: Թէ օդը որքան թանձ-
րութեամբ է պատում մեր երկրը, ճիշտ յայտնի չէ, ոմանք
օդապարիկներով բարձրացել են օդի մէջ մինչև 10 վերստ, որ-
տեղից բարձր օդն այնքան նոր է, որ շունչ քաշելը ան-
կարելի է լինում: Նոսր օդում ոչ մարդ կարող է ապրել և
ոչ կենդանի: Դեռ ևս ոչ ոք չէ կարողացել բարձրանալ
մինչև այն տեղ, ուր բոլորովին օդ չկայ: Գիտնականներն
ասում են, որ օդի բարձրութիւնը 60—70 վերստ է:

Օդի բարձրութեան հետևանքներն են՝ երկնքի գոյները
և բոլոր օրերւոյները, որոնք են՝ իրեներւոյնը, արևի և լուսնի
բայները, ծխածանը, արշալոյնը, վերջալոյնը և արեան մանութեանը:

Օրերեւոյն կամ կրկներեոյթ օդի միջի այն երեսոյթն է, որ
ամառուայ տաք եղանակին գաշտերի վերայ գտնուած շէն-
քերը և կամ ծովի վերայի նաւը, միմեանց վերայ նստած,
երկու հատ են երեսում, մէկը ուղիղ, միւսը դիմիվայր. նոյն-
պէս և մեր հորիզոնից ցած գտնուած առարկաները, բարձր,
օդի մէջ են երեսում: Օդի թանձրութիւնից հեռաւոր առար-
կանների պատկերներն անդրագառնում են օդի մէջ, ինչպէս
հայելու մէջ, երբեմն բնականից էլ աւելի մեծ են երեսում
և շուր եկած դիրքով:

Կրկներեոյթը պատահում է ընդհանրապէս հարթ և
մանաւանդ՝ աւազոտ երկրների վերայ (տաք գօտումը աւե-
լի յաճախ): Ռուսիայի մէջ այս երեսոյթը կոչվում է Մորէւ:

Ամառ ժամանակը յաճախ պատահում է, որ արևի չորս
կողմը կլոր շրջանակ է կազմվում, ծխածանի պէս գոյնզգոյն.

այս երեսոյթը կոչվում է բայ արեկ: Սորա պատճառը
գիտնականներն այն են համարում, որ օդի բարձր մասերում
շատ նուրբ գոլորշիները սառչելով՝ արևի ճառագայթները
նոցա վերայ խփելիս անդրագառնում են և նորա չորս կողմը
մեծ կամ փոքր շրջանակներ են կազմում: Լուսինն էլ եր-
բեմն բակ է ունենում, բայց նորանը արևի բակի նման
պարզ գոյներով չէ լինում, այլ աւելի ազօտ լուսով ու մի-
այն մի կողմը փոքր ինչ կարմրագոյն: Պատահում է երբեմն,
որ արևի կամ լուսնի բակերն միքանի համակենդրոն շրջա-
նակներով են լինում, այն միջոցին դրսի շրջանակի գոյները
շատ փայլուն չեն լինում:

Ինչպիսի մարմին է օդը: Նա երկրի ո՞ր մասն է պատում:
Ո՞րքան է կարծվում նորա բարձրութիւնը:
Մարդիկ օդապարիկով ո՞րքան են կարողացել բարձրանալ:
Օդի թանձրութիւնից ի՞նչ երկոյթներ են յառաջանում:
Արկներեւոյթի պատճառն ի՞նչ է:
Ո՞ր երկրներում յաճախ է պատահում կրկներեւոյթը:
Արևի և լուսնի բակերն ի՞նչ են, և ի՞նչ են նոցա դոյանալու
պատճառները:

ԾՈՎԻ ԶՐԻ ՇԱՐԺՄՈՒՆՔՆԵՐԻ:

Ովկիանոսի կամ ծովի ջուրը երբէք խաղաղ դրութեան
մէջ չէ լինում, այլ միշտ շարժվում է. այդ շարժմունքը ե-
րբէք կերպ է լինում՝ 1, ալիք. 2, մակրնթացութիւն և տե-
ղատութիւն և 3, ծովի հոսանքներ:

Ա Լ Ի Ք:

Քամիների հոսանքը անցնելով ծովի մակերևոյթի վերայով ճնշում է նորան, որով ջրի դիւրաշարժ մասնիկները շարժվում են, այն է՝ նկատելի կերպով ցածանում և բաձրանում են. նայելով թէ քամին ինչ ոյժով է լինում, ալիքներն էլ նոյն աստիճանով են լինում: Երբ եղանակը խաղաղ է, ովկիանոսի կամ ծովի մակերևոյթը հարթ և միահաւասար է լինում. ամենամեծ փոթորիկների ժամանակ ալիքները մինչև 40 ոտնաչափ են բարձրանում, իսկ լայնութիւնը, այսինքն մինչև յետագայ ալիքը լինում է մինչև 400 ոտնաչափ:

Վերջին ժամանակներում ծովագնացները իւղ կամ նաւթաշելով նափ շուրջը մեղմացրել են ալիքները: Այդ բնական է, որովհետեւ իւղը կամ նաւթը բռնում է ջրի մակերևոյթն ու աւելի սահուն լինելով, քամին էլ շուտ սահում անցնում է նորավերայով, առանց ջուրը շարժելու. այսպիսով կարելի է ալէկոծութիւնից աղատել նաւերը:

ՄԱԿՐՆԹԱՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԵՂԱՏԻՈՒԹԻՒՆ:

Ովկիանոսի և կամ բաց ծովերի ջուրը օրը 4 անգամ իւր բնական մակերևոյթից կանոնաւոր կերպով բարձրանում է ու ցածրանում: Բարձրանալուն ասում են հաշնեացութեան, իսկ ցածրանալուն՝ պէղապառ-թիւն:

Երկնալին մարմինները որքան իրաքու աւելի մօտ լինին, նորանց ձգողութիւնն էլ այնքան սաստիկ կըլինի. որովհետեւ լուսինը ամեն աստղերից աւելի մօտ է երկրիս,

նորա համար էլ ծովի մակընթացութեան ու տեղատութեան գլխաւոր պատճառն էլ լուսինն է: Նա իւր ձգողական ոլժը ձգելով երկրիս վերայ, քաշում է դէպ իրան փափուկ և կամ հեղուկ մասը—ջուրը, ուրեմն և նա երկրիս որ կողմը որ լինում է, ջրերն էլ դէպի այն կողմն են բարձրանում, որով այնտեղի ջրերն աւելի շատանում են, քանի լուսին չեղած կողմը: Երեսում է որ արեն էլ մեծ ազդեցութիւն ունի ծովի ջրերի վերայ, վասնզի երբ արեւ և լուսինը երկրիս մի կողմը ուղիղ գծի վերայ են ընկնում, մակընթացութիւնն աւելի սաստիկ է լինում: Նորանց իրարից հեռու եղած միջոցին մակընթացութիւնը թույլ է լինում: Բևեռների կողմը ու ներքին ծովերի վերայ, մակընթացութիւնը շատ փոքր է լինում, իսկ տաք գտում և բաց ծովերումը՝ շատ մեծ է լինում:

Մակընթացութիւնն ու տեղատութիւնը, ինչպէս ասացինք, 6 ժամը մի անգամ է լինում. 24 ժամուայ մէջ չուրը երկու անգամ բարձրանում է և երկու անգամ ցածրանում կամ յետ քաշում: Մակընթացութիւնը երկրագնդիս երկու հակառակ կողմերի վերայ պատահում է միւնոյն ժամանակ, իսկ նոցամիջնաւալրի ջուրը իւր բնական մակերևոյթից տաւելցածնում է, այսինքն այն ժամանակ լինում է տեղատութիւն:

Մակընթացութիւնը ծանծաղ գետերի և ծոցերի նաւարկութեանը շատ է օգնում: Նոքա մակընթացութեան ժամանակ լցվում են ջրով: Ծովագնացներն իմանալով մակընթացութեան ժամանակները, աշխատում են միշտ նորանից օգուտ քաղել՝ մտնել նաւահանգիստները և ափի մօտ խարիսխ ձգել: Իսկ տեղատութեան ժամանակ՝ նաւերը գետերից ու ծովերից հեշտութիւնով են դուրս գալիս: Տեղատութիւնն մակընթացութիւնը բացի նաւարկութեան օգնելուց, ծովեռ մակընթացութիւնը բացի նաւարկութեան օգնելուց, ծովերեալ բնակիչներին տալիս են առատ աղ, և ջուրը յետ զերեալ բնակիչներին տալիս են առատ աղ,

քաշելով՝ մարդիկ կարողանում են ժողովել նորա յատակից բաղմատեսակ խեցեղէններ և ծովալին ժժմունք:

(Մակընթացութեան բարձրութիւնը ամեն տեղ միակերպ չէ. ովկիանոսի մէջ աւելի ցած է. քանիթէ ափերի մօտ: Արխանգելում նա բարձրանում է մինչև 5 ոտնաչափ: Իսկ Հիւս. Ամբիկայում: Քունդի ծոցում, հասնում է մինչև 70 ոտնաչափի: Առհասարակ նեղ տեղերում մակընթացութեան ալեքները շատ յորդ են լինում: պատահում է որ այն կոհակները մտնում են գետաքերանների մէջ ու նաև բին վասում:)

Ալեքը ինչեց է յառաջանում:

Մակընթացութիւնը և տեղատութիւնը են առաջանում: Լուսնի ձգողական զօրութիւնն ի՞նչ բանի վերայ շատ զգալի է լինում:

Մակընթացութիւնը ե՞րբ աւելի սաստիկ է լինում:

Թ՞ր գոտում և ծովերում նա թշյլ է լինում ու ո՞ր գոտում և ծովերում մէծ:

Երկրիս ո՞ր կողմէրի ջուրը միւնցին ժամանակ է բարձրանում իւր մակերևոյթից:

Ի՞նչպէս է կոչ վում այն երեսյթը, երբ ջուրը իւր բնական մակերևոյթից յետ է քաշվում:

Մակընթացութիւնը և տեղատութիւնը քանի՞ ժամը մի անգամ են պատահում:

Նորա ի՞նչ օգուտներ են տալիս:

միշտ գէպի մի կողմն է ուղղվում, այն է՝ ուժեղ կրակի հակառակ կողմը. այնտեղ նա ցածանում է և հասնում է ամանի յատակին, այնաեղից անցնում է կաթսալի առաւել տաք կողմը, որտեղից կրկին վեր է բարձրանում և այսպէս շարունակաբար: Բոկ և իսկ այնպէս է և ովկիանոսի ջրերի շարժմունքի կամ հոսանքի պատճառը: Հասարակածի տակ ջուրը արեից աւելի տաքանում է և ովկիանոսի երեսովը ուղղվում է գէպի բևեռները, իսկ բևեռալին ծովերից ջուրտ ջուրը նորա տակից հոսաւմ է գէպի Հասարակածը, այստեղ նա կրկին բարձրանում է երեսը և ալսպէս շարունակաբար՝ տաք և ցուրտ ջրերը միմեանց տեղն են բռնում: Թէև մալրցամաքները զգալի կերպով փոխում են հոսանքները ընթացքի ուղղութիւնը, սակայն կարելի է նրանց երեք կարգ բաժանել՝ Հասարակածային, Տառ և Յար:

ա. Հասարակածային կոչվում է այն հոսանքը, որ տաք գոտում էջ, Հասարակածի տակը և նորա երկու կողմերն է հոսում: Այնտեղ ջուրը հոսում է ինչպէս գետ, 500 վերատից աւելի լայնութիւնով՝ արևելքից գէպի արևմուտք:

Հոսանքի ուղղութեամբ նորա գէմ ընկած մալրցամաքները բաժանում են նորան երեք մաս. ա. Հասարակածային հոսանք Մեծ ովկիանոսի, բ. — Հոդիշական և գ. — Առշանտեսա:

բ. Տառ հոսանքները Հասարակածային հոսանքների ճիւղերն են: Նոցանից նշանաւորներն են. Ճախանի, Մաղամբէսի, Բրոդիլիոյի և Ծոցյան կամ Գօլֆալլոս:

գ. Յար հոսանքները Բևեռալին երկրներից գէպի Հասարակած ընթացողներն են. Նորա կարծես թէ տաք հոսանքների տարած լիկերի տեղն են բռնում: Ցուրտ հոսանքներից նշանաւորներն են՝ Օխոտի, Բաքչինի, Աւագրակայի, Պամուգանիայի և Պերուի հոսանքները:

Երկու հոսանքներ միմեանց հանդիպելով պտըտվում են կազմում են ջրապտուներ: Նորա մէջ ջուրը փրփրա-

լով պտղավում ու ձագառածե ընկղմում է միշտ գէպի անգունդը: Զրապտուսները շատ վտանգաւոր են ծովագնացների հանար. ինչ նաւ նորա մէջ լնկնի, նոյն բոպէին կընկղմի ու կըթաղուի ծովի անդունդի մէջ, որտեղից փոքր ժամանակից յետոյ նորա կտորները միայն կընկատուին: Զրապտուաներից ամենամեծն ու սարսափելին Սքանդինատեան թերակղզու հիւսիսարևմտեան ափերի մօտ, Լոֆօնտինեան կղզիների հարաւային մասնում եղածն է. նա կոչվում է Մալմէր, որ նշանակում է աշայր կամ հշրշ հոսանք: Նորա ահռելի գոչիւնը ծովի վերայ շատ հեռաւոր տեղից է լսվում: Նաւերը աշխատում են միշտ նորանից միքանի մղոններով կեռու կենալ:

Ծովի հոսանքները ցրտացնում են կամ տաքացնում այն երկիրները՝ գէպի որոնց կողմը որ հոսում են: Օրինակ՝ Ծոցալին հոսանքը կամ Թօլֆոթրօմը տաք գոտիներից գալով գէպի Եւրոպա, նորան տաքացնում է. նորան կարելի է Եւրոպալի վառարան անուանել: Այս հոսանքի հետևանքն Ոռոսաստանի մէջ անդամ զգալի է լինում, մանաւանդ ձմեռ, սաստիկ ցուրտ միջոցին, յանկարծ ձիւները և սառուցները հալվում են ու լճակներ են ձևացնում:

Հոսանքների մէջ ծովի ջուրը տեղ-տեղ գրեթէ բոլորովին անշարժ է. ինչպէս՝ Ատլանտեան և Մեծ ովկիանոսի հիւսիսալին մասում՝ 20° — 40° , հոսանքները ցամաքի ափերով մեծ պտոյտներ անելով՝ միջի ծովը գրեթէ անշարժ է մնում, որով նոցա յատակներն էլ հանդարտ մնայով՝ աճել են նոցա վերալ ծովալին սէզ կամ եղեգնախոտ, որոնք հասել են մինչև ծովի մակերեսովիթը այնքան խիտ, որ նաւերը դժուարանում են նոցա միջով անցնել ու միշտ նրանցից խուսափում են: Այնպէսի տեղերը կոչվում են Սարգսակուն ծռվը, (ինչպէս Ատլանտեան և Մեծ ովկիանոսներում):

Ի՞նչ է ծովային հոսանքը. նա ի՞նչից է առաջանում:

Ծովերի արևից տաքանալուց առաջացած շարժմունքը ի՞նչ բանի նման է:

Ի՞նչն է արգելում հոսանքների ուղղութեանը: Քանի է բաժանուած նա և որո՞նք են: Երբ երկու հակառակ հոսանքներ հանդիպեն, ի՞նչ է առաջանում:

Աշխարհիս ամենամեծ ջրապտոյտը ո՞րն է: Հոսանքները մի երկրի օդի վերայ ի՞նչ ազգեցութիւն կարող են ունենալ:

Գոլֆսթրօմը Եւրոպայի համար ի՞նչ նշանակութիւն ունի: Եւրոպայի ո՞ր կողմը առաւել տաք է, արևելեա՞ն, թէ արևմտեան:

Ի՞նչ բան է Սարգասեան ծովը: Ո՞ր ովկիանոսում կան աշդպիսի ծովեր:

ՀՈՂՄԵՐ:

Օդի շատ կամ քիչ շարժմունքին առում ենք և կամ չամի: Երկրիս վերայ հողմը կամ օդի հոսանքը առաջանում է միևնուն պատճառից, ինչից որ առաջանում է ծովի հոսանքը. այն է՝ արևը երկրիս վերայ մի տեղ աւելի է տաքացնում և մի ուրիշ տեղ սակաւ: Բնակտնապէս՝ օդի շարժութիւնը պէտք է բոլորովին կանոնաւոր լինէր և նմանուէր օդի այն հոսանքին, երբ պատահում է մի տաք սենեակի գուռը բանալիս: Օդի հոսանքը մի տաք և մի ցուրտ սենեակի կիսաբաց դռան միջնավայրում երկու կերպ է լինում. մէկը՝ տաքացած օդը դռան բարձրի կողմից հոսում է գէպի ցուրտ սենեակը, իսկ միւսը՝ ցուրտ սենեակի սառն օդը նոյն դռան ցածի կողմից մտնում է տաք սենեակը: Այս կարող ենք յետագայ կերպով պարզել: Եթէ որ ճրագը մօտեցնենք կիսաբաց դռան վերի ճեղքին, ճրագի բոցը կըլթեքուի գէպի պաղ սենեակը. կընշանակէ որ նա, այս-

ինքն բոցը, օդի գէպի ալն կողմն ունեցած հոսանքի ազգեցութիւնից է ալն կողմը թեքվում. իսկ եթէ մոմը ցածրացնենք մինչև սեմը, ճրագի բոցն ընդհակառակն գէպի տաք սենեակը կըթեքուի. Օդի այսպիսի կանոնաւոր շարժումն պիտի պատահէր նոյնպէս և երկրագնդիս վերաբացած օդը երկրիս երեսից վեր բարձրանալավ՝ պիտի գնար տաք երկիրներից գէպի սակաւ տաքութիւն ունեցող երկիրները. այսինքն՝ Հասարակածից գէպի բևեռները, իսկ բևեռների ցուրտ օդը պէտք է ցածից, այն է՝ երկրիս մակերեսիթին շփուելով՝ գնար բևեռներից գէպի Հասարակածը: Այսպէս եղած ժամանակը մենք միայն երկու տեսակ հողմեր պիտի ունենայիք՝ Հասարակածային և Բնաւոյն: Բայց երկրիս վերաբացած միան Հասարակածից գէպի բևեռները և բևեռներից գէպի Հասարակածը, այլ և զանազան ուղղութիւններով փչող հողմեր կան: Նոքա յառաջանում են այլ և այլ պատճառներից. մէկը՝ որ երկրիս մակերեսիթը ծածկուած է երկու զանազանակերպ մարմիններով, այն է՝ ջրով և ցամաքով. սրանցից ցամաքը շուտ է տաքանում, քան թէ ջուրը: Երկրորդ՝ ցամաքի վերաբացած բարձրագագաթ սարերն ել օդի հոսանքների ուղղութիւնը խոտորում են այնպէս, ինչպէս որ մալր-ցամաքները շեղում են ծովի հոսանքների ուղղութիւնների ընթացքը: Հողմերը կրում են հորիզոնի այն կողմի կամ այն երկրի անունը, որտեղից նոքա փչում են. և կամ թէ զանազան պատճառներով զանազան անուններ են ստանում: Հողմերի հոսած տարածութեանը նայելով՝ կարելի է նորանց երկու մասերի բաժանել. Արաւոտայշտին՝ այսինքն այնպիսի հողմեր, որոնք փչում են արեագարձների մէջ և Անդրաբետարայշտին՝ որսնք արեագարձներից դուրս գտնուած երկիրների մէջ են փչում: Առաջինները կանունուոր են, իսկ երկրորդները՝ անհաման: Կանոնաւոր հողմերն են Պասոսագները և Մաւասչները: Պասոսագները

միշտ միենուն ուղղութիւնով են փչում. Արեւելքից արեւմուտ՝ Հասարակածի երկու կողմերով: Իսկ Մասահան փչում է Հնդկաց ովկիանոսում՝ տաք գոտու մէջ: Սա իւր անունն ստացել է արաբական էլանու բառից, որովհետև նա կանոնաւոր կերպով իւր հոսանքի ուղղութիւնը փոփոխում է, այն է՝ կէս տարի փչում է արեւելահիւսիսից գէպի արևմտահարաւ և կէս տարի նորա հակառակ. կամ կէս տարի հիւսային կիսագնդից փչում է գէպի հարաւային և կամ Ասիայի (Հնդկաստանի և Հնդկաչինու) ափերից գէպի Աֆրիկայի ափերը և կէս տարի ընդհակառակն: Ապրիլ ամսից մինչև Հոկտեմբերից փչում է հարաւայից հիւսիսի, իսկ Հոկտեմբերից մինչև Ապրիլ՝ փչում է հիւսիսից հարաւ: Մուսսոնի այսպիսի ուղղութեան պատճառը այս կամ այն կիսագնդի աւելի կամ պակաս տաքանալուցն է: Երբ հիւսիսային կիսագնդը հարաւայինից աւելի է տաքանում (Ապրիլից Հոկտեմբեր), այն ժամանակ հողմը հարաւային (ցուրտ) կիսագնդից գէպի հիւսիսային (տաք) կիսագունդն է ուղղվում. իսկ երբ հարաւային կիսագունդը հիւսիսայինից աւելի է տաքանում (Հոկտեմբերից Ապրիլ)՝ հողմը հոսում է հիւսիսային ցուրտ կիսագնդից գէպի հարաւային տաք կիսագունդը:

Ցցց տուելք քարտեղի վերայ թէ Պասոսատները աշխարհիս որ մասերի և որ ովկիանոսների վերայից են ընթանում:

Ցցց տալ աշխարհացոյցի վերայ այն տարածութիւնը, որի վերայով փչում են Մուսսոնները:

Արեւադարձներից գուրս փչող հողմերը, Հիւսիսային կիսագնդում, ըստմեծիմասին փչում են հարաւարևմուտքից գէպի հիւսիսարևելք և ընդհակառակն: իսկ Հարաւային կիսագնդում՝ հիւսիսարևմտից գէպի հարաւարևելք և ընդհակառակն:

Ցցց տալ քարտեղի վերայ արեւադարձներից գուրս փչող հողմերի ուղղութիւնը:

Բացի նկարագրած օդի գլխաւոր հոսանքներից կան

նոյնպէս և ուրիշ հոսանքներ էլ, զորօրինակ՝ Ծռափնեայ հողմեր, Փռարբեներ, Թաթառաւ, Հարձապան, Սամում, Շամսին, Ելքոչո, Ֆէն, Սօլան և շատ ուրիշները:

Ծռափնեայ ասվում են այն հողմերը, որոնք ծովեզերներում են փչում՝ ցերեկը ծովից դէպի ցամաք, իսկ գիշերը ցամաքից դէպի ծովը: Սորա պատճառն այն է, որ ցերեկը ծովը կամ ջուրը ցամաքից կամ հողից աւելի սառն է լինում, իսկ գիշերը՝ ընդհակառակն, ցամաքը ծովից աւելի ցուրտ է լինում: Նորա հոսանքը պարզ երևում է ծովեզերեալ հրաբուխների վերալ, ցերեկը նոցա ծուխը տարածվում է դէպի ցամաքը, իսկ գիշերը անցնում է դէպի ծովը:

Փռարբեն կամ Մըրին օդի մէջ կազմվում է այն պատճառից, ինչից որ առաջանում է ջրապտութը ովկիանոսի մէջ. ալսինքն՝ օդի երկու հոտանքների միմեանց հանդիպելուց. որով փոթորիկն կարելի է անուանել նոյնպէս և օրապարագ երգեմն փոթորիկն այնքան ոյժով է փչում, որ արմատախիլ է անում ահագին ծառեր, թռցնում է տների ծածքի, ցիր ու ցան է անում ծանր թնդանօթներ և ալն:

Չատ հանգարտ հողմն՝ զեփիւռը՝ մի ժամուայ մէջ 5,400 ստուարի է վազում: միջակ հողմը՝ 20,000, սաստիկ հողմը՝ 200,000, փոթորիկը՝ 300,000 և մրիկը՝ 480,000 ստուարի կամ 137 վերտից աւելի: Փոթորիկները փշում են ըստմեծիմասին արևագարձային երկիրներում: Հասարակածի երկու կողմերում, 15°-20° հիւսիսային և հարաւային լայնութիւնների մէջ, գլխաւորապէս Քարայիբեան և Մէքսիքայի ծոցերի վերայ, Անթիլեան կղզիների և Հիւսիսային Ամերիկայի արևելեան ափերի մօտ, Աֆրիկայի հարաւային և հարաւարելեան ափերի վերայ, Ասիայի հարաւարելեան կողմը և Հարաւային ու Արևելեան Զինական ծովերի մէջ և այլն:

Թաթառաւ նոյնպէս վտանգաւոր քամի է ու այսպէս է ձեւանում. երկնքի վերալ նախ՝ երևում է մի փոքր սև ամպ, որ հետըզետէ մեծանալով ձագառաձև ցած է իջնում: Եթէ այս երեսով ծովի վերալ պատահի, այն ժամանակ նորա վերալ թնդանօթի ուում-է մօտենում, այն ժամանակ նորա վերալ թնդանօթի ուում-է մօտենում:

Ճուրը կսկսի սաստիկ կերպով խառնուիլ ու բազմաթիւ առանցքների վերալ պտղտելով կամաց-կամաց դէպի վեր բարձրանալ շուռ եկած ձագառի ձեռով և այնքան կրպտրուի, մինչև որ ամպալին և ջրալին ձագառների ծալրերը կըմիանան ու կըկազմեն ջրալին սիւն, երբեմն մինչեւ 80 ստնաչափ հաստութիւնով, որի վերի ծալրը ամպերի մէջ կըկորչի, իսկ ցածինը՝ ովկիանոսի վերալ կըլինի: Թաթառը որքան երկար տևէ, այնքան էլ հետզհետէ կըշտանան ջրալին սիւները: Այն սիւների միջով ջուրը կսկսի արագութեամբ բարձրանալ ու ցածրանալ: Եթէ թաթառը ցամաքի վերալ պատահի, այն ժամանակ ջրի փոխանոսի օդի մէջ կըբարձրանան աւազի և փոշու ամպեր:

Թաթառը շատ վտանգաւոր երևոյթ է. ծովի վերայ իրան հանդիպած նաւի առագաստները մի ակնթարթի մէջ կըպոկէ, կայմները կըխորտակէ, բուն իսկ նաւը կտօր կտոր կանէ և կ'ոչնչացնէ՝ ինչպէս նորա վերալ եղած մարդիկը, նոյնպէս և բոլոր ապրանքը: Իսկ եթէ ցամաքի վերայ պատահի, կըթոցնի օդի մէջ բաւական ծանր առարկաներ. ինչպէս՝ մարդ, անասուններ, տանիքներ, ծառեր և ալլն, վեր կըքաշէ լճակներից և գետերից ջրեր՝ ձկներով ու գործերով ու կըտանէ կըձգէ շատ հեռու երկիրներ: Մեր կողմերում դորա փոքրիկ տեսակն է պատահում, որին տեղացիք առանձի կամ են անուանում:

Ծովագնացները հեռութից նկատելով՝ ճանաչում են թաթառի յառաջընթաց սև ամպը ու երբ տեսնում են որ նա հետզհետէ զարգանալով թաթառ է դառնում և դէպի իրանց է մօտենում, այն ժամանակ նորա վերալ թնդանօթի ուում-է մօտենում:

Հայութականը վնասակար, չոր և կիզող հողմ է: Սա այնքան չոր է լինում, որ երբ փչում է՝ ճաքացնում է փայտեալ կարասիք, գոներ, պատուհանների փեղկեր, ոլորում է զրբքերի կազմերը, ճաքացնում է և մարդկանց շրթունքներն ու ձեռները և այլն: Այս հողմն փչում է միայն Աֆրիկայի մէջ՝ Գվինա ծոցի ափերի վերալ:

Սահման, որ է խորշակ, արաբական թուն խօսքիցն է առած իւր անունը, որովհետեւ որ երկրի վերալ որ սա փշէ, այն տեղի դալար բուսականութիւնը մի դիւժտկան զօրութիւնով թունաւորում է ու բոլոսերի դալար ոստերն ու տերեները չորանում են:

Եահին՝ սրա անունը նոյնպէս արաբական խօսքից է առնուած, որ կընշանակէ 50 օր. սա այսպէս է կոչուած, որովհետեւ փչում է ուղիղ 50 օր շարունակ, մեր դարնանամուտից սկսած (Թ Մարտի):

Ելքուս, Սօւսն և Ֆէն՝ կիզող հողմեր են. սոքա փչում են Ալյեցեալ դօտու աւազապատ մեծ հարթութիւնից (Սահարալից) դէպի հիւսիս՝ անցնելով Միջերկրական ծովը, թէև թուլանում են և աւազոտ չեն լինում, բայց մարդկանց թմրեցնում են:

Խորշակ փչում է բուն Սահարալի մէջ, Շամսինը՝ Սահարալից դէպի արեւելք, որ սաստիկ աչքացաւ է պատճառում, Հարմատանը՝ փչում է Սէնեղալ և Գամբիա դետերի մէջ, Եիրօկքօն՝ Սալենինեան թերակղզու վերալ. սա անցնելով Սլալերից Միջին Գերմանիա՝ կոչվում է Ֆէն, իսկ Սօլանօն՝ փչում է Պիրինեան թերակղզու վերալ:

ՀՈՂՄԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

ա. Հողմերը, մասաւանդ կանոնաւորները, ինչպէս Պասատները, Մուսսօնները և այլն՝ ծովալին հոսանքների

նման ծովագնացների ճանապարհը կամ դիւրացնում են և կամ դժուարացնում:

բ. Հողմերը մայրցամաքների վերալ տարածում են տաք կամ ցուրտ օդ, նայելով թէ հողմը ծովի որ հոսանքի երեսովն է անցել: Ուրեմն նրանք՝ իւրեւ ծովալին հոսանքների օգնականներ, երկրիս վերալ տարածում են տաք կամ ցուրտ օդ:

Ի՞նչից են առաջանում հողմերը:

Երկրիս վերայ օդի հոսանքն ի՞նչ բանի պիտի նմանէր:

Օդի հոսանքն ի՞նչպէս է լինում տաք և ցուրտ սենեակների կիսաբաց գուան մէջ:

Իյս ի՞նչպէս կարող էք հաստատել:

Երկրիս երեսին օդը իսկապէս ի՞նչպէս պիտի հոսէր:

Ի՞նչ է պատճառը որ երկրիս վերայ կան բազմատեսակ հողմեր:

Հողմերն ի՞նչ անուններով են կոչվում:

Արևադարձային և անդրաբեադարձային հողմերն ի՞նչով են ապրերվում:

Պասսատներն ի՞նչ ուղղութիւնով են հոսում:

Ո՞ր հողմերը կոչվում են Մուսսօն:

Մուսսօն խօսքը ի՞նչ կընշանակէ:

Նորա ի՞նչ ուղղութիւնով են փչում:

Նոցա այսպէս փշելու պատճառն ի՞նչ է:

Նա ե՞րբ է փչում հարաւային կիսագնդից դէպի հիւսիս և ե՞րբ ընդհակառակն:

Նորա ո՞րբան ժամանակ են փչում:

Ծովագնացների համար հողմերն ի՞նչ նշանակութիւն ունին: Հողմերի գլխաւոր օգուտն ի՞նչ է:

Լեռնագոտիները հողմերի վերաբերութեամբ ի՞նչ նշանակութիւն ունին:

Ցիշել գլխաւոր հողմերի ուղղութիւնները. ո՞ր հողմը ո՞ւր և ի՞նչ (տաք կամ ցուրտ) կըպատճառէ:

Ինչո՞ւ մայրցամաքների արևելեան ափերը արևադարձների մէջ աւելի խոնաւ են արևեմտեան ափերից:

Ինչո՞ւ մայրցամաքների անդրաբեադարձային արևմտեան ափերն աւելի խոնաւ են արևելեաններից:

Յիշել ծովի հոսանքների ուղղութիւնը և բարեխառն երկիր-
ների մէջ փող հողմերը և ասել թէ իւրաքանչիւր հողմն ո՞ւր
կրփէ և ի՞նչ կըտարածէ (տաք թէ պաղ):

Ինչո՞ւ մայր ցամքների արևմտեան ափերն աւելի տաք են,
իսկ արեւեսններն աւելի ցուրտ (մանաւանդ Եւրոպայի մէջ):

ՅՈՒՄԱՔԻ ԶՐԵԲԸ:

Երկրիս Երեսին գտնուած անուշ ջրերն ովկիանոսից են
դուրս գալիս, օդն է նորանց տարածում ցամքի վերալ: Օդը
երկրագնդի շուրջը պատած լինելով, սպունգի պէս դուրս է
ծծում ովկիանոսից ջուրը. որքան նա շատ տաք է լինում,
այնքան աւելի ընդունակ է լինում ջուր ծծելու: Հողմերը
օդի մէջ պարունակուող խոնաւութիւնը ցըում են ցամքի
Երեսին: Այնուհետև բարձր օդի մէջ թանձրանալով, այդ գո-
լորշիները ցած են թափվում իբրև մէկ, ամպ, անչյուն, չիտ-
իրար, յօդ և էլեան:

Մէկ կամ հաւատուղ կոչվում են օդի մէջ եզած այն
գոլորշիքը, որոնք ցըտութիւնից թանձրանալով՝ ցածրանում
են ու թանձր ծուխի նման ծածկում են հողի Երեսը:

Երբ երկրից բարձրացած գոլորշիները վեր են բարձրա-
նում և ցուրտ հողմի հանդիպելով սառչում ու թանձրանում են,
այն ժամանակ նոքա, որ առաջ թափանցիկ էին ու անտե-
սանելի՝ մօտենում են իրար և թուխ կամ սպիտակ գոյներով
շարժվում կամ կանգնում են երկնակամարի վրալ: Արանք կոչ-
վում են ամպ:

Երկրի մակերևոյթին ամենամօտ ամպերը $1\frac{1}{2}$ վերստ
բարձրութիւն են ունենում. իսկ ամենաբարձրը՝ 10 վերստ:
Ամպերը լինում են խճռուած ու անթափանց, ֆէտրախ և
հաւաթափանց: Պատահում է շատ անգամ, որ ամառուայ

Երեկոները երկնքի վերալ մի փոքր ամպի կտոր չէ լինում,
բայց յանկարծ, դիւթական զօրութեամբ, երկինքը ծածկ-
վում է թանձր ամպով:

Ամպերը երկրից մինչև 18,000 ոտն կարող են բարձ-
րանալ, նորանից վեր սաստիկ ցուրտ լինելով, գոլորշիներն
այլեւ չեն կարող բարձրանալ:

Օդի մէջ գտնուած ջրի գոլորշիները կամ ամպերը ցը-
տից սեղմվում են, ծանրանում են ու կաթիլ-կաթիլ եր-
կրիս վերալ են թափվում և կոչվում են անչյուն:

Աշխարհիս ամեն կողմերն միակերպ անձրև չէ գալիս.
Հասարակածի կողմերն ընդհանրապէս անձրև շատ առատ է,
թէև երաշտ եղանակն էլ շատ է, իսկ գէպի հեեռների
կողմը անձրևն սպիտ-սպիտ է լինում, բայց սակաւ քանա-
կութիւնով:

Անձրևը սարերի վերալ աւելի շատ է թափվում, քան-
թէ դաշտերի վերալ, որովհետեւ սարերի օդը լաճախակի
ցըտից տաք և տաքից ցըտի է փոխվում: Այս փոփոխման
միջոցին եթէ սարերի վերալ ամպ լինի, իսկոյն կ'անձրևէ:

Տաք գոտիներում անձրևները միշտ կանոնաւոր են լի-
նում, որովհետեւ այստեղի հողմերի փոփոխութիւնն էլ կա-
նոնաւոր է:

Անձրևի ջուրը խմելու համար շատ օգտակար չէ. նա
ջրագոյն է լինում, բայց Ալպեան սարերի վերալ պատահում
է, որ տեղ տեղ կարմրագոյն անձրև և ձիւն էլ է թափվում:
Ուանք ենթագրում են, որ այն տեղում գտնուած մանր
ճըճիներից և բուսական փոշուցն են ստանում իրանց գոյնը:

Ջրի գոլորշիները օդի մէջ յանկարծակի ցըտից սառչե-
լով՝ վեցանկիւնանի և բազմատեսակ գեղեցիկ բիւրեղիկներով
թափվում են երկրիս վերալ ու կոչվում են չիւն:

Հողմ չեղած ժամանակը ձիւնի հատիկները մեծ են լի-
նում, որովհետեւ ձիւնը երկրիս վերալ թափվուելիս՝ օդի մի-

ջից հետզհետէ գոլորշիներ են ընդունում ու մեծանում են:
Կարիւտան է ձիւն կամ ձիւնախառն անձրև, բայց օդի մէջ
երկու հակառակ ելեքտրականութիւնով մի կողմից միւսը
մզուելով՝ երկրիս վերալ ընկնելն ուշանում է ու ցըտից
սառչելով քանի մօտենում է երկրիս, այնքան էլ նորա հա-
տիկները մեծանում են, ծանրանում ու սասաիկ ոլժով երկրիս
վերալ են թափվում: Պատահել է որ մի Փունտ ծանրու-
թիւնով կարկուտ է ընկել. բարեքախտաբար այս երևոյթը
սակաւ է պատահում: Կարկուտը գալիս է յաճախ գարնան
վերջերին ու ամառուան սկիզբներին:

Յօշը գիշերալին ժամանակ, մանաւանդ լուսադիմին, խո-
տերի և ուրիշ առարկաների վերալ նստած ջրի կաթիլներն է:
Գիշերալին ցրտութիւնից երկրիս երեսի բոլոր մարմինները
պաղում են, բայց ոչ հաւասարապէս: Մարմիններ կան, որ
շատ և ոմանք էլ սակաւ են պաղում: Շուտ և շատ սառչող
մարմինների վերալ շատ գոլորշի է խտանում, իսկ այն մար-
մինները, որոնք սակաւ կամ ամեննեին չեն պաղում, չոր են
մնում, կամ թէ քիչ են թրջվում: Յօղը աւելի առաւօտեան
դէմն է նստում, քանթէ երեկոյին կամ կէս գիշերին, որով-
հետեւ առաւօտուալ դէմ միայն պաղում են արեւից տաքացած
առարկաները:

Յօղը լինում է ըստմեծիմասին ամառուալ և գարնան
պարզնկալ գիշերները, իսկ ամպամած գիշերները օդն աւելի
տաք լինելով, մարմիններից գուրս եկած գոլորշները փո-
խանակ խտանալու և նոցա վերալ իբրև ցօղ նստելու, տաք
օդի մէջ ցնդվում են:

Երբ գիշերուալ օդն այնքան ցուրտ կըլինի, որ մանը գո-
լորշները սառչեն, այն ժամանակ մարմիններից գուրս եղած
գոլորշներն էլ սառչում են և իբրև ձիւնի հատիկներ նըս-
տում են նոցա վերալ. սրանք կոչվում են էլեւան:

Օդից երկրիս վերալ զանազան կերպերով թափուող ջրե-

ըի մի մասը գոլորշիանում, կրկին օդի մէջն է ցրվում, միւս
մասը՝ երկրիս է ծծում և մի մասն էլ երկրիս մակերեսովիթի
վերալ է ժողովվում կամ ձիւնի ահագին շերտերով, կամ սա-
ռուցներով և կամ թէ ցածաքի վերալ գտնուած մեծ ու
փոքր փոսերի մէջ հաւաքվում:

Օդի մէջ ջրի գոլորշների շնորհիւ պատահում են յա-
ճախ՝ ծիածան, որոպեսնչ, փայտակ, հայտակ, որշալոյն, վերջալոյն, հի-
շոյդ, շրմալի հարք և արեւանառութիւն:

Ծիածանը երկնքի վերալ երեւացող եօթն գոյններն են:
Եթէ եռանկիւնի ապակու կամ բիւրեղի կտորի միջից լոյսին
մտիկ տանք, նորա մէջ կրտեսնենք՝ հարմէր, նարնջի, բերնի,
համաչ, բայ կապրոյտ, հուգ կապրոյտ և համիլոնի գոյներ: Անձրւեի ժա-
մանակ՝ ամպերի միջից, երբ արեւի ճառագայթներն անձրւեի
կաթիլներին խփեն, նոցա վերալ այն եօթն գոյները՝ առ-
անձին առանձին՝ երկնքի երեսին կամարածե կերւան: Ան
գունաւոր կամարը կոչվում է ծիածանի գոտի:
Նորա լոյսը երբեմն անդրադառնում է մօտակալ ամպերի
վերալ ու ձեւացնում երկրորդ ծիածանի կամար. բայց
վերջիններն աղօտ լուսով են լինում: Ծիածան կարող է
ձևանալ նաև ուրիշ պատճառներից. երբեմն մեծ ծովե-
րի կամ դաշտերի վերալ կանգնում է շատ թանձր գոլորշի,
ձևանում է ալնտեղ ծիածան, նոյնպէս և ջրաղացի անիւնե-
րից դուրս ցոլած ջրի մանը կաթիլների վերալ էլ
փոքրիկ ծիածան է երեւում: Սապոնի պղպջակների
և հին ապակինների վերալ շատ պայծառ երեւում են
ծիածանի եօթն գոյները:

Ամպերի մէջ հաւաքուած երկու տեսակ ելեքտրակա-
նութիւնները մէկմէկու երբ հաղորդուին, չայն, ըստ և կրու կը-
հանեն: Չայնը կոչվում է որոպեսն, լոյսը՝ փայտակ, իսկ կրակը՝
— հայծակ: Պատահում է երբեմն, որ առանց որոտմունքի ու
ամպ չեղած ժամանակն էլ երկինքը փալլատակում է. որոտ-

մունքի ձախը 30 մղոնից աւելի հեռու չի լսուիլ։ Նա մի ակընթարթում 1100 ոտնաշափ է գնում։ Նկատուած է, որ երկրիս վերայ մըրիկները, փոթորիկները, որոտմունքը և կայծակները հետեւեալ կանոնով են լինում։

ա. Հասարակածից հեռու երկիրներում սակաւ են պատահում։

բ. Բաց ծովերում, որքան ափերից հեռու լինի, նոյնպէս նոքա սակաւ են լինում։

գ. Ուուսաստանում և Գերմանիայում նոքա գալիս են արևմուտքից և հարաւարեմուտքից, ալսինքն ովկիանոսից—գոլորշիների մեծ աղբիւրից։

դ. Նկատուած է որ փոթորիկները, կարկուտը և ալլն, անտառների վերայ սակաւ են լինում։

Կայծակը խփում է երկրիս վերայ գտնուած ընդհանրապէս բարձր և սրածայր մարմիններին, ինչպէս՝ սրածայր սարերին, աշտարակներին, եկեղեցիներին, բարձր ծառերին և ալլն. նորանց վերայ խփելով՝ քանդում, ալրում ու փչացնում է։ Առաջ պատճառը երկրիս միջի կենդրոնաձիգ ոյժն է, որ ամպերի մէջ գոյացած ելեքտրականութեանը յաղթելով՝ դէպի իրան է քաշում։

Կան կենդանիներ, որոնք սաստիկ ելեքտրականութիւն ունին, օրինակ սև կատուն. եթէ մութ դիշեր ժամանակ նորա մագերը հակառակ կողմը շփենք, թեթև ճայթմունքներ կըլսենք և կայծեր կըտեսնենք։ Այս պատճառով, որոտմունքի ժամանակ կատուներն ու շները փախչում են ու ապահով տեղեր են ծածկվում։ Կան ուրիշ շատ ելեքտրականութիւն ունեցող մարմիններ, ինչպէս սամթը, կնքամոմը և ալլն։

Որոտմունքի կամ կայծակի ժամանակ շատ վտանգաւոր է սրածայր շինուածների կամ բարձր ծառերի տակ կանգնելը, որովհետեւ, ինչպէս ասացինք, կայծակը սիրում է առհասա-

բակ բարձր մարմիններին շանթել, և մանաւանդ՝ երկրիտ ելեքտրականութիւնն այդպիսի մարմիններից է դէպի վերալանում։

Կայծակի կրակի երկայնութիւնը 10—15 վերստ է լինում։

Կայծակից ազատուելու համար լուսաւորեալ երկիրներում մարդիկ մեծ և բարձր շինութիւնների վերայ տնկում են մի բարձր ձող, որի ծալրին կայ մագնիսացեալ պողպատ. այն պողպատից մետաղեալ թելեր են կապում, որոնց միւս ծալրերը հողի կամ շատ խոր ջրհորի մէջ են թաղում։ Երբամպերը ժողավագում են և սկսվում է որոտմունքը, այն մագնիսացեալ ձողն անմիջապէս երկնքի ելեքտրականութիւնը գէպի իրան է քաշում և հաղորդում է հողին, որով շինութիւնն էլ կայծակից վնասուելուց միշտ ազատ և ապահով է մնում։ Այդ գործիքը կոչվում է շանթարգէն։ Նորան հնարել է Ամերիկացի երեւլի Բենհամին Ֆրանկլինը՝ 1755 թուին։

Առաւտները, քանի որ արեւ հորիզոնից 18° ցած է, նորա լուսի կարմրագոյն ճառագայթները ցոլանում են մեր մթնոլորտի վերայ, հորիզոնից բարձր, մինչև որ արեւը հորիզոնից կըբարձրանայ։ Այն կարմրագոյն լոյսը կոչվում է արշաշան, որ արեւը ծագելուց երբեմն մի ժամկից աւելի լաւած է սկսվում (մանաւանդ ամառը)։ Նոյնպէս և երեկոներն արեւը մայր մտնելուն պէս, արևմտեան բոլոր հորիզոնը կարմրում է. այս կարմրութիւնն էլ ասվում է Վերջաւոյ։ Նա ամառը մինչև $2\frac{1}{2}$ ժամ է տեսում։

Մթնոլորտը որքան թանձր լինի, արշալոյսն ու վերջաւոյսն էլ այնքան մեծ ու տարածուած կըլինին։

Հիւմիսայէլ կամ Հիւմիսայէլ լուսաւոր ամպի նման կարմրագոյն, երբեմն լայն ճաճանչներով, երբեմն փայլուն գոտիներով՝ լոյս է։ Նորա կենդրոնը կամ ամենալուսաւոր կող-

մը գէպի Հիսիսալին բևեռն է թեքուած լինում։ Սա ըստ-
մեծիմասին Բևեռների մօտիկ երկիրների Հիսիսալին հորի-
զոնի վերայ է երեւում՝ արևը մայր մտնելուց երեք կած
չորս ժամ լետոյ։ Հիւսիսալիք երբեմն այնքան զօրաւոր է
լինում, որ մինչեւ մեր կողմերի հիւսիսալին հորիզոնի
վերայ էլ է երեւում։ Այս երեսլիթի իսկական պատճառը դեռ
ևս լայտնի չէ։ (Ուսումնականները ենթագրում են, որ մադ-
նիսական ելեքտրականութիւնից է առաջանում)։

Երջուի հուրը բոցի պէս լուս է, որ ժամանակ ժամա-
նակ գերեզմանատներում կամ խոնաւ տեղերումն է երեւում։
Ռամեկները շատ աւելորդապաշտական կարծիքներով այս
կրակիցը վախենում են. բայց վախենալու ալստեղ բան չկայ։
Սորա բուն պատճառը փոսփորեան ջրածին գաղն է, որ մար-
մինների փտելուցն է լառաջանում. նա օդի հետ միանալիս
վառվում է և մինչեւ գաղի վեռջանալը ալրվում է։

Արեանառաւելինն այն երեսլիթն է, որ երբեմն արևել լուսը
իւր դիմացի ամպերին ալնպէս է խփում, որ նոյն ամպերի
վերայ ուրիշ արեներ են երեւում, որպէս մարդու պատկերը
հայելու մէջ։

Յամաքի վերայ եղած ջրերը ո՞րտեղից են յառաջանում։

Ավելանոսներից ջրերն ի՞նչպէս են տեղափոխում ցամաքնե-
րի վերայ։

Օղը ե՞րբ աւելի շուտ ջուր է ծծում և ե՞րբ սակաւ։

Ծովերից բարձրացած խոնաւութիւնն ի՞նչ է տարածում ցա-
մաքի վերայ։

Օդից ջրերն ի՞նչ կերպով են թափվում ցամաքի վերայ։

Ի՞նչ է մէզը, ամպը, անձրել, կարկուտը ցօղը և եղեամը։

Օդի մէջ եղած գոլորշիներում ի՞նչ երկոյթներ են գոյանում։

Ի՞նչ է ծիածանը. Քանի՞ գոյն է ունենումնա։

Ի՞նչ է որոտմունքը. Արքան տեղ է լսվում նորա ձայնը։

Ի՞նչ է փայլակը և կայծակը։


Կայծակն ի՞նչ վնասներ է տալիս։

Ի՞նչ գործիքով կարելի է ազատ պահել շենքերը կայծակից։

Ով է հնարել շանթարգելը։
Արշալոյուը և վերջալոյուն ի՞նչ են։
Ի՞նչ է հիւսիսայրը։
Ի՞նչ է շրջմոլիկ հուրը։
Ի՞նչ է արևան մանութիւնը։

Զիւները եկ ՍԱՄԱՒՑՆԵՐԸ։

Երկրիս վերայ ձիւնը և սառուցներն ընդհանրապէս շատ
ցուրտ տեղերն են ժողովվում, այն է՝ ցուրտ գօտիներում և
բարեխառն ու տաք գօտիների բարձագագաթ սարերի վե-
րայ։ Սարի այն մասը, որ ծածկուած է լաւերժական ձիւնով՝
ասվում է չիւնապոտ մասն, իսկ այն գիծը՝ որտեղ ձիւնապատ
մասն է աւարտվում, կոչվում է հշտուան կամ յաւերժական չիւնէ
առանձն։ Մշատական ձիւնի սահմանը չասարակածի տակ և նո-
րան մօտիկ եղած սարերի վերայ շատ բարձր է, իսկ ո՞րքան
սարերը հեռու լինին չասարակածից, այնքան նոցա մշտա-
կան ձիւնի սահմանն էլ այնքան ցած կըլինի։ Սորա պատճա-
ռը պարզ է. Հասարակածի տակ օդն արեւի ազդեցութիւնից
աւելի է տաքանում, քանիթէ Հասարակածից հեռու։ Տաք
գօտու մէջ մշտական ձիւնի սահմանը հ վեստ բարձր է լի-
քանիթէ (ծովի մակերեւութից), բարեխառն երկիրներում—4 վեստ,
նում (ծովի մակերեւութից), բարեխառն երկիրներում—4 վեստ,
նումաստանի և Սիբիրի մէջ՝ $1\frac{1}{4}$ վերայ, իսկ ցուրտ գո-
տիւներում—ծովի մակերեւութիցն է սկսվում։



Մշտական ձիւնի սահմանը տաք, բարեխառն և ցուրտ գոտիներում:

Մշտական ձիւնի ստորին փեշերի վերալ ձիւնը մեծ ու փոքր ձորերի և կամ հովիտների մէջ սառչում է և հատիկանման փուխը սառուց է դառնում: Այս տեսակ սառուցները շատ տարիներ միմեանց վերալ ժողովուելով՝ կազմում են սառյակապէր և սառյադրագույր:

Մառցադաշտերն ամառը տաքանալով, ծանրութիւնից փոքր առ փոքր հովիտներից ցած են իջնում ու իրանց շըբ-ջապատող սարերի փեշերից աչագին մեծութիւնով քարեր են պոկում ու սարերից հեռու հովիտներն են տանում իրանց հետ:

Մառցադաշտերի տակից կաթիլ-կաթիլ հալուած ձիւներից

առուակներ են գոյանում, շատ առուակներ միանալով՝ կազմում են գետակներ, իսկ գետակներից էլ—գետեր:

Մառցադաշտերի նշանակութիւնը և օգուտը շատ մեծ է: Նոքա գետերի գոյացութեան սկզբնապատճառներն են: Մեծ գետերը սառցադաշտերի շնորհիւ մշտահոս են:

Մառցադաշտերից ամենանշանաւորն է Ալպեան շղթալի մէջ եղած՝ Սառյածով (Mer des glaces) կոչուածը՝ Մօնթանի վերալ, և Հանդուեանը՝ Գալիէսի հովտի վերի կողմը:

Պատահում է՝ որ սեպացեալ սարերի և ձորերի փեշերի վերալ ժողովուած ձիւնից մի կտոր է պոկվում ու արագութիւնով դէպի ցած է գլորվում: Նա որքան ցածանայ՝ այնքան իրան կպած ձիւներով կըմեծանալ և կուժովանալ: Ձիւնի պալսպիսի կտորները կոչվում են չենի հիւսուածում: Նատ է պատահում, որ ձիւնի հիւսուածներն աւերում են ամրող հովիտներ, դաշտեր, գիւղեր և ճանապարհներ, արգելում են վիտներ, դաշտեր, գիւղեր և ճանապարհներ, արգելում են զեղներ լնթացքը, որ յետոյ տաքութիւնից հալուելով հեղներ են դառնում, որոնք ափերից գուրս գալով ողողում են աւերում են գաշտեր, արտեր և գիւղեր:

Զուրը բնականապէս (իբրև գեղուկ) երկրիս վերալ լինում է զանազան կերպերով. մենք իւրաքանչիւր տեսակին տալիս ենք առանձին-առանձին անուն, այն է՝ աշբեր, գետակ, գետ, լիճ, ձանձն և ծով:

Ձիւները և սառուցներն առհասարակ ո՞ր տեղերում են ժողովում:

Սարի ո՞ր մասն է կոչվում ձիւնապատ մասն և մշտական ձիւնի սահման:

Հասարակածից որքան որ հեռանանք, մշտական ձիւնի սահմանն ի՞նչպէս կըլինի:

Ձիւնապատ մասի ստորոտներում ի՞նչպէս են կազմվում սառցադաշտերը:

Մառցադաշտերը ե՞րբ են իրանց տեղերից շարժվում և հետներն ի՞նչ են տանում:

Համած սառցադաշտերից ի՞նչեր են կազմվում:
Ո՞րոնք են ամենազլիսաւոր սառցադաշտերը:
Սարերում ժողովուած ձիւներից ի՞նչեր կարող են պատահել:
Զիւնի հիւսերն ի՞նչ աւերիչ հետևանքներ կարող են ունենալ:
Երկրիս վերայ ջրերը մեզ ի՞նչ կերպով են երեւում:

Ա.ՂԲԻՒԻՐՆԵՐ:

Աշբետ կամ այն ասվում է այնտեղը, ուր գետի ջուրը գետնի տակից դուրս է բղխում: Այնպէս աղբիւր կալ, որի ջուրը միքանի սաժէն բարձր է խփում: Աղբիւրները գոյանում են օդից ցամաքի վերայ թափած ջրերից, որոնք ներս են ծծվում երկրիս կեղևի քանի մի տեսակ շերտերից, ինչպիսի են՝ աւազալին, կրային և ալլն:

Չուրը երկրիս տեսակ-տեսակ շերտերիցը ծծուելով թափանցում է այնքան ցած, մինչև հանդիպում է նորան այնպիսի մի շերտ, ինչպէս կաւալին, գրանիթեալ և ալլն, որից բոլորովին անկարելի է լինում ցած իջնելու. Ջուրն այս շերտերից մէկին հանդիպելով կանգ է առնում ու ալսպէս հետզհետէ այնտեղ մեծ քանակութիւնով ջուր է ժողովվում: Եթէ անթափանց շերտը զառիվայրեր ունենալ, ջուրը կը մտնի ցած՝ մինչև այդ շերտի վերայ եղած բոլոր խոր ու դատարկ տեղերը կը լցնի:

Ինչպէս սառցադաշտերից, նոյնպէս և աղբիւրներից կազմվում են առուակներ, գետակներ, գետեր և ալլն:

Աղբիւրները զանազանվում են իրանց արձակած ջրեն ժամանակամիջոցներ, ջրի տակ և տաշ աստիճանովը, համարվու ու հոտով:

Մշտաբական այն աղբիւրներն են կոչվում, որոնք անսպառ ջուր են արձակում: Ժամանակառու նոքա են, որոնք տարուալ մի որոշ ժամանակն են միայն ջուր արձակում. օրինակ՝

գարնանը, աշնանը և անձրւեներից լետոյ: Հարժապառող կոչվում են այն աղբիւրները, որոնք թէւ որոշեալ ժամանակին են միայն հոսում, բայց և որոշեալ ժամանակին էլ գարարում են:

Ընդհատուող աղբիւրներից նշանաւորներն են՝ Մեծ Գէլգէր և Ստրօքուր՝ Խոլանդիայի մէջ:

Աղբիւրները լինում են ինչպէս պաշ, նոյնպէս և մինչև անգամ էտայր ջրերով:

Աղբիւրների այդ տեսակ զանազանութիւնը կախուած է նորա գետնի տակից դուրս եկած խորութիւնից: Զուրը որքան խորից դուրս գալ, այնքան էլ նա տաք կը լինի:

Արևելյան աշբերներ: Ֆրանսիայի Արժուա (Artois) գաւառում ծէ ըդ դարի վերջերումն առաջին անգամ փորձեցին մի տեսակ գործիքով ծակել գետինը շատ խոր ու տաք ջուր ստանալ: Փորձը լաջողեցաւ ամենայն կատարելութեամբ. գետնի շատ խորերից, որքան որ ծածկել էր գործիքը, ջուրն ամենայն ոլժով վեր նետուեցաւ ու մշտարուխ արհեստական տաք ջրի աղբիւր գարձաւ: Սովորութիւն եղաւ ուրիշ շատ տեղերում էլ այնպիսի ջրհորներ ծակել: Նորանցից միքանիսը շատ խոր են. ինչպէս Փարիզի Գրլնէլ ժաղի աղբիւրը, որից շատ 1,800 ոտնաչափ ($\frac{1}{2}$ վերտիգ աւելի) խորից և հողի երեսիցն էլ 50 ոտ բարձրութնամբ՝ որը (24 ժամուայ մէջ) 330,000 վերքո ջուր է դուրս շարտվում: Նորա ջուրը 20^o ջերմութիւն ունի: Պակաս խոր չէ և Պետերբուրգի Արթէզեան ջրհորը. (1,600 ոտն խորութիւնից օրը 300,000 վերքո ջուր է դուրս գալիս): Ալսպիսի ջրհորները կոչվում են Արթէզեան ջրհորներ:

Տաք ու եռացող ջրերով հարուսա է Եւրոպան:

Ամենատաք ջուր ունեցող աղբիւրը Մեծ Գէլգէրն է (Խոլանդիայում):

Աղբիւրների հոան ու համն էլ զանազանակերպ է. նոքա

լինում են՝ անուշ, աղի, դառն, ծծմբալին, թթու, կրալին, ցէմէնտալին և գիւրավառ։ Բացի անուշ ջրով աղբիւրեց միւս բոլորը մի խօսքով կոչվում են հանհայէն աշխեւնէր։ Հանքալին աղբիւրների ջրի հոտի ու համի պատճառը երկրիս կեղեի շերտերի բաղադրութիւններն են. այսինքն՝ նայելով թէ ջուրն ինչ տեսակ հանքերի միջից է անցնում, նորա համը, հոտը և մինչեւ անգամ գոյնն էլ ստանում է; Թթուաշ, աղի, դառն, ծծմբալին և ալլն, այս տեսակ աղբիւրները կոչվում են նոյնպէս բժշկական աղբիւրներ, որովհետեւ նոքա իրանց յատկութիւններով բժշկում են զանազան հիւանդութիւններ։

Կրային կամ իպշոշ բաղադրութիւն ունեցող աղբիւրներն այնպիսի յատկութիւնով ջրեր ունին, որ եթէ նոցա մէջ փալտի կտոր և կամ այլ նիւթեղէն ձգենք, քանի մի ժամանակից յետոյ նոցա վերայ կրալին կեղեւ կըկապուի։

Արային բաղադրութեամբ աղբիւրներով շատ հարուստ է մեր երկիրը. նորանցից ամենանշանաւորն է Տաթև գիւղի մօտ Որոտն գետի (այժմ Բաղար չայ) վերայ այնպիսի աղբիւրից գոյացած կամուրջն, որին տեղացիք Սատանի կամուրջ են ասում։ Նորա լայնքը 12 սաժէն է, իսկ երկայնութիւնը 20 սաժէն։ Ինչպէս յիշեցինք, նա կազմուած է գետի աջակողմեան եղերքից բջիւած կրային սաստիկ բաղադրութիւն ունեցող աղբիւրից։ Այն աղբիւրը մինչև օրս եւ բղնում և միքանի ոտ ակնիցը հեռանալով կիր է դառնում ու քարանում է։

Ցէնէնպային աղբիւրն այն յատկութիւնն ունի, որ եթէ նորա մէջ երկաթեղէն բան ձգենք, փոքր ժամանակից յետոյ երկաթի երեսը պղնձեալ կեղեով կըծածկուի։

Այսպէս աղբիւրներ նոյնպէս շատ կան մեր երկրում. ինչպէս՝ Արցախ նահանգի (այժմ Մեղրու գաւառակ) Ագարակ գիւղումը։ Այս աղբիւրները լաւ օգուտ են տալիս մարդկանց իրանց աղնիւ և առատ պղինձով։

Հանհային տաք ջրերով կամ ջերմուկներով՝ իրանց բժշկական յատկութիւններով, նշանաւոր են Եւրոպայում՝ Կարլս-

բադ, Տէպլից, Զելթցէր, Բադէն-Բադէն, Էմս, Սփա, Պետակիգորսք և ուրիշ շատերը։ Հայաստանի և Վրաստանի մէջ էլ կան հանքալին շատ աղբիւրներ. ինչպէս՝ Թիֆլիզում, Բօրժոմում, Աբասթումանում, Վալոս ձորի մէջ Ղուշէիբիլագ գիւղի մօտինը և ուրիշ շատ տեղեր։

Կան և մի տեսակ հանքալին աղբիւրներ, որոնք թէպէտ տաք չեն, բայց իրանց մէջ գիւրավառ իւղ և գազ գտնուելով, իրանք իրանց յանկարծակի և կամ թէ կրակի մի կայծով բռնկում են։ Այս տեսակ աղբիւրներ և հորեր շատ տեղ կան։ Նշանաւորներն են՝ Հիւսիսալին Ամերիկայում եղածները և կովկասեան շղթալի երկու ծալրերում (Թաման և Ափշարօն թերակղզիներում) եղածները։ Մարդիկ նորանց գտնելով շատ մաքուր և համարեա թէ անհոտ ու շատ պայծառ լոյսով վառելանիւթ (նաւթ) են ստանում, իսկ մնացորդիցը ալլեալլ նիւթեր։

Ի՞նչ է աղբիւրը. Աղբիւրներից ի՞նչ է կազմվում։ Աղբիւրներն իրարուց ի՞նչով են զանազան վում։ Ի՞նչ տեսակ աղբիւրներ են լինում։ Ըսդհատուող աղբիւրներից նշանաւորը ո՞րն է։ Աղբիւրները տաք են, թէ պաղ. Տաք աղբիւրների պատճառն ի՞նչ է։

Համի, հոտի և գոյնի կողմից ի՞նչ տեսակ աղբիւրներ կան։ Նոցա համի, հոտի և գոյնի պատճառն ի՞նչ է։ Ո՞ր տեսակ աղբիւրները կոչվում են բժշկական։ Ցեմէնտային և կրային աղբիւրներն ի՞նչով են նշանաւոր։ Հանքային աղբիւրներից երկելիները ո՞րոնք են։ Դիւրավառ աղբիւրներն ի՞նչ բաներ են։ Գլխաւորները ո՞րոնք են։

Մեծ, սահուն ջուրը կոչվում է գետ, իսկ փռքը՝ գետակ, վառի և առողջ: Գետերն առաջանում են աղբիւրներից, սառցագագաշերից և լճերից: Գետի սկսած տեղը կոչվում է ակն, իսկ ուր որ նա վերջանում է, ալսինքն թափվում է մի լճի կամ ծովի մէջ, կոչվում է գետաբներուն: Մի գետ միւսի մէջ թափած տեղը կոչվում է գետախառնուած: Մեծամեծ գետերը գերջանում են շատ բերաններով. նորանցից իւրաքանչիւրը կոչվում է բողոքական: իսկ այն հողը, որ բազուկների մէջն է մնում, դելլա է կոչվում: Երեսն՝ ծովի ջուրը մտնելով ցամաքի մէջ, գետաբերանը շատ է լայնացնում: Այն տեսակ լայնացած գետաբերանները Սև և Ազով ծովերի հիւսիսային կողմերում՝ անուանվում են շինան, իսկ Բալթիկ ծովի հարաւային եղերքում՝ Հաֆ: Թէ լիմանները և թէ հաֆերը երկայն ունեղ լշուակն ըաժանուած են լինում ծովից: Ծովը ցած ափերից ներս տարածուելով՝ ձևացնում է ծովածէր. ինչպէս Մարաքալիք՝ Հարաւալին Ամերիկայի հիւսիսային կողմը: Գետի ափերը որոշվում են աջ ու ձախ անունով: Եթէ երեսներս գետի դէպի գնացած մողմը դարձնենք, մեր աջ թեկի կողմի ափը կըլինի աջակաղնեան ափ, իսկ ձախինը՝ յափակաղնեան ափ:

Եթէ գետի լատակն ուղիղ լինի, նա առհասարակ հանգարտ կըհօսի: Գետի վերին լնիթացքն աւելի լորդ է լինում, քանթէ ստորինը: Կան այնպիսի գետեր, որոնց լատակը կտմ դառիվալը է և կամ քարքարոտ, այսպիսի լատակ ունեցող գետը սըլնթաց է լինում. այդ տեսակ գետը կոչվում է առհանտուր գետ: Լինում է նաև բոլորովին սեպացեալ կամ ուղղահալեաց լատակ ունեցող գետ. նորա վերալից ջուրն ահագին շառաչիւնով ցած է թափվում, գետի ալդ մասը կոչվում է ջրէւծ:

Հինգ աշխարհների ջրվէժներից ամենանշանաւորներն են. Հիւսիսային Ամերիկայում՝ Իդագօ, Միսսուրի գետից ձևացած և Նիագարա՝ համանուն գետի, Երիո և Օնտարիո լճերի մէջ տեղը: (Սա աշխարհիս ամենալայնն է՝ 1,200 ոտն), Վիկորիա՝ Աֆրիկայի մէջ, Զամբէզէ գետից, Շաֆհաուզէն և Շտաուբախ՝ Հունոսից, Իմատրա՝ Պետերբուրգի մօտ: Ջրվէժներից անենաբարձրն է Գավարնա՝ Պիրինեան շղթալի մէջ, որ 1,266 ոտնաչափի բարձրութիւնից է թուփվում: Կան այնպիսի գետեր, որոնք հսուելով փոքրառփոքր գետնի տակ են անցնում, անհետանում և մի ուրիշ տեղից գարձեալ գուրս են գալիս ու այսպէս անհետանալով ու երեալով, իրանց ընթացքը շարունակում են մինչև իրանց բերանը: Այսպիսի պատահարքը գերբնական երեսով չէ, որովհետև ինչպէս որ գետնի երեսն անհաւասար է, այնպէս էլ գետնի տակը կան շատ ալրեր, քարանձաւներ ու աւազոտ տեղերին կամ փչակներին է հասնում, բնականապէս և գետնի տակն է անցում: Այսպէս անհետացող գետեր շատ կան Աֆրիկայում: Պատահում է որ մի գետ ուկու հանքի միջով անցնելիս, իրանց բերած աւազը ոսկու հետ խառն է լինում, ինչպէս են՝ Զալիբէ, Գամբիա գետերը՝ Աֆրիկայում, Քոլորագօ, Սաքրամէնտօ՝ Ամերիկայում և ուրիշ շատերը:

Գետի ստորին մասերում ժողովվում է միշտ նորա վերին մասերից եկած աւազ և կամ շատ ուրիշ նիւթեր, որոնցով այնտեղում գետի լատակը բարձրանում է: Եթէ այն ժողովվուած նիւթերը ջրից չեն բարձրանում, կազմում են ծառածառ տեղեր, իսկ եթէ ջրիցը բարձրանում են, առվում են լցուած կամ հեղշացն կղզիներ: Այսպիսի աւազային կղզիները փոփոխում են միշտ թէ իրանց ձևերը և թէ տեղերը: Առուակները և գետերը, որից կազմվում է որևէ իցեւ մի մեծ գետ, կոչվում է վառի, իսկ որի մէջ որ նոքա են թափվում՝

Գլխաւոր գետ: Հողի այն տարածութիւնը, որ զիսաւոր գետն
է բռնում, կը լինի այն գետի ջրաբաշխը: Դետերի ջրաբաշխը
սահմանը կոչվում է ջրաբաժան գետ:

Լինում է որ ջրաբաշխների սահմանը ոչ թէ սարեր և
լեռնաշղթաներ են, այլև աննշան բանձրաւանդակներ և
հարթութիւններ են, որոնք յորդ անձրևի ժամանակ ջուրը
մօտիկ գետերի ջրբաժան սահմանները ծածկելով՝ խառնվում
են միմեանց հետ: Պատահում է որ սաստիկ հողմ կամ
փոթորիկ փշելով՝ մէկ կամ միւս գետի ջուրն առատանում
է ու ջրբաժան գետերն առժամանակ խառնվում են: Այս-
պիսի երեսոյթ յաճախ է պատահում Հարաւային Ամերիկալի
գետերում: Դետերը կարելի է բաժանել երկու կարդ. կան
գետեր, որոնց ջուրը ովկիանոսի կամ նորա մասերի մէջն է
թափվում. այս տեսակները կոչվում են արտահին գետեր: բայց
կան նոյնպէս և գետեր, որոնք որևէ բնական յարմա-
րութիւն չունին թափուելու թէ ովկիանոսների և թէ նոցա
մասերի մէջ, այլ թափվում են այնպիսի լճերի մէջ, որոնց
ջուրը չէ խառնվում ծովերին և ովկիանոսներին. այդ տե-
սակ գետերն էլ կոչվում են ներքին գետեր:

Ի՞նչ է գետը: Կոքա իրանց սկեղը ո՞րտեղից են առնում:
Գետի ո՞ր մասն է կոչվում ակունք, բերան, վերին և ստորին
մասը:

Ի՞նչ է բաղուկը և ի՞նչ է գլխան:
Ի՞նչպէս պէտք է որոշել գետի ափերը:
Ի՞նչ է հափը և լիմանը:
Ծովալճերն ի՞նչ են:
Գետի ո՞ր մասն է կոչվում սահմանք և ո՞րը ջրվեժ:
Ի՞նչ նշանաւոր ջրվեժներ կան: Ո՞րն է ամենալայնը և ո՞րը
ամենաբարձրը:
Ի՞նչ բաներից են գոյանում ծանծաղոտ տեղերը և լցուած
կամ հեղեղային կղզիները:
Ի՞նչ է գետակը: Գլխաւոր գետը ո՞րն է:
Ի՞նչ բան է ջրաբաշխ գետի և ջրբաժան գիծը:

Լ ի ձ:

Ցամաքի վերալ գտնվում են մեծ կամ փոքր փոսեր, որոնք
լցուած են լինում ջրով և շրջապատուած ցամաքով. Դոքա
կոչվում են լիճ: Եթէ մի բնական փոս տեղ լցուած լինի
տղմախառն ջրով և նորա վերալ միշտ խոտ, եղեգն և կամ
մամուռ աճի՝ կասուի ճանիճ:

Հիւսիսային ցուրտ գոտու մէջ կան ընդարձակ սառցա-
պատ ճահիճներ, որոնք տեղացոց լեզուով առանցք են կոչ-
վում: Նոցա վերալ աճում է սպիտակ մամուռ (Հիւսիսային
եղջերուի միակ սնունդը):

Դետերի պէս լճերն էլ բաժանվում են երկու մեծ կար-
գերի. մի կարգը՝ որի ջուրը թափվում կամ խառնվում է
ովկիանոսի և կամ նորա մասերի մէջ, և միւս կարգը, որ ոչ
ովկիանոսում և ոչ նորա մասերի մէջն է խառնվում: Առա-
ջին կարգին պատկանող լճերը կոչվում են արտահին, կամ ար-
տաքին գետերի ջրաբաշխներ, որովհետեւ այս կարգի լճերը կամ
արտաքին գետերի ակունքն են և կամ թէ նոցա հետ իրանց
աւելորդ ջրերը ովկիանոսն են թափում: Երկրորդ կարգի
լճերը կոչվում եմ ներքին լճեր կամ ներքին գետերի ջրաբաշխ-
ներ կամ առաղաստեր, որովհետեւ ներքին կարգի գետերը նոցա
մէջ թափուելով, այլևս գուրս չեն գալիս: Արտաքին լճերի
ոչ թէ միայն մակերեսոյթը, այլև յատակն էլ ովկիանոսի
մակերեսոյթից բաւականաչափ ցած է: Օրինակի համար՝ Արե-
ւելեան մայր ցամաքում Մեռեալ ծովը, Կասպից և Արալեան
ծովերը և այլն: (Մեռեալ ծովի մակերեսոյթը ովկիանոսի
մակերեսոյթից $\frac{1}{3}$ վերստ ցած է): Այս կանոնից գուրս են
մնում սարերի մէջ գտնուող ներքին կարգի լճերը:

Սարերի միջի լճերը ըստմեծի մասին արտաքին կար-
գին են պատկանում: Սակաւ է պատահում, որ նրանց մակերե-
սութիւնը միայն առաջանաւում է առաջանաւում:

ւոյթը ծովի մակերևոյթից ցած լինի, այլ առհասարակ բարձրէ: Թէ ամենաբարձր և թէ ամենախոր լատակ ունեցող լճերը Ասիայի մէջ են. ինչպէս՝ Բալքալ լիճը, որ արևելքան Ասիայի սարահարթի հիւսիսային լեռների մէջն է. նորա խորութիւնը $2\frac{1}{2}$ վերստ է: Իսկ Ոիրի-Գեօլ լճի մակերևոյթը, որ նոյն սարահարթի արևմտեան կողմն է՝ լատակը 4 վերստից աւելի բարձր է ծովի մակերևոյթից, նոյնպէս և Մանասարօվար լիճը՝ նոյն սարահարթի հարաւարեմտեան կողմը: Սա աշխարհիս ամենբարձր դիրք ունեցող լճերից մէկն է (5,400 մեթը):

Արտաքին կարգի լճերի ջուրն ընդհանրապէս անուշ է, իսկ ներքին լճերի մեծ մասը բացի դառն ու աղի ջուր ունենալուց, ինչպէս որ ովկիանոսի ջուրը, վատ հոտ էլ է ունենում:

Արտաքին լճերը թէ գետ են ընդունում և թէ արձակում են, իսկ ներքին լճերը գետ ընդունում են, բայց չեն արձակում ու նրանց ջուրն զգալի կերպով չէ աւելանում, և շրջակայքը չէ ծածկում, որովհետեւ նորա մէջ թաթուող ջրի մի մասը գոլորշիանում ցնդում է ողի մէջ, իսկ միւս մասը՝ լճի զանազան կողմերից ծծուելով, իբրև աղբիւրներ՝ մօտ կամ հեռու տեղերից գուրս են գալիս:

Կան միքանի լճեր, որոնք իրանց մեծութեան համար ծռւ էլ են կոչվում: Անուշ ջրով ծովալճեր շատ կան Արևմտեան մայր ցամաքի հիւսիսարևելքան կողմը. ինչպէս՝ Վերին, Հուրօն, Միջիգան, Երի և Օնտարիօ: Իսկ աղի լճերի ծովալճեր կան Արևելքան մայր ցամաքում, ինչպէս՝ Կասպից, Արալ, Մեռեալ, Թանգանալքա, Նիանսի և այլն: Անուշ ջրով ամենամեծ լիճն է Վերինը, իսկ աղի ջրովը՝ Կասպիցը, որ և աշխարհիս ամենալընդարձակ լիճն է:

Ի՞նչ է լիճը, ճաշիճը և տունդրան:

Լճերը քանի կարգ են բաժանվում:

Լճերի յատակը և մակերևոյթը ծովի մակերևոյթի վերաբերութեամբ ի՞նչպէս են:

Լեռնային լճերն ի՞նչ յատակութիւններ ունին:

Անուանեցէք միքանի լեռնային լճեր և ասացէք թէ իւրաքանչիւրն ի՞նչ դիրք և յատկութիւն ունի:

Իւրաքանչիւր կարգի լճի ջրի համը և հոտն ի՞նչպէս է:

Շատ մեծ լճերն ի՞նչպէս են կոչվում:

Անուանեցէք երկու կարգիցն էլ միքանի ծովալճեր:

ԳԵՏԵՐԻ ԵՒ ԼՃԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

ԳԵՏԵՐԻ և ԼՃԵՐԻ ամենազլիաւոր նշանակութիւնն այն է, որ նոքա մարդկանց հաղորդակցութեան համար ամենաալարմար բնական ճանապարհներ են՝ ոմանք աւելի և ոմանք պակաս յարմարութիւններով, որը կախուած է այլ և այլ բնական պատճառներից, ինչպէս՝

ա. Երկրի մակերևոյթի յատկութիւններից, որոնց վերայ հասում են գետերը:

բ. Ջրի քանակութիւնից:

գ. Գետերի որևէից գօտու մէջ լինելուց:

Այսպէս՝ Բլրային, լեռնոտ և բարձրաւանդակների վերացուող գետերը սրբնթաց և սահանքաւոր են ու կազմում են ջրվեժներ. փափուկ հող ունեցող երկրի վերայ հոսող ջրվեժներ. աւագով են տղմով, աւագով և ունենում են ծանգետերը լցվում են տղմով, աւագով և ունենում են ծանգատակներ, իսկ կարծը յատակ ունեցող գետերն ընդհանրապէս խոր չեն լինում:

Բարեխառն երկիրների գետերը՝ գարնանը ձիւնի և սառուցի արագ հալուելուց, յորդ անձրևներից, կարկուտներից և կամ ամառ՝ բարձր սարերում եղած ձիւների հալուելուց, սաստիկ յորդանում են: Տաք գօտու գետերի ջուրը յորդաստիկ արևագարձային կանոնաւոր անձրևային եղանակներում է արևագարձային կանոնաւոր անձրևային եղանակներում:

Յուրտ և մասամբ էլ բարեխառն գօտիների գետերի երեսները ձմեռը սառչում են երկար կամ կարճ ժամանակով:

Այս բոլոր հանդամանքները բնականապէս գետերի արժանաւորութեան վերալ մեծ ազդեցութիւն ունին. նորանով մի գետի, իբրև ջրալին ճանապարհի, նշանակութիւնը կամ կաւելանալ կամ կրպակասի: Ինչպէս ծովերը և լճերը, նոյնպէս և գետերը՝ բացի նաւարկութեան յարմարութիւնից, ուրիշ շատ ու շատ օգուտներ են տալիս մեզ: Մարդիկ որսում են նորանց միջից բազմատեսակ պատուական ձկներ՝ որոնց միսը, իւղը, ոսկորը, կաշին և ձկնկիթը թէ սնունդի և թէ առետուրի մեծ նիւթեր են: Գետերի ջրերով բանում են շատ տուրի մեծ նիւթեր են: Գետերի ջրերով բանում են շատ ջրաղացներ և գործարաններ: Գետիցը հանում են նմանապէս խեցեղէններ, երեմն էլ մարդարիտ: Բուստը, սպունդը, կետը, ծոփահորթը ովկիանոսներիցն են որսում: Աֆրիկայի և Ամերիկայի այլեցած գոտու գետերը և լճերը լիքն են ձիագետիներով, կոկորդիլոսներով և ուրիշ շատ վիթխարի երկարենցաղ կենդանիներով, որոնց մարդիկ որսալով շահվում են:

Մարդիկ երկու կամ շատ նաւարկելի գետեր մեծ աշխատանքով և ծախքով իրարու հետ միացնում են և կազմում են ջրանցներ կամ արհեստական գետեր, որոնց շնորհիւ կարճ միջոցում և շատ հեշտութեամբ ամեն տեսակ ծանրութիւն մի ծովից միւս ծովն են տեղափոխում: Այսպիսի արհեստական ջրանցքներ փորուած են լուսաւորեալ ազգերի մէջ շատ հին ժամանակներումն էլ և այժմս նոցա թիւն օր ըստ օրէ բազմանում է: Բացի գետերը՝ երկու մօտ ծովեր էլ են միացնում, ինչպէս՝ Սուէզի ջրանցքով Միջերկրական ծովը միացրած է Կարմիր ծովի հետ, որով Եւրոպակից Հնդկաստան գնալու համար փոխանակ Աֆրիկայի չորս կողմով Յ ամիս պարտելու (ինչպէս առաջ էր), այժմ Սուէզի ջրանցքով 10 օրումն են համնում: Զեռնարկած են փորել նոյնպէս Պահամալի պարանոցը և միացնել երկու ովկիանոսները:

Ի՞նչ բաներից կախումն ունի գետերի և լճերի գլխաւոր նշանակութիւնը:

Բարեխառն գօտիների գետերը ե՞ր են յորդանում: Իսկ այլեցած գօտիներինը ե՞րը:

Ա՞ր գոտու գետերն են սառչում:

Ա՞ր երկիրների գետերն են լինում սահանքաւոր:

Փափուկ երկրի գետերն ի՞նչպէս են լինում: իսկ կարծր յատակ ունեցողներն ի՞նչպէս:

Գետերն և լճերն ի՞նչ ինչ օգուտներ են տալիս մեզ:

Ի՞նչ է ջրանցքը:

Ի՞նչ ծովեր են միացրած ջրանցքով:

ՀԵԿ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ ԱՄԵՆԱԾԱՌԱԿԱՆ ԳԵՏԵՐԸ ԵՒ ԼՃԵՐԸ:

(Գետերը և լճերը ցցց տալիս՝ պէտք է ասել նմանապէս: թէ իւրաքանչիւր գետ ո՞րտեղից է առնում իւր սկիզբը՝ ո՞ր լեռնաշղթայից, նորա ո՞ր փեշերից, ի՞նչ ուղղութիւնով և ի՞նչ տեսակ երկրի վրայով [բարձրավանդակ [թէ ցած] է հսում: ո՞ր ովկիանուսի կամ ծովի և կամ լճի մէջ է թափվում: Այս եղանակով աշտարակի համար միենոյն ժամանակն անցած գասերի կրկնութիւն է լինում: այն է՝ երկրիս մակերես ոյթի կազմակերպութեան, ցամաքի և ջրի վերաբերութեամբ:]

ա. Եւրոպան երկու գլխաւոր ջրամբարներ ունի: Ալպեան սարերը և Ալառնեան բլրալին շարքը՝ Վալդայեան բարձրաւանդակի հետ:

Եւրոպակի արտաքին ջրաբաշխին պատկանող գետերից և լճերից նշանաւորներն են՝ Պէչօրա, Հիւսիսալին Դվինա գետերը, Վէնէլ լիճը և Գօթա գետը, Վէթէր և Մէլառ լճերը, Սալմա լիճը և Վուօքսա գետը, Օնէգա լիճը և Սվիր լճերը, Լադոզա լիճը և Նեվա գետը, Իմէն լիճը և Վոլխով գետը, Չափօզա լիճը և Նեվա գետը, Ելմէն լիճը և Վոլխով գետը, Զուգ կամ Պէլֆուս լիճը և Նարովա գետը, Արեմտեան Դվինա, Վիսլա կամ Վիսլուլլա, Օդէր, Էլ-

բա և Վ.էզեր գետերը, Կոստանցա կամ Բօդէն լիճը և Հռենոս
գետը. աջակողմեան Մայն և ձախակողմեան Մօգէլ և Մա-
սս վտակներով, Էսքօ, Սէն, Լուառ, Ֆիրօնդ կամ Դարոն,
Դուրօ կամ Դուէրօ, Թագօ, Կուազիանա, Կուազալկլիվիլը և
Էբրօ գետերը. Ժէնէվի լիճը և Ռօն կամ Հռօդանոս գետը՝
աջակողմեան Սօն վտակովը. Փօ գետը՝ ձախակողմեան Տէչինօ
վտակովը, որ բղխում է Լագօ-դէ-Մաջիօրէ լճից, Դանուբ
գետը՝ որ մեծութեամբ Եւրոպայի երկրորդն է (Վ.օլգա), ա-
ջակողմեան Դրաւա և Սաւա, իսկ ձախակողմեան Թիսա և
Պրուժ վտակներովը, Դնէսթր, Դնէսլը՝ աջակողմեան Բէրե-
զինա և Պրիայտ վտակներովը, Դօն, Կուբան և Թէլմզ գե-
տերը:

Ներքին ջրաբաշխի գետերից և լճերից նշանաւորներն են. Վօլգա գետը, որ Եւրոպայի ամենաերկարնն է (3,000 վերստ)՝ աջակողմեան Ոկա և ձախակողմեան Քամա վտակներով: Աւրալ և Յերէք գետերը և Կասպից լիճը (ծով): Ներքին լճերից նշանաւոր են Նաև Կասպից ծովի հիւսիսային կողմերը գտնուող աղով Հարուստ շատ մանր լճակներ, նորանցից ամենանշանաւորն է Ելլթօն լիճը:

Եւրոպակի գետերը քանի՞ դլիսաւոր ջրամբարներ ունին:

Այս գետերից ո՞րոնք են պատկանում Հիւսիսային Սառուցեալ
ովեանակոսի ջրառաջախին և ո՞րոնք Ատլանտեան ովկիանոսին:

Հպատական շրաբքաշլուս և հիմք առեւ Հայոց
Տօսական է առաջնական գործությունը կամ թափառությունը:

ԷՇՈՂԻՆ ՈՐԱՐԴՅԵ ԳԱՄԱՐ ՀԵՎԵՆ-ՀԵՎԵՆ:

Եւրոպայի ամենանը կայս գտնվ ուր զարգու և դաշտական Սիւնոյն յատկութիւնն ու նշանակութիւն ունի՞ն արդեօք երկու կու կարգի գետերու:

Ի՞նչ զանցանութիւն կայ Սառուցեալ ովկիանոսը և Ատ-
լանտեան ովկիանոսը թափուող գետերի մէջ՝ նաւարկութեան
յարմարութեան կողմից:

Ի՞նչ բանի շնորհիւ կարելի է մի գետից միւս գետը նաև և
մի ծովից միւս ծովը գնալ ցամաքի ներսի կողմովը:

Եւրոպայի ո՞ր կողմերն են Իմաստը, Շափշառւզէն, Հտառւքախ և Գալաքարնա ջրվէժները:

բ. Ասիալի գետերը երկու գլխաւոր ջրամբարներ ունին՝
Մեծ ասիական սարահարթը և Փոքր Ասիական սարա-
հարթը:

Ասիալի գետերի գլխաւոր յատկութիւններից մէկն էլ այն
է, որ զըսթէ բոլորն էլ զոյգ զոյգ են հոսում. ըղիում են
միմեանց մօտ, հեռանում են իրարից բաւական ընդարձակ
տարածութիւնով ու կրկին մօտենալով կամ միմեանց հետ
խառնուելով, մի գետ են կազմում կամ թէ միևնույն ծոցը
և ծովն են թափվում:

Ասիայի արտաքին գետերից և լճերից դլխաւորներն են՝ Օք՝ ձախակողմեան Իրթիշ վտակովը, որ դուրս է գալիս Զայսանդ լճից: Իրթիշն ընդունում է իւր մէջ Թօրօլ գետակը, Օքի Հրաբաշիլ Ասիայի մէջ ամենամեծ և աշխարհիս երկը ըորդն է (Ամազոնից լետոյ): Ենիսէյ՝ Ասիայի ամենաերկարն գետը, ($1\frac{1}{2}$ անգամ երկայն է Վոլգայից): սա աջ կողմից ընդունում է Անգարա վտակը, որ բղիում է Բայքալ լճից (սուրբ ծով), Լէնա, Ամուր, Հուան-Հո, կամ Դեղին, Եանցէքիանդ կամ Կապոյտ, Բրահմապուտրա, Գանգէս՝ աջակողմեան Զումնա վտակով, Խնդոս՝ ձախակողմեան Սէժլէջ վտակով, որ Մանասսարօվար լճիցն է բղիում: Խնդոս գետի Հրաբաշի վերի մասը Փէնջանէ է կոչվում, որ նշանակում է Հնդկացլեան: Այս երկիրն այսպէս է կոչվում, որովհետեւ այս հոսով հոսում են հինգ գետեր, որոնք միմեանց մէջ թատեղով հոսում են հինգ գետեր, որոնք միմեանց մէջ թափուելով՝ կազմում են Խնդոս գլխաւոր գետը: Եփրատ և Տիգրիս՝ այս երկուսն իրանց ստորին ընթացքում միանալով, կոչվում են Շատիւլ-արաբ: Օրոնթ, ՈՒիօն, կամ Ֆասիս, ծորոխ և Ալիւս կամ Կըզըլ-Ըրմաք:

Ներքին ջրաբաշխի գետերից և լճերից գլխաւորներս են.
Կուը՝ ձախակողմից ընդունում է Արագվա և Ալագան վտակ-
ները, Երասիս՝ ձոխակողմից ընդունում է Ախուրեան (Ար-

փաշայ), Հրագդան կամ Զանգի (սա սկզբն է տոնում Սևանայ կամ Գեղամայ լճից, որը հարուստ է ազնիւ գեղարքունի, իշխան, կողակ և բախտակ ձկներով), Արփա, Որոտն և շատ ուրիշ վտակներ: Երասխը խառնվում է Կուրի հետ, սոցա գետախառնումքը Զաւադ գիւղի մօտ է. այնտեղից մօտ 80 վերստ հոսելով զէպի հարաւ թափում են Կասպից ծովը: Սիր-Գարիա (Եաքսարգէս կամ Սի-Հուն), Ամուն-Դարիա (Զիհոն կամ Օքսոս) գետերը և Արալ ծովը: Յորդանան գետը, Մեռեալ կամ Ասֆալտեան ծովը: (Մեռեալ ծովը գոյացել է Սոդոմ և Գոմոր կործանուած քաղաքների տեղը. կարծվում է որ նա Հրաբուային բերան էր, «որը լոյուած է ջրով: Նորա ջրի սաստիկ գոլորշիանալովը լճուած մնում է միայն աղի, պղտոր ու թանձը ջուր, որի վերայ լոյում են ասֆալտի թանձը կտորներ: Այս ծովում չէ ապրում ոչ մի ջրալին կենդանի): Թարիմ գետը և Լոբ-Նոր լիճը, Հիլմէնդ գետը և Հիմունդ լիճը, Վանայ և Որմիայ (Կապուտան) լճերը. (Վանայ լիճը նշանաւոր է տառեխ ձկնով:) Սոցա մէջ, Տ. Հայոց բարձրաւանդակից, թափում են շատ գետակներ:

Ասիայի գետերը քանի՞ գլխաւոր ջրամբարներ ունին:
Այս աշխարհի գետերն ուրիշ ի՞նչ յատկութիւններ ունին:
Ասիայի արտաքին գետերից որո՞նք են պատկանում Սառուցեալ ովկիանոսի ջրաբաշխին:

Ո՞րո՞նք—Մեծ և ո՞րո՞նք Հնդկաց ովկիանոսի ջրաբաշխներին,
Այս գետերից ո՞րո՞նք տարուայ ամեն եղանակներում յարմար

են Հաղորդակցութեան և ո՞րո՞նք միայն մի որոշեալ եղանակում:

Ի՞նչ տեսակ երկիրներից են անցնում Ասիայի գետերը:

Ո՞ր աշխարհի գետերն իրանց նշանակութեամբ վեր են, Ասիայի՞նը, թէ Եւրոպայինը:

Ո՞ր աշխարհի ափերն առաւել մատչելի և յարմար են:

գ. Աֆրիկայի արտաքին գետերից և լճերից գլխաւորներն են. Նեղոս՝ որը ինչպէս Աֆրիկայի, նոյնպէս և աշխարհի

ամենաերկայն գետն է (6,000 վերստ). սա կազմվում է երկու գետերից՝ Սպիտակ Նեղոս կամ Բահր-իւլ-Աբիադ՝ որ դուրս է գալիս Վեկտորիա և Ալբերժ լճերից, և Կապոյտ Նեղոս կամ Բահր-իւլ-Ացրէք՝ Զանա կամ Դէմբէա լճից: Սէնէգալ, Դամբիա, Նիգէր գետերը. վերջինս ձախ կողմից ընդունում է Բէնուէ նաւարկելի վտակը: Կոնգո, Նարինջ կամ Օրանժ և Զանբէզէ՝ որի վերին մասը ասվում է Լիամբէէ: Զամբէզէի ընթացքումն է Վիկտօրիա ջրվէժը:

Ներքին գետերից և լճերից գլխաւորներն են. Թանգանայկա կամ Ուջիջի, Նիանսի և Զաթ լճերը: Վերջինիս մէջ թափում են Քամադուկու, Ուակուբէ և Նարի գետերն: Ատլաս լեռների մէջ կան Շօթ Ճահճալճերը:

Աֆրիկայի իւրաքանչիւր գետն իւր առանձին ջրամբարն ունի. նոցանից միքանիսը ոսկիաբեր են և ընթացքներն ընդհատվում են (մտնում են հողի տակ և փոքր ինչ հեռուից գարձեալ գուրս են գալիս):

Աֆրիկայի արտաքին գետերից ո՞րո՞նք են պատկանում Ատլանտեան և ո՞րո՞նք Հնդկաց ովկիանոսների ջրաբաշխներին:

Այս աշխարհի գետերն են աւելի տարածվում ցամաքի ներսը, թէ Եւրոպայի գետերը: Այս երկու աշխարհից ո՞րը հարուստ է գետեր:

Ի՞նչ վնաս է լինում Աֆրիկային և Ասիային, որ նոցա գետերը երկիր ներսի կողմերից չեն անցնում այնքան, ինչքան որ Եւրոպայինը. Ի՞նչ հետեանք կարող է լինել որ Աֆրիկայի գետերն առաւելքից են Ասիայից. Ուրեմն, երեք աշխարհներից՝ գետերի յարմարութեամբ, ո՞րն է առաջին տեղը բռնում և ո՞րը յետին, Յիշեցէք Աֆրիկայի մակերևոյթի կազմութիւնը և ասացէք՝ Աֆրիկայի գետերը կարո՞ղ են այնքան խոր լինել, որքան Եւրոպայի և Ասիայի գետերն են. Յիշել նոյնպէս և Աֆրիկայի ափերի յատկութիւնները և Համեմատել նրանց Ասիայի և Եւրոպայի ափերի հետ:

Աֆրիկայի գետերի ջրամբարներն ի՞նչպէս են ընկած: Այս աշխարհի գետերի մի մասը պյլւս ի՞նչով է նշանաւոր:

գ. Ամերիկայի արտաքին գետերից և լճերից գլխաւոր-

ներն են. Կոլօրադո, Կոլումբիա, Մէկէնզի գետերը. Վերջին գետն է թափվում Աֆապասքի, Մեծ Դերեաց և Մեծ Արջի լճերի աւելորդ ջրերը: Սասկաչաւան գետը, որ մտնում է Մեծ Վինիփէդ լճի մէջ և միւս կողմից դուրս է գալիս Նէլսոն գետը, Սուրբ Լաւրէնտիոսի գետը, որ Վերին, Հուրօն, Միջիգան, Էրի և Օնտարիօ անուշ լճերի միմեանց մէջ թափուած ջրերիցն է գոյանում: Հուրդան գետ, Միսսիսիլի գետ՝ սա աշ կողմից ընդունում է Միսսուրի, Կարմիր և Արկանզաս վտակները, իսկ ձախ կողմից՝ Օհիօ և Իլինոյիս: ՈՒիո-Դէլ-Նօրթէ գետը, Օրինօկօ, Ամազօն կամ Մարանոն՝ սա Ամերիկալի ամենաերկայն, իսկ ջրաբաշխովն աշխարհիս ամենամեծն է. սա մօտ 5,000 վերստ նաւարկելի է: Ամազօնի բազմաթիւ ձիւզերից ամենամեծերն են. ձախ կողմից՝ ՈՒիո-Նէգրօ, իսկ սորա մէջ թափվում է Կասիքվարի գետակը, որ միացած է նոյնպէս և Օրինօկօլի հետ, որով Ամազօնը և Օրինօկօն բնական ջրանցքով կապուած են միմեանց հետ: Աշ կողմից Ամազօնի մէջ թափվում է ՈՒիո-Մադէլրա՝ նորա ամենամեծ ձիւզը: Արծաթեոլ կամ ՈՒիո-Դը-Լափլատա, որ կազմվում է Պարանա, Փարագուա և Աւրուգուա գետերից:

Ներքին գետերից և լճերից նշանաւորներն են՝ Մեծ Արդի և Թիթիկական լճերը, Վերջինիս մակերեւովիթը ովկիանոսի մակերեւովիթից Յ վերստ բարձր է:

Ամերիկայի շրջապատող երեք ովկիանոսներից որի՞ մէջ է շատ գետ թափվում:

Ի՞նչու Մեծ Ովկիանոսի մէջ քիչ գետ է թափվում:

Օգտաւէ՞տ է արդիօք Ամերիկային, որ նորա գետերի մեծ մասը թափվում են Ատլանտեան ովկիանոսը: Օգտաւէ՞տ կը լինէր, եթէ նորա ամենամեծ գետերը Մեծ ովկիանոսի մէջ թափուէին:

Աշխարհների ո՞ր մասին աւելի նմանում է Ամերիկան՝ իւր գետերի կազմութեամբ և նոցա ցամաքի մէջ ունեցած ընթացքի երկարութեամբ:

Ամերիկայի՞ թէ Խւրոպայի մէջ աւելի յարմարութիւնով կարող կը լինինք մի ափից միւսը նաւարկել գետերի վերայ և ի՞նչու: Երեխի կարելի կը լինէր Ամերիկայի մի ծալրից միւս ծայրն անցնել գետերով այնպէս, ինչպէս որ Խւրոպայի մէջ, Ցիշել Ամերիկայի մակերեւոյթի կազմութիւնը և ասել թէ ո՞րքան խոր և ո՞րքան պարզ պիտի լինին նորա գետերը՝ Համեմատելով Աֆրիկայի, Ասիայի պարզ պիտի լինին նորա գետերի հետ: Ցիշեցէք Ամերիկայի ափերի յատկութիւնները և ասացէք թէ ո՞րքան մատչելի են նոքա՝ Համեմատելով Աֆրիկայի, Ասիայի և Խւրոպայի ափերի հետ:

Ասիայի ո՞ր լճին կարելի է նմանացնել Թիթիկակա լիճը իւր բարձրութեամբը: Ի՞նչ բնական ջրանցք կայ Ամերիկայում: Ամերիկայի ո՞ր կողմերն են գտնվում լճերի շաբքը և ի՞նչ պատճառով են նորա այն կողմը լսմբուած:

Ե. Աւստրալիալի արտաքին գետերից և լճերից ամենաշանաւորներն են. Մուըրէ գետն՝ աջտկողմեան Դարլինգ ճիւզով և Կարապի գետ: Մեծ լճեր չկան, եղած լճերն էլ մշտական ափեր չունին, նոքա փոփոխական են՝ անձրւալին եղանակներում երկրի ներսերը գոյանում են ընդարձակ լայնածաւալ լճեր, իսկ ամառը՝ երաշտ եղանակին, համարեա թէ մեծ մագնիում են և սահիճներ են գառնում:

Իւր ներքին ջրերի կողմից առաւել ո՞ր աշխարհին է նմանում Աւստրալիան: Ցիշել նորա մակերեւոյթի կազմութիւնը և ափերի գծագրութիւնը:

ԿԼԻՄԱ, ԲՈՒԾՈԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵՆԳԱՆԻՔ:

Մի տեղի օդի տաքութեան, ցրտութեան, չորութեան և խոնաւութեան աստիճանն ասվում է հէիմայ: Երկրիս ամեն կողմերում կլիման միակերպ չէ. մի երկիր ո՞րքան մօտ է Հասարակածին՝ այնքան նա տաք է և ո՞րքան հեռու է Հասարակածից՝ այնքան նա ցուրտ է: Եւ կամ թէ մի երկիր ո՞րքան մօտ է ծովին՝ նորա տաքը և ցուրտը չափաւոր են լինում,

իսկ ծովից որքտն հեռու է՝ այնքան ցուրտը և տաքը խիստ են լինում: Առհասարակ Աշխարհագրութեան մէջ երկու կլիմայ է ընդունուած, այն է՝ յահաճային և ծռվային:

Յամաքալին կլիման չոր է, իսկ ծովայինը—խոնաւ:

Թէ ցամաքալին և թէ ծովային կլիմաները զանազան ընական պատճառներից ստիպուած՝ լինում են կամ ցուրտ, կամ բարեխառն և կամ պարագաները:

Երկրիս վերայ բոլոսերի և կենդանիների դասաւորութիւնն էլ կախուած է կլիմայից և այս շատ զգալի կերպով է նշանակում: Հասարակածից գէպի բևեռները՝ բոլոսերը և կենդանիները հետզհետէ նուազում են: իսկ բևեռներից գէպի Հասարակածը՝ ընդհակառակն աճում են: Այսպէս և մի սարի վերայ նորա ստորոտից գէպի վեր բուսականութիւնը նուազում է: Ի հարկէ՝ մի սար որքան Հասարակածին մօտ գտնուի, նորա բուսականութիւնն էլ այնքան ճոխ և բազմատեսակ կըլինի:

Գիտնականները երկրիս մակերևութը բաժանում են 8 բուսականութեան գոտիների, այս կարգով.

ա. Հասարակածային գոտի, որ տարածվում է 15° հիւսիսային լայնութիւնից մինչև 15° հարաւային լայնութիւնը:

բ. Արևարձային գոտի՝ 15°-ից մինչև 23½° հիւսիսային և հարաւային լայնութիւնների մէջ:

գ. Ընդարձաւարչային գոտի՝ 23½°-ից մինչև 34° հիւսիսային և հարաւային լայնութիւնների մէջ:

դ. Տարբերէինան գոտի՝ 34°-ից մինչև 45° հիւսիսային և հարաւային լայնութիւնների մէջ:

ե. Յուրաքանչեառան գոտի՝ 45°-ից մինչև 58° հիւսիսային և հարաւային լայնութիւնների մէջ:

զ. Ընդարձաւարչային շրջանային գոտի՝ 58°-ից մինչև 66½° հիւսիսային և հարաւային լայնութիւնների մէջ:

է. Բևեռային շրջանային գոտի՝ 66½-ից մինչև 72° հիւսիսային և հարաւային լայնութիւնների մէջ:

ը. Բևեռային գոտի՝ 72°-ից հիւսիսային և հարաւային լայնութիւնից մինչև բևեռները:

Տաք գոտու սարերի բուսականութիւնը բաժանվում է նոյնպէս 8 գոտիների:

ա. Բանանների և աղածակների գոտի, որ տարածվում է ծովի մակերևութից մինչև 270 սաժէն բարձր:

բ. Մշտաբայուր ձարխոտի գոտի և թզենիք՝ ծովի մակերևութից 270—550 սաժէն:

գ. Մրգանեաց և բանինեաց գոտի՝ 550—815 սաժէն:

դ. Մշտաբայուր տերեւալից ծառերի գոտի՝ 815-ից—մինչև 1,100 սաժէն:

ե. Երրորդայի աերիստուից ծառերի գոտի՝ 1,100-ից—1,350 սաժէն:

զ. Փշտիկն ծառերի գոտի՝ 1,350-ից—1,625 սաժէն:

է. Թռութիրի գոտի՝ 1,625-ից—1,900 սաժէն:

ը. Լեռային բոլոսերի գոտու տակ գտնուած սարերն ունին բուսականութեան ութ գոտիները. իսկ մի սար որքան հեռու լինի Հասարակածից՝ բուսականութեան աստիճանը նախընթացից մի մի գոտի կըլակասի:

Միենոյն բոլոսը՝ եթէ սարը՝ հիւսիսային կիսագնդումն է, նրա հարաւային փեշերի վրայ համեմատաբար աւելի բարձր տեղերը կածի, քանիթէ նոյն սարի հիւսիսային փեշերի վրայ. իսկ հարաւային կիսագնդի մէջ ընդհակառակն է լինում:

Բուսականութեան պէս են և կենդանիներն ու թռչունները. Հասարակածից որքան գէպի բևեռները դնանք, նոցատեսակները կըսակաւանան ու փոքր և չեղ կըլինին (բացառութեամբ հիւսիսային ալթից). իսկ բևեռներից որքան մօռութեամբ հիւսիսային կենդանին՝ կենդանիները նոյնքան բազմատեսանք Հասարակածին՝ կենդանիները նոյնքան բազմատե-

սակ, կատաղի և խոշոր կըլինին։ Այնպէս են և թռչուններն ու սողունները։ Բարեխառն գոտու մէջ ընտանի կենդանիները շատ լաջողութեամբ են զարգանում։

Երկրիս վերայ օդի զանազանութիւնն ի՞նչ է կոչվում։

Ի՞նչ բանից է կախուած կլիմայի արքերութիւնը։

Տաքը դէպի բւեռները և ցուրտը դէպի ձասարակածը տաքածելուն ի՞նչն է օգնում։ Լեռնաշղթաները տաք և ցուրտ տարածելուն ի՞նչ նշանակութիւն ունին։

Ովկիանոսների մօտ երկրներն ի՞նչ կլիմայ ունին, չեռու տեղերն ի՞նչ։

Ովկիանոսների խոնաւութիւնն ի՞նչ միջոցով է տարածվում ցամաքների վերայ։

Իսկ լեռնաշղթաներն ի՞նչ դեր են խաղում այդ գործում։

Որոշեցէք իւրաքանչիւր մայր ցամաքի և աշխարհի կլիմաները՝ առանձին-առանձին, ունենալով ի նկատի իւրաքանչիւրի աշխարհագրական դիրքը, ափերի շատ կամ քիչ կեռմանութիւնները, մակերևոյթի կազմութիւնները, ծովերի հոսանքների և հողմերի ուղղութիւնները։ Ի՞նչ տարբերութիւն կայ Արեելեան և Արևմտեան աշխարհների արեմտեան ափերի կլիմայի և նոյն աշխարհների արեելեան ափերի կլիմաների մէջ։ Միւկնոյն բոյսը Եւրոպայի արեելեան թէ արեմտեան կողմն աւելի բարձր լայնութեան սարիճանի տակ կաձի։ Ի՞նչու Եւրոպայի արեմտեան կողմն աւելի տաք է քանթէ արեելեանը։

Բուսականութիւնը ո՞ր գոտում աւելի զարգացած է։ Երկրիս բուսականութիւնը քանի՞ գոտու է բաժանվում։

Հասարակածի կամ տաք գոտու մի բարձր սարը քանի՞ բուսականութեան գոտու կարելի է բաժանել։ Կենդանիները և թռչունները ո՞ր գոտում սակաւաթիւ և հեղ են և ո՞ր գոտումը բազմատեսակ և կատաղի։

Մ Ա Ր Դ :

Մարդս դիմանում է ամենատօթ տաքին և ամենախիստ ցըտին, որի շնորհով նա երկրագնդիս ամեն կողմերը ցըուած ապրում է։

Կլիման և երկրի դիրքը մարդկանց միմեանցից զանազաննել են դէմքի գծագրութիւնով, մորթու գոյնով և ապրուստի տեսակով։ Մարդիկ միմեանցից զանազանվում են նաև լեզուով, կրօնքով և բնաւորութիւնով։

Դէմքի գծագրութիւնով և մորթու գոյնով երկրիս բնակիչները (մօտ 1400 միլիոն) հինգ գլխաւոր ցեղի են բաժանվում (ըստ Բլիւմէնբախի)։

ա. Կալկանէտն ցեղ՝ (որ թուով 496 միլիոն է) կաշու գոյնը սպիտակ և երեմն թուխ է, գանգը ձուածե, ճակատն ուղիղ է և բարձր, բերանը չափաւոր, հասակը միջակ, շըռթունքները բարակ և վարդագոյն, կզակը կլոր, մազերը մետաքսանման և փափուկ, գոյնով թուխ՝ հարաւալին կողմերը, և շէկ՝ հիւսիսալին կողմերը, աչքերը ձուածե դասաւորած ուղիղ գծի վերայ։ Սա մարդկութեան ամենագեղեցիկ և ամենասրամիտ ցեղն է։ Այս ցեղի հալրենիքն է Եւրոպան, արևմատեան Ասիան և հիւսիսալին Աֆրիկան։ սակայն նա աշխարհիս միւս մասերում շատ գաղթականութիւններ հիմնելով, ապրում է խառն միւս ցեղերի հետ։ Այս ցեղին պատկանում են Ասիայում՝ Հայերը, Պալսիկները, Հրէալք, իսկ Եւրոպայում բոլոր ազգերը, բացի նորա հիւսիսալին կողմն ապրող միքանի մանը ազգերից, որոնք Մօնղոլեան ցեղին են պատկանում։

բ. Մօնղոլէտն ցեղ (530 միլիոն), սա ամենաբազմաթիւ ցեղն է։ սորա մորթը գեղնագոյն է, սև և նոսր մազերով, գրեթէ քառասկիւնի գանգով, լայն և տափակ դէմքով,

քիթը բութ, քունքերը դուրս ցցուած, աչքերը նեղ և գէպի քիթը ծռուած, շրթունքները հաստ և կզակը դուրս ընկած:

Այս ցեղին պատկանում են Թաթարները և Սիրիակալի հիւսիսալին կողմն ապրող բազաթիւ ազգերը՝ Մօնղուները, Զինացիք, ծափօնները, Թիւրքմէնները և այլն: Այս ցեղի հայրենիքն է Ասիայի հիւսիսալին, միջին և տրեելեան մասերը, նոյնպէս և Եւրոպայի ու հիւսիսալին Ամերիկայի հիւսիսալին կողմերը:

գ. Ելովական կամ Աֆրիկայի և կամ խափշիկների ցեղ (250 միլիոն), սորա կաշու գոյնը սե է, մազերը սե, կարճ, կարծը և խոպոպիկ, գանգը երկայնաձև, քունքերն ու կզակը դուրս ցցուած, քիթն ուռած, շրթունքները հաստ և դուրս ծռուած: Այս ցեղն ապրում է Աֆրիկայի միջին մասերում և Մադագասքար կղզու արևմտեան կողմը:

դ. Մալայական ցեղ (103 միլիոն), սորա կաշին շագանակագոյն կամ ձիթագոյն է, գանգը ձուաձև, մազերը սե ու սահուն, քիթը տափակ և դուրս ուռած, աչքերը քիթից հեռու, շրթունքները հաստ, կզակը շատ կամ քիչ դուրս ցցուած: Այս ցեղն ապրում է ընդհանրապէս ձնդկաց և Մեծ ովկիանոսների կղզիների վերալ, Մադագասքար կղզու արևելեան կողմը և Ասիայի հարաւարեելեան կողմը:

Մալայան ցեղի նման, միայն շատ սե գոյնով և լայն երեսով մի ցեղ կալ, որ մարդկային բոլոր ցեղերից ամենատգեղ և ամենատգէտն է. նա վայրենի է և մարդակեր: Նորա մի տեսակը կոչվում է Պապուա, որի հայրենիքն է Նոր-Ֆիլինէա, Նոր-Հոլանդա և Նորանց մօտ միքանի կղզիներ:

ե. Ա.Ն.Ի.Հ. ցեղ (13 միլիոն), սա բոլոր ցեղերից սակաւաթիւ է, կաշին պղնձագոյն է, մազերը սե, երկայն և փալլուն, դէմքը լայն, քունքերը դուրս ցցուած, աչքերը միմեանցից հեռու, մօրուքը նոսր և ճակատը նեղ: Այս ցեղն

ապրում է միայն Ամերիկայի մէջ և հետզհետէ սակաւանում է: Սորա մի տեսակը կոչվում է Բատօսանէր (խօօզաքանէր) որ խեցի է նշանակում: Նորանք այսպէս են կոչվում, որովհետեւ նոքա իրանց շրթունքներից և ականջներից իբրև զարդ՝ խեցիաձև փայտի կտորներ են կախում:

Մալայեան, Եթովպական և Ամերիկայի ցեղերի մէջ կան ազգեր, որոնք իւրեանց մարմնու և երեսի վերայ սուր գործիքներով գծագրում են զանազան կինդանների, բոյսերի, թըռչունների և այլ շատ բաների պատկերներ ու լետոյ վէրքի վերայ գոյնզգոյն նիւթեր ածելով՝ առողջացնում են, բայց գծագրութիւնները միշտ մնում են անջնջելի: Այս գծագրութիւնը երկու սեռերն էլ անխտիր անում են. ում դէմքի կամ մարմնու վերայ կան շատ և նուրբ գծագրութիւններ, նա համարվում է ազնուական և գեղեցիկ անձն:

Բացի լիշիալ հինգ ցեղերից, կան և այլ կազմուածքով ու գծագրութիւնով փոքրիկ ցեղեր էլ. նորանք սակաւաթիւ են. զորօրինակ՝ Ֆիլիպպեան կղզիների վերայ կան բոլորովին վայրենի և գժուար ընտելացող մարդիկ: Նոյնպէս և վերջին ժամանակները չնդկաստանի գժուրամատչելի սարերի մէջ գտած են վայրենի մարդիկ, որոնց ոտները և ձեռներն անհամեմատ երկայն են. գունչը դուրս ցցուած, իբրև ցռուկ, ճակատի լայնքը մի մատ, բայց՝ հեգաբարոյ, աշխատասէր և շուտ ընտելացող: Այս երկու ցեղերի մասին մանրամասն հետազօտութիւններ գեռ չեն արուած:

Ապրուստի եղանակին նայելով՝ մարդիկ լինում են լատառական և հասպատական:

Թափառական ասվամ են այն մարդիկ, որոնք իւրեանց բնակութիւնը տեղից տեղ են փոփոխում. նոքա ապրում են կաշուց կամ թաղիքից շինած վրանների տակ, որի պատճառով կոչվում են նաև Արանական: Ժողովուրդ: Սոցա միակ և գլխաւոր ապրուստը խաշնարածութիւնն է:

Թափառականների կարգում են և այնպիսի ժողովուրդներ, որոնք ոչ հօտեր ունին և ոչ վրանաբնակների ո՞րքան եիցէ կանոնաւոր ապրուստը, այլ նոքա շըջնլինէր և վայրէնինէր են, ապրում են որսորդութիւնով, ձկնորսութիւնով և ոմանք էլ մարդակերներ են:

Հաստատիքնաշախ ասվում են այն մարդիկ, որոնք մշտապէս մի տեղ են ապրում:

Իւրաքանչիւր մարդու գլխաւոր հոգսն ու ջանքն է, չնայելով թէ նա վայրենի, թափառական և կամ հաստատաբնակ է, որ արդիւնաբերէ իրան համար աւելի կամ պակաս չափով այն, ինչ որ իւր կեանքը և գոյութիւնը պահպանելու համար հարկաւոր է, այն է՝ կերակուր, տուն և հագուստ:

Մարդս իրան հարկաւոր պիտուքները զանազան միջոցներով է հայթհայթում, այն է՝ բնական պատրաստածք գանելով, կամ չետքի աշխատանքով և կամ մեքենաների օգնութիւնով՝ գործարաններում պատրաստելով:

Մարդուս ապրուստի զանազան ճիւղերն են՝ որսորդութիւն, ձկնորսութիւն, անտառաբուծութիւն, մեղուաբուծութիւն, երկրագործութիւն, ալգեպանութիւն, անասնապահութիւն, հանքագործութիւն և ուրիշ շատ տեսակ միջոցներ:

Գործարաններում մեքենաներով գործում են՝ քաման, մահուդ, մետաքսեղէն. պատրաստում են՝ թուղթ, կաշեղէն, յախճապակեղէն, բամբակէ և երկաթէ գործուածքներ, նոյնպէս և շաքար և ուրիշ շատ ու շատ բաներ:

Պատահում է որ թէ հում և թէ մշակուած նիւթեղէններ մէկի մօտ շատ է լինում, իսկ միւսի մօտ սակաւ և կամ թէ ամենևին չէ լինում, բայց նրանում նա պէտք ունի. այս կարիքից հետևում է մարդուս համար երրորդ կերպ զբաղմունք կամ արդիւնաբերութիւն, այն է՝ մէսալածառութիւն, կամ առաջարկութիւն:

Մարդիկ իւրեանց ստացած բերքը բանացնելուց և կամ

լաւ է ասել, իւրեանց կարիքը հոգալուց յետոյ, աւելացած և կամ գործարանների մէջ պատրաստած նիւթերը միմեանց հետ պայմանաւում էն և կամ թէ գրամով վաճառաւում են: Այսպիսի գործը կոչվում է առեւտուր կամ վաճառականութիւն, իսկ նորանով պարապողը՝ վաճառական, առաջարկութիւն:

Վաճառականութիւնն ասվում է նէրին կամ յանաչային եթէ նա լինում է մի տէրութեան ներքին երկիրների կամ նորա մասերի մէջ, և արագին՝ եթէ լինում է ուրիշ տէրութիւնների հետ:

Եթէ վաճառականութիւնը ծովեզերեալ տէրութիւնների կամ քաղաքների մէջ կատարուի՝ կասուի ծռացին վաճառականութիւն, իսկ եթէ ցամաքային տէրութիւնների կամ քաղաքների մէջ կատարուի՝ կասուի յանաչային վաճառականութիւն:

Հաստատաբնակ մարդիկ ոչ միայն մեծ հոգս են տանում իւրեանց ապրուստը գտնելու միջոցները գիւրացնելու, այլև մեծ ուշադրութիւն են դարձնում մարդկային ցեղի մտաւոր զարգացման վերայ էլ, որի շնորհով մարդուս միտքը և հոգին կրթվում և կատարելութեան է հասնում: Այս ձգտումից ծագում է մարդուս համար մի այլ գործունէութեան եղանակ: Այսպէսով՝ նա պարապում է տեսակ-տեսակ գիտութիւններով, գեղարուեստներով, արհեստներով, լեզուագիտութիւններով և այլն, որոնց կրթութեան համար հաստատուած են բազմատեսակ հիմնարկութիւններ: Նորանցից իւրաքանչիւրն ունի իւր ուղղութիւնը և անունը, թէև նըպատակը մի է, այն է՝ մարդկային սերունդը կրթել՝ շատ կամ քիչ սահմաններով:

Մտաւոր զարգացման հիմնարկութիւնները հետևեալներն են՝ ծխական ուսումնարան, ժողովրդական ուսումնարան, մարզարան, հոգեւոր ուսումնարան, լիկէօն, համալսարան (գիտութեան զանազան ճիւղերի մասնագիտական բարձր

ուսումնարան), ճեմարան գեղարուեստների, հոգևոր, նաւուղղութեան, գիւղատնտեսութեան, ևայլն ևայլն:

Մարդ աշխարհիս ո՞ր կողմը կարող է ապրել. Մարդիկ քանի՞ գլխաւոր ցեղերի են բաժանվում:

Կովկասեան ցեղի դէմքի գծագրութիւնն ի՞նչպէս է և ո՞ւր է ապրում:

Մօնղօլեան ցեղն ի՞նչպէս է և ո՞ւր է ապրում:

Եթովպականն ի՞նչպէս:

Մալայեանն ի՞նչպէս:

Մարդակեր վայրենիները ո՞ր ցեղին են պատկանում:

Ամերիկայի ցեղն ի՞նչ գոյնով և գծագրութիւնով է:

Ո՞ր ցեղի մարդիկ իրանց մարմնի վերայ զանազան՝ գծագրութիւններ են քաշում:

Բացի հինգ գլխաւոր ցեղերից ուրիշ էլ ի՞նչ տեսակ մարդիկ կան:

Ապրուստի եղանակով մարդիկ ի՞նչպէս են բաժանվում:

Ո՞ր մարդիկը կոչվում են թափառական, որո՞նք շրջմոլիկ և ո՞րո՞նք հաստատաբնակ:

Իւրաքանչիւր մարդու գլխաւոր հոգսն ի՞նչ է:

Մարդը իւր պիտոյքներն ի՞նչ միջոցներով է հայթայթում:

Մարդիս ապրուստի տեսակի գլխաւոր ձիւղերը ո՞րո՞նք են:

Գործարաններում ի՞նչ բաներ են պատրաստում:

Ի՞նչից է ծագում վաճառականութիւնը:

Նորա ո՞ր տեսակն է կոչվումներին, ո՞րը արտաքին, ո՞րը ցամաքային և ո՞րը ծովային:

Հաստատաբնակ մարդիկ ուրիշ ի՞նչ բանի վերայ են դարձնում իրանց ուշագրութիւնը. Կրթութեան համար ի՞նչիմարկութիւններ կան:

Կ Ր Օ Ն Ք :

Երկրագնդիս վերայ ապրող բոլոր մարդիկ, ոմանք շատ և ոմանք սակաւ հասկացողութիւն ունին մի Գերագոլն էա-

կի վերայ: Այս հասկացողութիւնները շատ զանազանակերպ են. նորանց կարելի է երկու գլխաւոր կարգերի բաժանել՝ Միասպատածէանք և բաշխապատածէանք կամ հասպաշաք:

Կուապաշտութիւնը տիրում է երկրիս վերայ շատ ու շատ հին ժամանակներից. նա ունի շատ տեսակներ. ամենագլխաւորը և ամենատարածուածը Բրահմանէանն է, որը ունի երեք գլխաւոր չաստուածներ՝ Բրահմ, որ է արարիչը, Վիշնու՝ պահպանողը և Սիլա՝ քանդողը: Այս կրօնի գլխաւոր վարդապետութիւններից մէկն էլ հռգէիրիութիւնն է (Հնդկացիք):

Բրահմականութեան ամենագլխաւոր հերձուածն է Բրահմանէանն էլ (Զինացիք, ծափոնացիք և ալլն): Մնացեալ կուապաշտները պաշտում են այն ամենը, ինչ բանից որ օգուտ են տեսնում, սուսկում են և կամ վախենում են, ինչ-պէս պաշտում են արևը, լուսինը, աստղերը, կայծակը, կրակը, զանազան կենդանիներ, կան որ պաշտում են նոյն-պէս փալտէ կոճղերից շինած կուռքեր, որոնց Փորթուգալացոց բառովը կոչում են ֆէտիսօ — fetisso, որ նոյն կընշանակէ:

Միաստուածեան կրօնները սրանք են՝ Քրիստոնէութիւն, Հրէութիւն, և Մահմէտանութիւն:

Քրիստոնէութիւնն ունի զանազան դաւանանքներ, որոնց գլխաւորներն են՝ Լուսուառչական կամ Առաքելական եկեղեցի, Յոհաննէութան եկեղեցի կամ Կայուլիութիւն, Հառովնէական եկեղեցի կամ Սորոյանութիւն: Սորանք բոլորն էլ և Լուտերանութիւն կամ Բաղդահանութիւն: Սորանք բոլորն և զանազանվում են միմեանցից իրանց վարդապետութիւնովը և ծէսերովը:

Քրիստոնէութիւնը դաւանում են գրեթէ բոլոր Եւրոպական ազգերը, ինչպէս Եւրոպայի մէջ, այնպէս էլ ուրիշ երկիրներ գաղթողները, նոյնպէս և Արևմտեան Ասիայի մէջ միքանի ազգերը:

Մահմէտականութիւնը, որ երկու գլխաւոր հերձուած

ունի (Սիւնի և Շիա), տարածուած է Ասիայի Հարաւարեմտեան և Աֆրիկայի հիւսիսային կողմերու:

Բրահմականութիւնը և Բուդայականութիւնը՝ —Ասիայի հարաւային և արևելեան կղզմերը, իսկ կռապաշտութեան այլ տեսակները գտաւանում են Ամերիկայի բնիկները, Ովկիանուու ազգերը և Աֆրիկայի բնակիչների մեծ մասը:

Հըէաները երկու գլխաւոր հերձուածի են բաժանուած, Թալմուտականներ և Մովսիսականներ. նոքա տարածուած են աշխարհիս ամեն կողմբ:

Կռապաշտները թուով 830 միլիոն են, որից 160 միլիոնը բրահմինականներն են, Մաշմետականները 158 միլիոն, Հրէաները 5 միլիոն և Քրիստոնեաները 390 միլիոն. սոցանից 185 միլիոնը Կաթոլիկներն են, 115 միլիոնը բողոքական, 85 միլիոնը Յունադաւան և 5 միլիոնը Լուսաւորչական հայեր:

Երկրիս բնակիչները կազմում են զանազան ազգութիւններ. նոցանից իւրաքանչիւրն ունի իւր առանձին լեզուն ու բարեառը: Գլխաւոր լեզուները հաշվում են մինչև 860, որոնցից 53ը եւրոպայի մէջ, 153ը Ասիայի, 115ը Աֆրիկայի, 422ը Ամերիկայի և 117ը Ովկիանու մէջ են. իսկ երկրորդական լեզուները հաշվում են մինչև 5,000:

Սարգկանց Գերադոյն էակի վերայ ունեցած հասկացողութիւնը միակ ըպակ է արդեօք:

Կոապաշտութեան գյխաւոր բաժանմունքները ո՞րոնք են:

Քրահմինականները քանի՞ գլխաւոր չաստուածներ ունին և
ուրիշի՞նչ չեն ըանի են Հաւատում:

Միւս հեթանոսներն ի՞նչ բաներ են պաշտում։

Միաստուածեան կրօնները ո՞րոնք են

Քրիստոնէութեան գլխաւոր Ճիւղերը ո՞րոնք են:

Կւրաքանչիւր կրօնը երկրիս ո՞ր մասերի վերայ է տարածուած։

Բւրաքանչիւր կրօնից ո՞լքան ժողովուրդ կայ:

Մի լեզուո՞վ են խօսում արդեօք երկրիս բնակիչները
քանի՞ ու իսպահ կ եռելուահան ի հասներ կան:

Գանի գլխաւոր և երկրորդական լեզուներ կան

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ:

Հաստատաբնակ մարդիկ ապրելով մի որոշեալ հողի
տարածութեան վերայ՝ անդորր ու խաղաղ կեանք և կանո-
նաւոր արդիւնաբերութիւն ունենալու, նոյնպէս և մտաւոր
գարգացմամբ պարապելու համար՝ իւրեանց մէջ սահմանած
են մի բարձրագոյն վարչութիւն կամ նշանակած են մի իշ-
խան՝ երկրի կառավարիչ, ու կազմած են տէրութիւն։ Նորա
դրած օրէնքներին և կարգերին հնագանդում ու նորա պահ-
պանութեան համար սահմանած հարկը վճարում է նոյն
տէրութեան մէջ ապրող ժողովուրդը, որը և ասվում է
Դպրութիւն։

Տէրութիւնները իրացից զանազանվում են հողի տարածութիւնով, ընակիչների քանակութիւնով և պետական վարչութեան տեսակով:

Հողի տարածութիւնով տէրութիւնները միաչափ չեն.
կայ տէրութիւն, որի հողը շատ փոքր է, Թիֆլիզի գաւառի
կիսի չափ, բայց կան նաև այնպիսի տէրութիւններ էլ, ո-
րոնք Եւրոպակի չափ են և կամ նըանից աւելի մեծ են.
Զորօրինակ՝ Ուուսաստանը երկրագնդիս ցամաքի $\frac{1}{6}$ մասն է
բռնում: Տէրութիւնների բնակիչներն էլ միաչափ չեն. կան
տէրութիւններ, որոնց բնակիչների թիւը Թիֆլիզի նահան-
գի բնակիչների թուի չափ է. բայց և կան այնպիսի բագ-
մածարդ տէրութիւններ, որոնց բնակիչների թիւն աշխար-
հիս վերայ ապրող մարդկանց $\frac{1}{3}$ մասիցն էլ շատ է, ինչպէս
Ասիայի մէջ Զինաց տէրութիւնը:

Տէրութեան կառավարութիւնները կարելի է երկու տեսակի բաժանել՝ Միապետութիւն և Հանրապետութիւն:

Միասէտական վարչութիւնը կոչվում է սահմանադրութեան, եթէ նորա վարչութեան իրաւունքը սահմանափակուած է

օրէնսդիր և ժողովրդեան ընտրած պատգամաւորների ժողովներով, որոնց վճիռների լուծելը վերապահվում է թագաւորին: Այսպէս են Եւրոպայի տէրութիւններից շատերը: Ասվում է նա առաջնահան ինքնաշարութիւնն, եթէ տէրութեան իշխանը կամ թագաւորն անսահման իշխանութիւնով իւր ընտրած հաւատարիմ անձերից բաղկացած պետական խորհրդարանի ձեռով է կառավարում ժողովուրդը, այսպէս է՝ Ուուսաց տէրութիւնը: Իսկ եթէ մի տէրութեան կառավարչը բոլորովին ազատ կամ բացարձակ իշխանութիւնով կամ իւր հեղինակութիւնովը կառավարի իւր ժողովուրդը՝ կառուի բացարձակ կառավարութիւն. այսպէս են՝ Ասիայի, Աֆրիկայի և Ովկիանիալի տէրութիւնները:

Միապետական տէրութիւնների գլխաւոր կառարարիչները կրում են զանազան տիտղոսներ. ինչպէս՝ Կայուր, Թագար, Մէծ Թուռա, Խշան, Սուլլան, Շահ, Շէյխ, Իմամ և ալլն: Տէրութիւններն էլ ըստ այնմ են կոչվում:

Հանրապետական կամ հասարակապետական տէրութիւնը կառավարվում է ժողովրդի ընտրած պատգամաւորների խորհրդով, որի առաջնորդողը լինում է նոյն պատգամաւորներից՝ ձայնի առաւելութեամբ ընտրած ժամանակաւոր նախագահը, ինչպէս՝ Հիւսիսալին Ամերիկալի նահանգների հանրապետութիւնը, Ֆրանսիալի հանրապետութիւնը:

Պատահում է որ միքանի միապետական կամ թէ հասարապետական տէրութիւններ միանում են միքանի գլխաւոր խնդիրների մէջ ու կազմում են մի ուժեղ զօրութիւն. այս միութիւնը կոչվում է Պաշտոնական Այսպէս են, օրինակ՝ Եւրոպայի մէջ Զուիցերիալի դաշնակցութիւնը, որ 22 կանթօններից (գաւառներից) է կազմուած, Գերմանիալի մէծ դաշնակցութիւնը, որ 24 տէրութիւններից է կազմուած, Հիւսիսալին Ամերիկալի Երեւելի Միացեալ-Նահանգների դաշնակցութիւնը և ալլն:

Հանրապետութիւնը լինում է առնելուական, եթէ պատգամաւորները ուամիկներիցը կամ ժողովրդի հասարակ դասիցն էլ են ընտրվում, և աշխատապետական, եթէ պատգամաւորները բացառապէս ազնուականներիցն են:

Տէրութիւնը հեշտ ու յարմար կառավարելու համար նորան միքանի մասերի են բաժանում, որոնք աստիճան առ աստիճան միմեանցից բարձր են լինում և իրանց նշանակութեանը համեմատ անուններ են ունենում. զորօրինակ՝ Ուուսաց տէրութիւնը բաժանվում է փոխարքայութիւնների, նահանգների, վիճակների, գաւառների և շինական հասարակութիւնների:

Միքանի ընտանիք միմեանց կից ընակութիւններ հաստատելով՝ կազմել են գէ-շ, մեծը՝ շէն կամ գէ-ստանշտ, իսկ նորանից էլ մեծը՝ ուր և գտնվում է նորա և արջակայ գիւղերի կառավարիչը, կոչվում է գաղաք:

Այն քաղաքը՝ որի մէջ գտնվում է մի տէրութեան կառավարութեան կենդրոնական վարչութիւնը, կոչվում է գէ-խուռական գաղաք, իսկ որի մէջ գտնվում է նահանգի կառավարիչը՝ Հանդական գաղաք՝ Գաւառական գաղաք: Այն քաղաքը՝ որի մէջ ընակվում է տէրութեան պետը կամ թագաւորը, կոչվում է Հայրածառական կամ աթուանիստ:

Քաղաքները կոչվում են նոյնպէս վաճառաշահ, ճարտար և այլն, նայելով թէ մի քաղաքի ընակիչների մեծամասնութիւնը ինչով է զբաղվում:

Ծովեղերեալ քաղաքը՝ որի մօտ նաւերը յարմար ու պահով կայարան են գանում ու հանգստանում են, կոչվում է Նաւահանգիստ: Նաւահանգիստն ասվում է պարերապահան, եթէ նա ամուր և պատերազմական յարմարաւոր դիրք ունի և որի նաւահանգստում կանգնում է պատերազմական նաւատորութիւնը. իսկ եթէ նաւահանգիստն առևտրական նպատակի համը. իսկ եթէ նաւահանգիստն առևտրական նպատակի համը.

մար է յարմարացրած՝ կոչվում է առևտութեան կամ լաճառաշահու ու բանակ:

Նաւահանգիստն ասվում է աղաք, եթէ օտար տէրութիւնների ապրանքն այն քաղաքը բերելու կամ վաճառելու համար, ժամանակաւոր կամ մշտապէս, ազատ է լինում տէրութեան սահմանեալ մաքսը վճարելուց:

Եթէ մի քաղաք շրջապատուած լինի ամուր պարիսպներով, խրամատներով և աշտարակներով՝ կասուի բերդաշտալուտ. նորա մէջ առաւել ամուր դիրք ունեցող բերդը կասուի մջնաբերդ, իսկ փոքրիկ, բայց ամուր և յարմար դիրք ունեցող բերդերը՝ որոնց մէջ ապրում են միայն հերթապահ կամ սահմանապահ զինուորները, ասվում են ամրոյնէր, մարտիցնէր և բշտուինէր:

Բերդաքաղաքները լինում են՝ յամային և ծովային:

Ծովերի եղերքներում տեղ տեղ, մանաւանդ վտանգաւոր ափերի մօտ, շինուած են բարձր աշտարակներ, որոնց գլխին գիշերները վառում են մեծ լոյս: Այն շինութիւնը կոչվում է փարոս. նորա մէջ ապրում են պահապաններ. եթէ նաւը, մառախուղի կամ ալէկոծութեան ժամանակ կորցնում է ճանապարհը կամ վտանգի է ենթարկվում, փարոսի պահպաններն աշխատում են օգնութիւն հասցնել նոցա, իսկ գիշերները նորա լոյսը շատ հեռու տեղ ծովից երեսում է: Փարոսի օգտակարութիւնը շատ հին ժամանակներից յայտնի է լուսաւորեալ աշգերին: Հին ժամանակները նշանաւոր էին Ալէքսանդրիաի, Հռոդոսի և Մեսինայի փարոսները, իսկ այժմ նոցա թիւը շատ ու շատ է:

Ի՞նչ է տէրութիւնը և ի՞նչ նպատակի համար է սահմանուած:

Մի տէրութեան մէջ ապրող ժողովուրդն ի՞նչ կ'ասուի:

Տէրութիւններն երարուց ի՞նչով են զանազանվում:

Հողի տարածութիւնով տէրութիւնները միաչափ են, թէ ոչ իսկ բնակիչների թուով ի՞նչպէս են:

Քանի՞ տեսակ կառավարութիւններ կան:

Ի՞նչ է միավետական ինքնակալութիւնը, սահմանադրական միապետութիւնը և բացարձակ միապետութիւնը:

Ի՞նչ է հանրապետութիւնը:

Տէրութեան կառավարիչներն ի՞նչ տիտղոսներ են կրում:

Ի՞նչ է դաշնակցութիւնը:

Տէրութիւնը հեշտ կառավարելու համար ի՞նչ են անում:

Ի՞նչ է գիւղը, աւանը և քաղաքը:

Ո՞ր քաղաքներն են ասվում գլխաւոր, որոնք մայրաքաղաք, նահանգական և գաւառական քաղաք:

Քաղաքներն ի՞նչ անուններ են կրում:

Ո՞ր քաղաքը կասուի նաւահանգիստ:

Նաւահանգիստը քանի՞ տեսակ է լինում:

Ո՞ր նաւահանգիստը կ'ասուի ազատ:

Ի՞նչ է բերդը, միջնաբերդը, դղեակը և մարտկոցը:

Ի՞նչ տեսակ բերդաքաղաքներ են լինում:

Ի՞նչ է փարոսը:

Հին ժամանակուայ փարոսներից նշանաւորները ո՞րոնք էին:

ՎԵՐՋ ԲՆԱԿԱՆ ՄԱՍԻՆ:

Հանդիպաբնակ, շրջաբնակ և հակոտնեայ:

Երկրիս բնակիչներն իրանց կացութեան համեմատ, երկրա-
գնդիս վերայ, կոչվում են՝ Հանդիպաբնակ, շրջաբնակ և հակոտնեայ:

Հանդիպաբնակ նրանք են կոչվում, որոնք միւլնոյն միջօ-
րէականի տակ են գտնվում, միայն մէկը հիւսիսային կիսա-
գնդում, միւսը՝ հարաւային, Հասարակածից հաւասար հեռա-
ւորութեամբ։ Այս տեսակ երկու կէտերումն էլ օրուգիշերը
միւնոյն համաչափութիւնը կ'ունենան, միայնթէ տարուալ
եղանակներն իրարու հակառակ կըլինին, այն է՝ երբ մէկ տեղ
լինի, միւս տեղ չետ կըլինի, կամ երբ մէկ տեղ գարուն
լինի, միւս տեղ աշտան կըլինի։

Շրջաբնակ նրանք են կոչվում, որոնք Հասարակածի որևէցէ
կողմը միւնոյն լայնութեան աստիճանում իրարուց 180
երկայնութեան աստիճանով հեռու լինին։ Այն կէտերը տար-
ուայ միւնոյն եղանակը և ժամերն են ունենում. միայն այն
տարբերութեամբ, որ մի տեղի համար երբ երեկոյեան 10 ժամն
է լինում, միւս տեղում լինում է առաւօտեան 10 ժամ։

Իսկ հակոտնեայ, կոչվում են նորանք, որոնք միւնոյն լայ-
նութեան աստիճանի տակն են ապրում, մէկը Հիւսիսային կողմը,
միւս Հարաւային, բայց այնպէս՝ որ նոյն երկայնութեան աստի-
ճանի մէկը երկրագնդիս մի երեսն է ընկնում, իսկ միւսը՝
միւս երեսը։

ԵՐԿՐԱԳՈՒՆԴ (ԳԼՈԲՈՒՍ):

Ա.

Երկրագունդը կամ գլօբուսը երկրիս ձևի նման մի գոր-
ծէք է, որ շինվում է փայտից, թղթից և այլ յարմարաւոր
նիւթերից։ Նորա վերայ նկարած են երկրիս երեսի վերայ
գտնուած ջրերը, ցամաքները, լեռնազօտիները, տէրութիւն-
ների և գլխաւոր քաղաքների տեղերը. սորանք բոլորն էլ աշ-
խարհագրական ցանցի մէջ են նկարուած։

Բ.

Երկրագնդի վերայ ութ նշանաւոր շրջանակներ կան՝
չորսը մեծ և չորսը փոքր։ Մեծ շրջանակներն են Հորիզոն,
Միջօրեական, Հաստրոպական և Ծիր խառարան։ Փոքր շրջանակներն
են՝ երկու արևարդարչները և երկու չեւեռային շրջանակները. կայ
և մի թիթեղեալ շարժական շերտ, որ կոչվում է բարձր-թէռն
չառարդ։ Չորս մեծ շրջանակներից Հասարակածն ու Ծիր խա-
ռարանը հաստատուն են, իսկ հորիզոնը և միջօրեականը
շարժուն ու փոփոխական են և այնպէս է յարմարացրած,
որ իրականի նման երկրիս իւրաքանչիւր մի կէտը իւր հո-
րիզոնն ու միջօրեականն ունենայ։

Գ.

Գլօբուսի վերայ հորիզոնը բայն ու տափարակ շրջանա-
կից է շինուած, վերան չորս զանագան գծեր նշանակած։

Այս գծերից մէկը ցուց է տալիս Զօդիակասի 12 կենդանակերպ-ները, ամեն մէկը 30 աստիճան բաժանուած. էրդրորդ գծի վերայ նշանակուած են կենդանակերպների անուններն ու ամսուայ օրերը. էրդրորդ գիծը 32 հաւասար կտոր է բաժա-նուած՝ հորիզոնի 32 կողմերի կամ հողմերի չափովը, ամեն մի կտորը $11^{\circ} 15'$ կամ $1,181\frac{1}{4}$ վերստի տեղ է հաշուած, և շրջարդ գիծն էլ 360 աստիճան է բաժանուած, որ չորս կտոր է արուած՝ 90-ական աստիճանով:

۹۲

Գլոբուսի առանցքի երկու բևեռների վերայ հաստատուած է պղնձեայ միջօրէականը, որ $4 \times 90 = 360$ մաս է բաժանուած (աստիճան): Առաջին կամ բարձրի 90 աստիճանները Հասարակածից կերթան մինչև հիւսիսային ու հարաւային բևեռները, իսկ երկրորդ կամ ցածրի 90 աստիճանները՝ հիւսիսային ու հարաւային բևեռներից ոկսած կերթան 90 աստիճան գէպի Հասարակածը:

b.

Գլոբուսի վերալ Հիւսիսային քեեռի ծալը պղնձեալ մի
փոքրիկ շրջանակ է դրվում, որ կոչվում է ժամկետ շրջանակ:
Նորա վերալ նշանակուած են օրուայ 24 ժամերը: Նորանով
իմացվում է մի քաղաքի միւսից ունեցած հեռաւորութիւնը,
նորանով գտնում են զանազան տեղերի օրուայ ժամը, արևի
ծագելու և մայր մտնելու ժամը, արշալուսի և վերջալուսի
տևողութիւնը, և անում են էլի ուրիշ շատ փորձեր:

9.

Նրբ ուզենանք միտեղի կամ քաղաքի գերքը հորիզոնին
յարմարեցնել, ասում ենք՝ գլոբուսը պէտք է ռշուել
- առաջ դպրոց մա Յանձնութեան աշխար և մա մարդ
ովանդապատ Առ- Յանձնութեան պատման մասն մասն
մաց քիչայապատ պարոց նար ուն չե լաւող ուր
ուսուց առ- պատման բայ մա բայ ու առաջ առաջ

Գլոբուսի վերայ մի տեղին երկայնութիւնն ու լայնութիւնը գտնելու համար պէտք է այն կէտը կամ քաղաքը միջօրէական շրջանակի տակ բներել ու դիտել, թէ միջօրէականի նոյն կէտի վերայ ինչ թիւ է գրուած, այն թիւը մեր վեր առած քաղաքի լայնութեան աստիճանն է, յետոյ գնդի վերայ նոյն քաղաքի միջօրէականովը դիտենք և Հասարակածի վերայ ինչ թիւ որ գրուած լինի, այն էլ նոյն քաղաքի երկայնութեան աստիճանն է:

Զորօրինակ. Թէ որ Թիֆլիսի լայնութիւնն ու երկայնութիւնը մեր ասածի նման ուղենանք գտնել կըդանենք՝ որ նա $41^{\circ} 43' - 1''$ հիսուսային լայնութիւն ունի և $62^{\circ} - 27' - 2''$ արևելեան երկայնութիւն ունի (Փերոյից)։ Կուկիայի կամուրջից հաշուելով Խօսկ եզրին օրինակ, ունի $40^{\circ} - 9' - 6''$ հիսուսային լայնութիւն և $61^{\circ} - 57' - 3''$ արևելեան երկայնութիւն։

6

Մի քաղաքի լայնութեան դիրքով գռւնդն սւզելու համար առաջ պէտք է ալն քաղաքը պղնձեալ միջօրէականի տակը տանել, որ լայնութեան աստիճանն իմացուի, և յետոյ բեեռը մեր գտած լայնութեան աստիճանի չափելովը՝ հաստատուն հորիզոնից վեր պէտք է բարձրացնել:

1. Կայնութեան մէկ աստիճանը հաւասար է 15 մղոնի կամ
105 վերստի: Մի քաղաքի հասարակածից ունեցած հեռա-
ւորութիւնը գտնելու համար պէտք է այն քաղաքի լայնու-
թեան աստիճանները բազմապատկել 15-ով. արտադրեալը
ցոյց կըտալ թէ մեր ուզած քաղաքը հասարակածից քանի
մղոն հեռու է, իսկ եթէ բազմապատկենք 105-ով՝ քանի
վերստ հեռու լինելը կիմանանք:

Օբինակի համար՝ Թիֆլիսի լայնութեան աստիճանն է $41^{\circ}-43'-1''$, որ կանի 622 մղոն 5 վերստ և 139 սաժէն, իսկ եջմիածինը հեռու է Հասարակածից $40^{\circ}-9'-6''$, որ կանի 602 մղոն 1 վերստ և 462 սաժէն։ Այսպէս կարող ենք գտնել ամեն մի քաղաքի հեռաւորութիւնը։

Երկայնութեան աստիճաններով կիմանանք, թէ մի քաղաք ո՞րքան հեռու է մի ուրիշ քաղաքից դէպի արևելք կամ դէպի արևմուտք:

Զորօրինակ եթէ ուղենանք իմանալ Թիֆլիսի և Փարիզի
իրարից ունեցած ուղիղ հեռաւորաւթիւնը, պէտք է տեսնել թէ
այդ երկու կետերի ուղղութեամբը Հասարակածի վերայ ի՞նչ աս-
տիճան է դրուած։ Կը չաշունենք այն աստիճանները և կը գտնենք՝
որ նոքա իրարից 42 աստիճանով չեռու են։ (Հաշուել թէ քանի
մղոն կամ վերսո՞ւ ուղիղ գծով, Թիֆլիսը կամ Էջմիածինը չեռու է
Փարիզից կամ Եջմիածինը Թիֆլիսից և այլն։)

۴۶.

Երկալնութեան աստիճանները մղոն շինելու համար պէտք է բարձրութեան քառորդը (որ բաժանած է 90° Հասարակածի աստիճանների չափովը) մեր ուզած լայնութեան աստիճանի վերայ հաստատել՝ Հասարակածին գուգահեռական, յետոյ դիտելու է թէ մեր ուզած երկու կէտերի երկալնութեան աստիճանները բարձրութեան քառորդի մը աստիճանների վերայ են ընկնում: Այս թուերը եթէ 15-ով բազմապատկենք, արտադրեալը երկալնութեան աստիճանների մղոնի որքանութիւնը ցոյց կըտայ:

(Յիշել երկրիս գնդաձևութիւնը և թէ հասարակածից որքան
բևեռները գնանք, այնքան էլ երկայնութեան աստիճանները փոք-
րանում են, այնպէս որ բևեռները դառնում են մի մի կտո: Կրկնել զու-
գաչեռականների և երկայնութեան աստիճանների աղիւսակը:)

Թէ որ երկու քաղաքի կամ որևէիցէ կէտերի երկալյնութիւնն ու լայնութիւնն իրարից տարբեր են և կամենում ենք նոցա հեռաւառութիւնը գտնել, պէտք է նոցա հեռաւառութեան չափը կարկինով վերառանենք ու չասարակածի վերայ դնելով իմանանք թէ քանի՞ աստիճան է կարկինի բացուածքը, այն աստիճանները բազմապատկելով 15-ով, կըստանանք այնքան մղոն, իսկ 105-ով՝ վերստ։ Ուրեմն մեր ուզած կէտերն այնքան մղոն կամ վերստ իրարից հեռու կըլինին ուշեւ գծով։

Ճ. Դ.

ԺԱՄԱՆԱԿԻ ՏԱՐԵԲՈՒԹԻՒՆԸ.

Երկրիս գնդաձեռւթեան երկրորդ ապացոյցը լիշելով՝ ենթադրում ենք և ժամանակի տարբերութիւնը: Եւ ճշմարիտ, եթէ երկիրս գնդաձեւ է և ամեն օր 24 ժամուայ մէջ արեւնորան ալնպէս աստիճանաբար է լուսաւորում, որ նորա իւրաքանչիւր կէտն ունենում է իւր կէս օրը, սորանից հետևում է, որ 12 ժամուայ մէջ արեւը պտըտում է երկրիս միայն կէսը, այսինքն $360^{\circ} : 2 = 180^{\circ}$, իսկ 6 ժամուայ մէջ՝ նորա մի քառորդը, կամ 90° և 1 ժամուամ—նորա միայն $\frac{1}{2}$, մասը, կամ $360^{\circ} : 24 = 15$: Եթէ մի ժամուամ կամ 60 րոպէում ($60'$) արեւը անցմում է երկրիս մակերևոյթի վերայ 15° , ուրեմն 1° տարածութիւնը նա պիտի կատարէ $60 : 15 = 4$ (բովէում): Սորանից հետևում է. ա. եթէ երկու քաղաքների արևի ծագելու տարբերութիւնը 1 ժամ է, կընշանակէ որ նոցա միմեանցից ունեցած հեռաւորութիւնը (արեւելքից գէպի արևմուտք) 15° է, կամ լ. եթէ երկու քաղաքը միմեանցից 10°-ով են հեռու (արեւելքից գէպի արևմուտք), այն ժամանակ այն քաղաքների ժամացոյցների տարբերութիւնը միմեանցից պէտք է 40 րոպէ լինի: Օրինակի համար վերցնենք չորս քաղաքներ՝ Փէրմ, Նիժնի-Նովգորոդ, Պետերբուրգ և Թիֆլիզ. եթէ սոցա մէջ ժամանակի տարբերութիւնն այսպէս լինի, Փէրմի և Նիժնի-Նովգորոդի մէջ 49 (բովէ), Նիժնի-Նովգորոդի և Պետերբուրգի 55', իսկ Պետերբուրգի և Թիֆլիսի մէջ ժամանակի տարբերութիւնը 59' (որ մօտ մի ժամ է): Այս հաշիւը ցոյց է տալիս, ո՞ր Նիժնի-Նովգորոդի Փէրմից արևմուտքը է 12¹, (49:4), Պե-

տերբուրգը Նիժնի-Նովգորոդից 13² (55:4), իսկ Թիֆլիսի՝ 14^{1/2}, (59:4) արևմուտքը է ընկնում: Այսպէս՝ ժամանակի տարբերութիւնը հեշտ միջոց է լինում մեզ համար, որոշել ճշտութեամբ երկիս մակերևոյթի վերայ արևելքից արևմուտքը կամ արևմուտքից արևելք եղած կէտերի ունեցած իսկական հեռաւորութիւնը միմեանցից: Ուրեմն ժամանակի միջոցով կարող ենք երկու միջօրեականների ունեցած հեռաւորութիւնը որոշել: Այստեղ խնդիրը միայն նորանումն է, որ պէտք է ունենալ ամենամիշտ ժամացոյց. ապա թէ ոչ, եթէ մի ժամացոյց օրինակի համար տարուայ մէջ միայն 20 լուպէով սխալուի, առաջ գնայ կամ յետ մնայ, այն ժամանակ նորանով մի տեղի երկայնութիւնը 5° -ով կըսխալուենք, որի տարածութիւնը մօտ 500 վերստ է անում: Այս սխալից ազատուելու համար, շատ տարի փորձեր ու նեղութիւններ կրելուց յետոյ, Հարիսսօն Անգղիացին այս գարիս սկզբումը հնարեց մի ամենամիշտ ժամացոյց, որ կոչվում է Քրօն: Այս գործիքով (ժամացոյցով) ճիշտ և պարզ որոշվում են մի տեղի երկայնութեան աստիճանը: (Միշտ քրօնօմեթրի լեզուակները կէսօրուալ (XII) գնելով, այսինքն մեր ընդունած գլխաւոր միջօրեականի կէսօրը հետներս ունենալով):

Կատարել սորա մասին քանի մի փորձեր գլօբուսի կամ քարտէզի վերայ ու որոշել քանի մի տեղերի ժամանակի տարբերութիւնը և հեռաւորութիւնը գէպի արևելք կամ արևմուտք և որոշել նոցա միջօրեականները:

Ճ.:

Մի տեղի շբջաբնակները գտնելու համար պէտք է նոյն տեղը պղնձեալ միջօրեականի տակը բերել ու գլօբուսը

պտըտել մինչև 180° . որ տեղը մեր ուզած քաղաքի կամ տեղի լայնութեան աստիճանի տակիցն անցնի, այն կը լինի մեր ուզած տեղի շրջաբնակը, ինչպէս՝ էջմիածինն ու նորեօրքը իրարու շրջաբնակ են:

ԺԶ.

Մի տեղի հակաբնակները գտնելու համար, պէտք է այն տեղի լայնութիւնը վեր առնել և գլոբուսը հաստատ բռնած՝ նոյնքան աստիճան էլ համարել հասարակածի միւս կողմը: Օրինակ՝ Պօրտօ-Ռիքօ քաղաքը հակաբնակ է Չուքիզայքալին (Հար. Ա. մերիկայում):

Հակաբնակների փոխադարձ շրջաբնակները միմեանց հակոտնեալ են լինում:

ԺԷ:

Երբ ուզենանք իմանալ թէ որևիցէ օր արևը Զօդի-ակոսի (12 համաստեղութեան՝ Խոյ, Յուլ, Երկաւոր, Խեցե-տին, Առիւծ, Կոյս, Կշիռ, Կարիճ, Աղեղնաւոր, Այծեղջիւր, Զըհոս և Զուկն) որ կենդանակերպի և որ աստիճանի դէմը որ ընկնի, այն կենդանակերպի նոյն աստիճանը փնտուելու ենք Ծիր խաւարմանի վերայ: Ծիր խաւարմանի վերայ գըտնուած աստիճանը մեր ուզած օրուայ արևի գտնուած տեղն է:

Զորօրինակ, Օգոստոսի 18-ը Առիւծ համաստեղութեան $25^{\circ}-20'$ -ին է համապատասխանում, ուրեմն և այն է Օգոստոսի 18-ի արևի գտնուած տեղը:

Եթէ որ ուզենանք իմանալ, թէ արևը մեր ուզած օրը որ-ևիցէ տեղ կամ թէ մեր քաղաքումը Երբ է ծագում, ա-ռաջ մեր ուզած տեղի կամ քաղաքի լայնութիւնը պէտք է գտնենք ու այն կէտին լարմար բւեռը բարձրացնենք. լետոյ պէտք է գտնենք թէ այն օրը արևը Ծիր խաւարման որ աստիճանի վերայ է, այն գտած աստիճանը միջօրէական շրջանակի տակը բերենք ու ժամական շրջանակի լեզուակը կէսօրուայ (XII) վերայ դնելուց լեռոյ, գլոբուսը պտըտե-լու ենք դէպի արևելք, մինչև որ Ծիր խաւարմանի վերայ գտնուած աստիճանը հորիզոնին հասնի, այն միջոցին ժա-մական շրջանակի ժամացուցակը իմացնում է, թէ արևը մեր ուզած օրը այն տեղի համար ժամի քանիսին է ծագում:

Զորօրինակ. Յունվարի 11-ին Թիֆլիսում արևը ծագում է և 7 ժամ 22 վայրկեանին. Մարտի 11-ին-5 ժամ 59 վայրկեանին, Յունիսի 11-ին-4 ժամ 20 վայրկեանին, Հոկտեմբերի 21-ին-6 ժամ 35 վայրկեանին և այլն. Պէտք է առաջարկել աշակերտներին, որ իւրաքանչեւը գտնէ միքանի քաղաքի արևի ծագելու ժամը տարուայ չորս եղանակներից մի-մի օր վեր առած:

ԺԹ.

Իսկ արևի մալը մտնելու ժամը գտնելու համար պէտք է վերևի գործողութիւնն անենք, միայն գունդը պէտք է դէպի արևեմուտք պտըտենք, որ Ծիր խաւարմանի վերայ գտնուած աստիճանը արևեմտեան հորիզոնի կողմն իջնի, այն միջոցին ժամական շրջանակի լեզուակը ցոյց կըտայ, թէ մեր ու-զած տեղը արևը որ ժամին է մալը մտնում:

Զորօրինակ. Թիֆլիսում արևը մայր է մտնում Յունվարի 11-ին—5 ժամին շաբաթ վայրկեանին. Մարտի 11-ին—6 ժամին 15 վայրկեանին. Յունիսի 1-ին—7 ժամ 34 վայրկեանին. Դեկտեմբերի 10-ին—4 $\frac{1}{2}$ ժամ և այլն։ Այսպէս և գտնել զանազան քաղաքների արևի մայր մտնելու ժամը տարուայ զանազան ժամանակներում։

Եթէ որ մեր բնակած քաղաքումը կէսօր է լինում, մի ուրիշ քաղաքում, օրինակ Փարիզում, նոր-Եօրքում և այլն որ ժամը լինելը որ ուզենանք իմանալ, պէտք է մեր բնակած քաղաքը տանենք միջօրէական շրջանակի տակ, ժամացուցի լեզուակն կէսօրուալ (XII) դնելով, գլուխուսը պտըտենք գէպի արևելք, մինչև որ մեր ուզած քաղաքը՝ կամ Փարիզը, կամ Նոր-Եօրքը նոյն միջօրէականի տակը գալ, այն ժամանակ ժամական լեզուակը սլարդ ցուց կըտալ, թէ Փարիզում կամ Նոր-Եօրքում որ ժամն է լինելու։ Իսկ մեր բնակած քաղաքի արևելեան կողմը գտնուող տեղերի ժամը գըտնելու համար վերի գործողութիւնն ենք անելու, միայն թէ գունդը հակառակ կողմը դարձնելով, այն է՝ գէպի արևմուտք, և կըգտնենք մեր ուզած տեղերի ժամը։ (Միշտ երկիս մի կէսի համար ցերեկ է, իսկ միւս կէսի համար գիշեր։)

Դասեւ երբ Թիֆլիզումը առաւտօտեան ժամը 10 ։ Ի Պետրուրգում, Բերլինում, Վենետիկում Փարիզում, նոր-Եօրքում և այլն ժամը քանի՞սն է։ Իսկ Թէհրանում, Կալկաթայում, Պէրինում, Սիդնէյում և այլն ժամի քանի՞սն է։

իԱ.

Եթէ ուզենանք իմանալ, թէ մեր բնակած տեղում արևն ամեն օր հորիզոնի որ կէտիցն է ծագում, պիտի բեռը այն տեղի լայնութեան աստիճանի չափովը բարձրացնենք ու գտնենք, թէ արևը նոյն օրը ծիր խաւարմանի որ աստիճանի վերալ է (յօդուած ձէ)։ Գլոբուսը պտըտելով այն աստիճանը տանելու ենք մինչև արևելեան և արևմտեան հորիզոնների վերալ և որ կէտերով որ հորիզոններին կպչի, այն կէտերն են նոյն օրուայ մէջ արևի ծագելու և մալր մտնելու տեղերը։

իԲ.

Եթէ ուզենանք որևեցէ քաղաքի ամենաերկայն օրը գտնել, պէտք է բեռը նոյն տեղի լայնութեան համեմատ բարձրացնել, և եթէ մեր ուզած տեղը հիւսիսային կիսագնդի վերալ է, Խեցգետնի առաջին աստիճանը հաստատուն միջօրէականի տակը բերել, ժամացուցի լեզուակը կէս օրուալ (XII) վերալ հաստատելուց լետոյ՝ գունդը պտըտել, մինչև որ Խեցգետնի առաջին աստիճանը արևելեան ու արևմտեան հորիզոններին հասնի, այն ժամանակ ժամացուցի շրջանակը ցուց կըտալ նոյն օրուայ քանի ժամ երկար լինելը։ Նոյն գործողութիւնը պէտք է անել, թէ որ մեր ուզած տեղը բերեսքաւին կիսագնդի վերալ լինի, միայն այնժամանակ Ալծեղգունդն այնքատիճանով պէտք է կատարել գործողութիւնը։ Հորիզոնից 18° ցած հշարկալ ժամերը նոյն տեղի ամենակարճ օր ցուց տալ, այնչափ ժամ է

իդ.

Իսկ ելթէ մեր բնակած, կամ որևիցէ տեղի ամենա-
կարծ օրն ուզենանք իմանալ, այն տեղը թէ որ հիւսիսալին
կիսագնդի վերայ է, Ալծեղջեր առաջին աստիճանը միջօրէ-
ականի տակը պիտի բերենք ու ժամացոյցի լեզուակը կէս
օրուայ վերայ հաստատելուց յետոյ, Ալծեղջեր առաջին աս-
տիճանն արևելան հորիզոնից մինչև արևմտեան հորիզոնն
ենք պտղաելու: Ժամացոյցը, այս գործողութիւնը վերջա-
ցնելիս, քանի ժամ որ ցոյց տայ, այնքան ժամ է լինում
մեր ուզած քաղաքի ամենակարծ օրը, իսկ մնացեալ ժամերը
ամենաերկայն գիշերն է լինում: Հարաւային կիսագնդի վե-
րայ գտնուած քաղաքի կամ որևիցէ տեղի ամենաերկայն
գիշերն գտնելու համար վերի գործողութիւնն ենք անելու:
Խցղետնի առաջին աստիճանով:

իԴ:

Թէ որ մեր բնակած տեղի ամիսը, օրը և ժամը գիտենք
և ուզում ենք իմանալ թէ նոյն միջոցին արևը ո՞ր կէտերի
միջօրէականի վերայ է, պէտք է բևեռը նոյն տեղի լայնու-
թեան յարմար ուղղելուց յետոյ՝ միջօրէականի տակը բերենք,
և ժամացոյցի լեզուակը մեր ուզած ժամի վերայ գնելով,
գունդը պտղատելու ենք մինչև որ լեզուակը կէսօրուայ (XII)
վերայ գալ: Ո՞ր քաղաքներն ու կէտերն միջօրէականի տաեն
ընկնեն, նոցա համար նոյն միջոցին կէսօր է:

իԵ:

Թէ որ ուզենանք Ալրեցեալ գօտու տակ գտնուած տե-
ղերից մէկի այն օրը գտնել, երբ արևը այնտեղ ուղղահա-
յեաց է նայում, պէտք է այն կէտը մետաղեալ միջօրէականի
տակը բերենք և նորա վերայ լայնութեան աստիճանը նշա-
նակենք, յետոյ գունդը պտղատենք ու դիտենք, թէ նոյն լայ-
նութեան աստիճանի գլխից անցնող Ծիր խաւարման երկու
կէտերն ո՞րոնք են: Վերջը՝ նայելու ենք՝ թէ Ծիր խաւար-
մանի նոյն աստիճանը հորիզոնի վերայ ո՞ր ամսուան և ո՞ր
օրուան է համապատասխանում: գտնուած օրն է այն օրը,
երբ արևը այն տեղին ուղղահայեաց է նայում:

Զորօրինակ. Մադրաս քաղաքի հիւսիսային լայնութեանն է
13°—18° այս աստիճանի վրայով Առեւծ համաստեղութեան 25
աստիճանն է անցնում: 25 աստիճանը հորիզոնի վերայ որ փնտունք,
կըտեսնենք որ Օգոստոսի 18-ին է համապատասխանում: ուրեմն
այս օրն է որ արևը Մադրաս քաղաքին ուղղահայեաց է լինում:

իԶ:

Թէ որ ուզենանք իմանալ մեր բնակած քաղաքի կամ
որևիցէ տեղի արշալոյսը և վերջալոյսը քանի ժամ է դիմա-
նում կամ տեսում, պէտք է գունդը նոյն տեղի լայնութեա-
նը յարմար ուղղելուց յետոյ՝ Ծիր խաւարմանի վերայ արևելի
տեղը գտնենք (յօդուած ժէ) ու այն կէտը հորիզոնի վերայ
բերենք: Ժամացոյն ուղղելուց (XII վերայ գնելուց) յետոյ՝
գունդն այնքան ենք պտղատելու, որ արևի տեղը արևելեան
հորիզոնից 18° ցած իջնի, ժամական լեզուակը քանի ժամ
որ ցոյց տայ, այնչափ ժամ է տեսում արշալոյսը: Վերջալոյսի

տեղութիւնը գտնելու համար նոյն գործողութիւնն ենք
անելու՝ միայն արևի տեղը արևմտեան հորիզոնից ցած ենք
իջեցնելու:

Առ համար խորացնելով զնուրան ու շաբաթական անապահ ամպակ դիմումը մի վեճի ուժը
ուսումնական առաջարկը պահանջում է շաբաթական շուրջ
առաջ զնուրան բանական բառի այս և պահելով պատ
իսկ եթէ ուղենանք իմանալ, թէ որ բեկութիւնը արշա-
լուսը ժամի քանիսին է սկսում, պէտք է Ծիրախաւարմանի
վերայ մեր ուղած օրուայ արևի տեղը գտնել (յօդուած ժէ).
մեր բնակած տեղի լայնութեան յարմար գունդը ուղղել, ժա-
մական լեզուակը կէս օրուայ վերայ հաստատելով՝ գունդը
պտըտել, մինչեւ որ Ծիր խաւարմանի գտնուած աստիճանը
արևելեան հորիզոնից 18° ցած իջնի, այն ժամանակ ժամա-
ցոյցը կիմացնէ, թէ ժամը քանիսին է սկսում արշալուսը:

Վ Ե Ր Զ:

Հայ առաջ նախակ ու յաւակ պահան ու շու-
րջական առաջ առաջնորդ և պայմանական առաջ առաջ
առաջնորդ առաջ առաջնորդ և պայմանական առաջ առաջ
առաջնորդ պայմանական առաջ առաջնորդ պայմանական
առաջնորդ պայմանական առաջնորդ (առաջնորդ պայմանական
առաջնորդ պայմանական 12°) պայմանական առաջնորդ
առաջնորդ պայմանական առաջնորդ պայմանական առաջնորդ
առաջնորդ պայմանական առաջնորդ պայմանական առաջնորդ
առաջնորդ պայմանական առաջնորդ պայմանական առաջնորդ

8 Ա Ն Կ հիմա զգչ. և զգանալ . Տ
վրա կը այս մեջության զգանալ . Տ
դժմուն . Ա

ՄԱՍՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ: զա ուսիւն է լ
ցայ եղանակը պիտի պահպան պահան երես.

- | | | |
|----|---|----|
| 1. | Տիեզերք | 5 |
| 2. | Հորիզոն և նրա կողմերը. | 5 |
| 3. | Երկրիս ձևը. | 9 |
| 4. | Երկրագնդի վերայ մտաւորապէս քաշուած շըջանակ-ները: Կիսագնդեր: Համատարած աշխարհացոյց: Քարտէզ: Երկայնութիւն և լայնութիւն. | 10 |
| 5. | Երկրի շարժումը . | 19 |
| 6. | Արև և աստղեր | 23 |
| 7. | Լուսին . | 27 |

ՄԱՍՆ ԲՆԱԿԱՆ: առան և ցըմադիք թէ
գծողակիրք է թէ

- | | | |
|-----|--|----|
| 1. | Երկրիս կեղեց և միջուկը | 31 |
| 2. | Երկրի կեղեցի մէջ եղած փոփոխութիւնները | 32 |
| 3. | Հրաբուխի բորբոքուելու համառօտ նկարագրութիւնը | 34 |
| | Երկրի մակերևութիւնը բաժանումը. | |
| 4. | Ցամաքների բաժանումը. | 36 |
| 5. | Հինգ աշխարհների նշանաւոր կղզիները | 41 |
| 6. | Ցամաքի ափերի գծագրութիւնը | 43 |
| 7. | Հինգ աշխարհների նշանաւոր թերակղզիները և
պարանոցները | 44 |
| 8. | Հինգ աշխարհների նշանաւոր հրուանդանները | 45 |
| 9. | Ջրալին մասերի բաժանմունքները | 45 |
| 10. | Ջրի ափերի գծագրութիւնը | 47 |
| 11. | Հինգ աշխարհների նշանաւոր ծովերը և նեղուց-
ները | 47 |

12. Յամաքի և ջրի սահմանները	49
13. Յամաքի մակերևոյթի կազմութիւնը	52
14. Լեռներ	56
15. Հովիտ, ձոր և ալի	59
16. Յամաքի մակերևոյթի նշանակութիւնը	62
17. Ծովի յատակի կազմութիւնը և նրա ջրի յատկութիւնները	64
18. Օդ	67
19. Ծովի ջրի շարժումները	69
20. Ալիք	70
21. Մակրնթացութիւն և տեղատութիւն	70
22. Ծովալին հոսանքները	72
23. Հողմեր	75
24. Հողմերի նշանակութիւնը	80
25. Յամաքի ջրերը (օդից թափուող ջրերը և օդի մէջ երևացող երեսովները)	82
26. Ջիւները և սառուցները	89
27. Ազբիւրներ	92
28. Գետ	96
29. Լիճ	99
30. Գետերի և լճերի նշանակութիւնը	101
31. Հինգ աշխարհների ամենագլխաւոր գետերը և լճերը	103
32. Կլիմա, բուսականութիւն և կենդանիք	109
33. Մարդ	113
34. Կրօնք	118
35. Կառավարութիւն	121
36. Հանդիսաբնակ, շրջաբնակ և հակոտնեալ	126
37. Երկրագունդ (գլոբուս)	127
38. Ժամանակի տարբերակութիւնը	132



7249

(8)

2013



NL0496806

